ԱԼԻՄԵԼԵՔ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ա II 85573

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1997

929:355.484 Բաղրամյան

ԳՏՀ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (22) 722.78
Հ 422

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ
Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր
Մ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆԸ
և «Մարշալ Բաղրամյան» հիմնադրամի փոխնախագահ,
պահեստի գնդապետ Լ. Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Կ. Ա.
Հ 422 Մարշալ Բաղրամյան (Պատ. խմբ.՝ Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ)
ՀՀ ԳԱԱ պատմ. ին-տ.,—Եր., «Գիտություն» հրատ.,
1997, 136 էջ:

Գրքում արխիվային նոր փաստերի, համապատասխան դրականության և մամուլի նյութերի հիման վրա համառոտակի լուսաբանվել է Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հովհաննես Խաչատուրի (Իվան Քրիստոֆորի) Բաղրամյանի կենսագրությունը, բացահայտվել նրա զինվորական, դիտական և հասարակական-քաղաքական գործունեության նոր էջեր:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար և նվիրվում է ականավոր զորահրամանատարի ծննդյան 100-ամյակին:

Հ $\frac{0503020913}{703(02)-97}$ Ձեռագ. ԳՄԴ 63.3 (22) 722.78

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1997

Լ.Օ.Ն.ՍՍՌ գիտությունների
ՅՈՒՆԵՍԿՈՅԻ ԳՈՒՆԴԱՆ
Ա.Ա. ԲԱ.ԱՅԻ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին խորհրդային բանակը ֆաշիզմի դեմ տարավ պատմական մեծ նշանակություն ունեցող հաղթանակ՝ աշխարհը փրկելով «դարշնագույն ժանտախտից»՝ ֆաշիստական ստրկացումից։ Ֆիզիկական բնաջնջումից փրկվեցին սլավոնական ժողովուրդները, անգլոսաքսերը և շատ ուրիշներ, հաղթեց ժողովրդավարական առաջադեմ գաղափարները պաշտպանող հակաֆաշիստական կոալիցիան։ Այդ հաղթանակը հատկապես կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար, քանի որ ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիան պատերազմի սկզբին 26 սպառազեն դիվիզիա[1] էր կանգնեցրել Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ և հարմար պահի էր սպասում այնտեղ ներխուժելու և մի նոր եղեռն կազմակերպելու համար։ Պատերազմի առաջին օրերին Թուրքիայում լույս էին տեսնում հոդվածներ, աշխատություններ, կազմվում քարտեզներ, որտեղ խսպառ վերացված էր նաև Խորհրդային Հայաստանը և Հայաստան աշխարհն ընդհանրապես։

«Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին, — պատերազմի առաջին օրերին նշել է այն տարիներին ԽՍՀՄ գլխավոր թերթ՝ «Правда»-ն՝ «Հայ ժողովուրդը Խորհրդային Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է» առաջնորդող հոդվածում,— նա գիտե, թե ինչ

[1] Տե՛ս Ս. Մ. Շտեմենկո, Գլխավոր շտաբը պատերազմի տարիներին, գիրք 1-ին, Ե., 1970, էջ 69։

բան է կոտորածը, ավերը, սովը, բռնությունները։ Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որը կազմակերպել էր արյունռուշտ Հիտլերի նախորդ Վիլհելմ կայսրը՝ առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին[2]։ Այդ նպատակով էլ, երբ արյունալի հրդեհի պես բռնկվեց պատերազմը, որն սկսել էր մարդակեր Հիտլերը խորհրդային Միության դեմ, ամբողջ հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու հայրենիքը»[3]։ Հայրենական մեծ պատերազմին մասնակցեց ավելի քան 500 հազար հայ, որոնցից 200 հազարը զոհվել են այդ մարտերում[4]։ Պատերազմին հայ ժողովրդի մասնակցության ակտիվությունը դրսևորվեց ոչ միայն բանակին ավելի քան կես միլիոն մարդ զինվորագրելով, այլև մարտերում տարբեր զորատեսակների կազմում ցուցաբերած հերոսությամբ։ ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության կադրերի գլխավոր վարչության պարգևատրման բաժնի 1947 թ. նոյեմբերի 1-ի տվյալներով Հայրենական մեծ պատերազմի տարիներին շքանշաններով ու մեդալներով են պարգևատրվել հայեր՝ 66802, վրացիներ՝ 49106, ադրբեջանցիներ՝ 36180 հոգի և այլն[5]։ Պատերազմի տարիներին խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 104 հայի (երկու հոգու շնորհվել է կրկնակի հերոսի կոչում), 91 վրացու, 43 ադրբեջանցու[6] և այլն, 27 հայեր դարձել են Փառքի շքանշանի լրիվ ասպետներ[7]։ Պատերազմի տարիներին 13 հայորդու շնորհ-

---

[2] Խոսքը վերաբերում է 1915 թ. Թուրքիայի կողմից Արևմտյան Հայաստանում իրագործված կոտորածներին, որի հետևանքով բնաջնջվեց Արևմտահայաստանի բնիկ ժողովուրդը՝ ավելի քան 1,5 միլիոն հայ։

[3] «Правда», 1941, 25 августа.

[4] Տե՛ս «Հուշամատյան», գիրք 1-ին, Ե., 1995, էջ 6—7։

[5] «Красная звезда», 1967, 28 марта.

[6] Герои Советского Союза, М., 1984, с. 245 (ադրբեջանցի հերոսների մեջ զգալի թիվ են կազմում թալիշները, թաթերը, քրդերը, լեզգիները և այլն)։

[7] Книга о героях, Ереван, 1985, с. 229—285.

վել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում. ավիակոնստրուկտոր, գեներալ-գնդապետ Արտեմ Իվանի Միկոյանին այդ բարձր կոչումը շնորհվել է կրկնակի։ Հետագայում ռազմագիտական աշքի ընկնող ծառայությունների համար Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսներ են դարձել ակադեմիկոս Վիկտոր Համազասպի Համբարձումյանը և հրթիռամիջուկային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր Սամվել Գրիգորի Քոչարյանցը։ 1945 թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով պատերազմին մասնակցել են 60 հայ գեներալ, մեկ ավիացիայի մարշալ և մեկ նավատորմի ծովակալ։ Հետպատերազմյան տարիներին պատերազմի մասնակից հայ գեներալների թիվը անցել է 130-ից, իսկ ծովակալներինը՝ 10-ից[8]: Նրանցից Հովհաննես (Իվան) Ստեփանի Իսակովին 1955 թ. շնորհվել է Խորհրդային Միության ծովակալի, իսկ Հովհաննես Խաչատուրի (Իվան Քրիստափորի) Բագրամյանին՝ Խորհրդային Միության մարշալի կոչումներ։ 1975 թ. Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում է շնորհվել Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանին։ Ավելի վաղ՝ 1944 թ. ավիացիայի մարշալի կոչում էր շնորհվել Արմենակ Արտեմի Խանփերյանցին (Սերգեյ Ալեքսանդրովիչ Խուդյակով)։ Պատերազմի տարիներին Հայաստանում ձևավորվեցին կամ համալրվեցին 6 հայկական և 7 համազորային դիվիզիաներ, որոնք իրենց արժանի ավանդը ներդրեցին ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակում։ Պատերազմի տարիներին հայ ժողովուրդը տվեց տաղանդավոր զորավարների մի ամբողջ սերունդ, որն իր արժանի տեղը գրավեց

---

[8] Հաշվումները կատարված են մեր կողմից։ Հայ գեներալների թիվն ավելի մեծ կլիներ, եթե 1937—1940 թթ. տոտալիտար բռնահնշումներին զոհ չգնային կարմիր բանակի ճանաչված զորապետներ, կոմկորներ Հայկ Դմիտրի Բժշկյանը (Գայը), Գրիգոր Դավթի Խաչանյանը, Գառպար Կարապետի Ոսկանյանը, Անդրեյ Պավլի Մելիք-Շահնազարյանը, առաջին կարգի բանակային կոմիսար Հայկ Այնրոանի Հովսեփյանը, գնդհրամ Հակոբ Թադևոսի Աթոյանը և ուրիշներ։

խորհրդային բանակի զորավարների համաստեղության մեջ։ Նրանցից մեկը եղել է ռազմաճակատի, 3-ը բանակի, 5-ը՝ կորպուսի, 22-ը՝ դիվիզիայի հրամանատար։ Հայ գեներալներից 3-ը եղել են ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ, մեկը՝ ռազմաճակատի հրետանու հրամանատար, 3-ը՝ ռազմաճակատի զանազան վարչությունների պետեր։ Ավելի քան 100 հայորդիներ եղել են բրիգադների և գնդերի հրամանատարներ[9]։

Հայ ժողովրդի տաղանդավոր զորավարների ականավոր ներկայացուցիչն է խորհրդային Միության մարշալ, խորհրդային Միության կրկնակի հերոս Հովհաննես Խաչատուրի (Իվան Քրիստոփորի) Բաղրամյանը, որի ծննդյան 100-ամյակը լրանում է այս տարի՝ դեկտեմբերի 2-ին։ Նրա անունը ոսկե տառերով է գրված Հայրենական մեծ պատերազմի տարեգրության մեջ և արժանի տեղ է գրավել խորհրդային այնպիսի ականավոր զորապետների շարքում, ինչպիսիք են՝ խորհրդային Միության մարշալներ, քառակի հերոս Գեորգի Կոստանտինովիչ Ժուկովը, կրկնակի հերոսներ Ալեքսանդր Միխայլովիչ Վասիլևսկին, Կոնստանտին Կոնստանտինովիչ Ռոկոսովսկին, Իվան Ստեպանովիչ Կոնևը, Ռոդիոն Յակովլևիչ Մալինովսկին, խորհրդային Միության հերոսներ Անդրեյ Իվանովիչ Երյոմենկոն, Լեոնիդ Ալեքսանդրովիչ Գովորովը, Ֆեոդոր Իվանովիչ Տոլբուխինը, որոնք պատերազմի եզրափակիչ շրջանում ռազմաճակատների հրամանատարներ էին և պատմության մեջ մնացել են «հաղթանակի մարշալներ» անունով։

Խոսելով մարշալ Բաղրամյանի զորավարական կենսագրության մասին, հարկ ենք համարում նշել, որ նա անցել է կյանքի դժվարին ու լարված ուղի, որը նրան շարքային զինվորից հասցրել է մարշալի կոչման։ Այդ ուղին հարուստ էր

---

[9] Տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1995, թիվ 1, էջ 47 (Պ. Ա. Հարությունյան, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին)։

երկրի հասարակական, սոցիալական, քաղաքական կյանքում տեղի ունեցած վիթխարի վերափոխումներով, որոնք իրենց ճշմարիտ արտացոլումն են գտել մեծահամբավ զորավարի բազմաթիվ հուշագրություններում, աշխատություններում և հոդվածներում։ Մարշալի ռազմագիտական հարուստ ժառանգությունը, ռազմական արվեստի և պատմության վերաբերյալ նրա կարդացած դասախոսություններն ու հրատարակած գործերը, կյանքի հարուստ փորձը և մարդկային գործունեությունը արժանի են ոչ միայն բազմակողմանի խորը ուսումնասիրության, այլև ընդօրինակման Հայկական բանակի զինվորականության կողմից։ Այն վիթխարի նշանակություն կունենա հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում։

Հովհաննես Բաղրամյանը ծնվել է 1897 թ. դեկտեմբերի 2-ին Ելիզավետպոլի (այժմ՝ Գյանջա-Գանձակ) երկաթուղային կայարանի բանվորական ավանում։ Նրա հորական պապը՝ Կարապետ Բայրամյանը XIX դարի կեսերին մի խումբ համագյուղացիների հետ Հայաստանի Իջևան—Շամշադինի գավառի Կոթի գյուղից մշտական բնակության համար տեղափոխվել էր Ելիզավետպոլի նահանգի Շամխորի շրջանի Զարդախլու հայկական գյուղը։ Այստեղ նա, ինչպես վկայում է ապագա մարշալը, Բայրամյան ազգանունը դարձրել է Բաղրամյան[10]։ Զարդախլու գյուղում էին ծնվել ապագա մարշալի հայրը՝ խաչատուր Բաղրամյանը և մայրը՝ Մարիամ Արտեմի Մարտիրոսյանը։ Կարիքը ստիպել էր պատանի խաչատուրին երկու տարի աշխատել Գեղարքեի պղնձահանքերում, ապա հիվանդանալուց հետո վերադառնալ հայրենի գյուղ։ Այնուհետև նա տեղափոխվել է Ելիզավետպոլ, աշխատանքի անցել երկաթուղում, որպես ճանապարհ վերանորոգող բանվոր և բնակություն հաստատել երկաթուղային կայարանի բանավանում։ Խաչատուրն ու Մարիամն ունենում են երեք որդի՝

---

[10] Սովետական Հայաստան, թիվ 11, 1988, էջ 7 (Բ. Սեյրանյան, Մարշալի վերջին իղձը)։

Աբգար, Հովհաննես (Իվան, Վանյա), Ալեքսեյ և մեկ աղջիկ՝ Արուսյակ անուններով[11]։ Ավելի քան կես դար երկաթուղում աշխատելուց հետո խաչատուր Բաղրամյանը մահանում է 1929 թ., իսկ Մարիամը՝ 1942 թ.։ 1907 թ. Հովհաննես Բաղրամյանը ընդունվում է Ելիզավետպոլի երկաթուղային երկդասյա ուսումնարանը։ Չնայած վերջինս կոչվում էր երկդասյա, սակայն ուսումնասիրության ընդհանուր ժամանակը 5 տարի (ուսուցումը տարվում էր ռուսերեն լեզվով) էր։ 1912 թ. Բաղրամյանը գերազանց առաջադիմությամբ ավարտում է ուսումնարանը[12]։ Նույն թվականին գերազանց հանձնելով ընդունելության քննությունները 15-ամյա Վանյան ընդունվում է Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարան, որը, նույնպես գերազանցությամբ, ավարտում է 1915 թ. մայիսի վերջին և որպես տեխնիկ-պրակտիկանտ աշխատանքի նշանակվում Անդրկովկասյան երկաթուղու 9-րդ գծամասում՝ Ելիզավետպոլում։ Հայրը և մայրը չափազանց ուրախ էին իրենց որդու հաջողություններով և մտածում էին Վանյային երկաթուղային ինժեներ դարձնելու մասին։ Սակայն իրադարձությունները դասավորվեցին այլ կերպ։ 1914 թ. օգոստոսի 1-ին սկսվել էր Առաջին համաշխարհային պատերազմը։ Նույն թվականի հոկտեմբերի 29-ին Թուրքիան Գերմանո-Ավստրո-Հունգարական խմբավորման կողմից մտավ պատերազմի մեջ՝ ընդդեմ Անտանտի երկրների (Ռուսաստան, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, 1915 թ.՝ Իտալիա)։ Հաջորդ օրը գերմանական ու թուրքական ռազմանավերը ռմբակոծում են Սև ծովի ռուսական նավատորմի բազաները, իսկ հետևյալը պրոհում է Կովկասի ռուսական սահմանները։ Թուրքիան պատերազմ է սկսում Ռուսաստանի դեմ, որը տևում է մինչև 1918 թ. սեպտեմբերի 30-ը։ Օգտվելով պատերազմի

---

[11] Մարիամը, մինչև խաչատուրի հետ ամուսնանալը, վաղ հասակում ամուսնացել էր մեկ ուրիշի հետ, ունեցել 3 տղա՝ Զահրաման, Արշակ, Տիգրան անուններով ու վաղ էլ այրիացել (տե՛ս Ա. Ն. Մնացականյան, Մարշալ Բաղրամյան, Ե., 1978, էջ 9)։

[12] И. Х. Баграмян. Мои воспоминания. Ереван, 1979, с. 7.

ընձեռած հնարավորությունից, ինչպես նաև կայզերական Գերմանիայի հովանավորությունից, Թուրքիայի կառավարությունը պլանավորված ցեղասպանություն է իրականացնում Արևմտահայաստանի բնիկ ժողովրդի՝ հայերի նկատմամբ։ Ինչպես արդեն նշեցինք, միայն 1915 թ. կոտորածներին զոհ է գնում 1,5 միլիոն անմեղ հայ բնակչություն։ Այդ ահավոր լուրերը հասնում էին Թիֆլիս, Ելիզավետպոլ, Կովկասի հայաշատ այլ վայրեր և վրեժի ցասում բորբոքում թուրք բարբարոսների հանդեպ։ «Ես այլևս չէի կարող հեռու կանգնել իմ հարազատ ժողովրդի ատելի թշնամու հանդեպ պայքարից,— իր հուշերում հետագայում գրում է Բաղրամյանը,— ես արդեն 18 տարեկան էի և բավականաչափ պարզ հասկանում էի Կովկասյան ռազմաճակատում ստեղծված ռազմական գործողությունների և Թուրքիայում արյունալի իրադարձությունների էությունը... Դրա հետ մեկտեղ լավ էի հասկանում, որ միայն ռուսական զինվորի հետ ուս ուսի իմ ուժը կպատեր մարտընչել թուրքական դահիճների դեմ։ Այդ զգացումներից մղված և, հաղթահարելով ծնողներիս դիմադրությունը, 1915 թ. հոկտեմբերի 9-ին կամավոր ծառայության անցա ռուսական բանակում։ Ինձ ուղարկեցին Ախալցխա քաղաք՝ 116-րդ պահեստային գումարտակ, որտեղ արագացված կարգով պետք է համապատասխան զինվորական պատրաստություն ստանայի ռազմաճակատ մեկնելուց առաջ»[13]։ Այստեղ ապագա մարշալը ծառայում է երեք ամիս, հաղթահարում բազում դժվարություններ, ձգտում ձեռք բերել այն ամենը, ինչ անհրաժեշտ էին լինելու առաջիկա արշավներում և մարտերում։ Ինչպես վկայում է Բաղրամյանը, ինքը շատ բան սովորեց պահեստային գումարտակում, և դրանում մեծ դեր կատարեց այն հանգամանքը, որ ինչպես Ելիզավետպոլի երկդասյան, այնպես էլ Թիֆլիսի երկաթուղային ուսումնարաններում սովորելու տարիներին, կադրային բանակային սպաների ղեկավարությամբ, անցել էր նախնական զինվորական

[13] Ի. Քհ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 25—26։

պատրաստության համառոտ դասընթաց, զբաղվել մարմնամարզությամբ, շարային պատրաստությամբ և ձեռնամարտով։ 1915 թ. դեկտեմբերի վերջերին պահեստային գումարտակից ձևավորվեց երթային գումարտակ, որն ուղարկվեց Կովկասյան ռազմաճակատ՝ համալրելու գեներալ Բարաթովի էքսպեդիցիոն կորպուսի 2-րդ Կովկասյան սահմանապահ գունդը, որը տեղաբաշխված էր Պարսկաստանի Ղազվին քաղաքի մատույցներում։ Բաղրամյանը նշանակվեց վերոհիշյալ գնդի 4-րդ գումարտակի 15-րդ հարյուրյակում, որպես շարքային զինվոր։ 1916 թ. հունվարի կեսերին գումարտակը հրաման ստացավ շարժվել դեպի Համադան։ Համադանի մերձակայքում էլ ապագա մարշալը ստանում է իր առաջին մարտական մկրտությունը։ Այնուհետև, հետապնդելով թուրքական նահանջող զորքերին Քերմանշահի ուղղությամբ, Բաղրամյանի զորամասը հասնում է Բեհիսթուն գյուղը, որի ծայրամասում գտնվող մի հսկայական ժայռի վրա տեսնում է Աքեմենյան Պարսկաստանի Դարեհ 1-ին թագավորի մ. թ. ա. 522—520 թթ. հռչակավոր սեպագիր արձանագրությունը։ 1916 թ. մարտի սկզբներից մինչև ամռան կեսերը, Քերմանշահի, ապա Կասրի-Շիրինի գրավման մարտերում շարքային Բաղրամյանն աչքի է ընկնում խիզախությամբ, գրավում հրամանատարության ուշադրությունը և ուղարկվում Թիֆլիս՝ ենթասպաների դպրոցում սովորելու։ Սակայն Թիֆլիսից նրան ուղարկում են Արմավիր, որտեղ Կովկասյան պահեստային հնձյալ գնդի երթային էսկադրոնում մի քանի ամիս ձիավարություն սովորեց։ Դրա հետ մեկտեղ ուսումնատենչ պատանին հաջողությամբ հանձնեց Արմավիրի հայկական գիմնազիայի չորս դասարանների բոլոր քննությունները։ Դրանից հետո Բաղրամյանը 1917 թ. փետրվարի սկզբներին ընդունվեց Թիֆլիսի ենթասպաների 1-ին դպրոցը, որպես յունկեր։ Այստեղ էլ նա մեծ ոգևորությամբ դիմավորեց փետրվարյան հեղափոխությունը՝ ցարիզմի տապալումը։ Հուլիսի վերջերին ավարտելով դպրոցը՝ Բաղրամյանը նշանակվեց Ելիզավետպոլում տեղավորված պահեստային հետևակային գնդի վաշտե-

ից մեկում, որպես կրտսեր սպա։ Բանակում այդ ժամանակ բուռն կերպով աճում էին հեղափոխական տրամադրությունները, զինվորները պայքարում են պատերազմը շարունակելու դեմ, իրենք են սկսում հրամանատարներ ընտրել առաջադեմ սպաներից։ Զինվորական ժողովը Բաղրամյանին ընտրում է վաշտի հրամանատար։ Սակայն դա այնքան էլ դուր չի գալիս գնդի հրամանատարությանը, որը չէր ուզում ճանաչել այդպիսի ժողովրդավարությունը։ Բաղրամյանի անունը մտցվում է ռազմաճակատ ուղարկվող երթային վաշտի ցուցակի մեջ և ուղարկվում Պարսկաստան՝ Ուրմիա լճի շրջանում թուրքերի հետ մարտնչող Հայկական 3-րդ հրաձգային գունդը համալրելու։ Տեղ հասնելով՝ Բաղրամյանն ընտրվում է գնդի 3-րդ գումարտակի 8-րդ վաշտի կրտսեր սպա՝ դասակի հրամանատար։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Բաղրամյանը դիմավորում է Կովկասյան ռազմաճակատի Խոյ-Ուրմիա հատվածում՝ Հայկական 3-րդ հրաձգային գնդի կազմում։ Զնայած զինվորական զանգվածների համակրանքը խորհրդային իշխանության կողմն էր, սակայն բուրժուազգայնական ուժերին՝ վրացական մենշևիկներին, ադրբեջանական մուսավաթականներին և հայ դաշնակցականներին հաջողվում է Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի աջակցությամբ Անդրկովկասն անջատել Խորհրդային Ռուսաստանից և 1917 թ. նոյեմբերի 28-ին մենշևիկ Ե. Գեգեչկորու գլխավորությամբ ստեղծել Անդրկովկասյան կոմիսարիատ։ Վերջինս 1918 թ. փետրվարին Թիֆլիսում հրավիրեց Անդրկովկասյան սեյմ՝ խորհրդարան, որը ապրիլի 22-ին երկրամասը պաշտոնապես հայտարարեց խորհրդային Ռուսաստանից անկախ դաշնային հանրապետություն՝ Ա. Չխենկելու գլխավորությամբ։ Հեղափոխականորեն տրամադրված և պատերազմից հոգնած ռուս զինվորները, դժգոհ Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու քաղաքականությունից, զանգվածաբար սկսեցին լքել ռազմաճակատը և վերադառնալ տուն։ Քայքայվող ռազմաճակատը վերականգնելու և թուրքական զորքերի առաջխաղացումը փակելու նպատակով սկսեցին կազ-

մավորվել հայկական, վրացական և ադրբեջանական ազգային զորամիավորումներ։ 1917 թ. նոյեմբերին կազմավորվեց Առանձին հայկական կորպուսը, որի հրամանատար նշանակվեց գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկովը[14]։ Կորպուսը իր շարքերում հաշվում էր շուրջ 20 հազար զինվոր ու սպա։

Կորպուսի զորամասերը առաջադրանք էին ստացել մենամենակ պաշտպանել ռազմաճակատի գիծը, որը ձգվում էր Բայբուրդից մինչև պարսկական սահման, այդ թվում՝ Էրզրում և Կարս ամրոցները։ Վրացական կորպուսը գեներալ Վ. Գաբաշվիլու հրամանատարությամբ պետք է պաշտպաներ Բայբուրդ—Բաթում հատվածը։ Ադրբեջանցիները ոչ մի զինվոր չուղարկեցին իրենց արյունակիցների դեմ։ Այդ օրերին Բաղրամյանը նշանակում ստացավ Կարսում կազմավորվող Հայկական 1-ին հատուկ հեծյալ գնդում, որպես 1-ին էսկադրոնի կրտսեր սպա։ 1918 թ. փետրվարի 12-ին թուրքերը, խախտելով 1917 թ. դեկտեմբերի 18-ին Երզնկայում կնքված զինադադարի պայմանագիրը, անցան հարձակման և կարճ ժամանակամիջոցում գրավեցին Բայբուրդ, Երզնկա, Տրապիզոն, Մամախաթուն, մարտի 12-ին՝ Էրզրում քաղաքները։ 1918 թ. մարտի 3-ին Բրեստ—Լիտովսկում Խորհրդային Ռուսաստանի և Գերմանիայի միջև կնքված հաշտության պայմանագիրը[15], որով Թուրքիային էր անցնում Կարսը, Արդահանը, Բաթումը, ավելի ողևորեց թուրք զավթիչներին։ Հայ ժողովրդի համար այդ ծանր օրերին քսանամյա Ենթասպա Բաղրամյանը մարտնչում էր թուրքերի դեմ գեներալ Անդրանիկի հատուկ կամավորական դիվիզիայի շարքերում, որպես հեծյալ դասակի հրամանատար, Քյոփրիքեյի մոտ աչքի ընկնում իր մարտական սխրանքներով։ Բաղրամյանը միշտ հպարտությամբ է հիշել ժողովրդական հերոս Անդրանիկի հետ հանդիպումը և նրա զորամասում ծառայելը[16]։

---

[14] ՀՀ Պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊՊԿԱ), ֆ. 45, ց. 1, գ. 32, թթ. 1—2։

[15] 1918 թ. նոյեմբերի 13-ին Խորհրդային Ռուսաստանը չեղյալ համարեց պայմանագիրը։

[16] Ա. Ն. Մնացականյան, Մարշալ Բաղրամյան, Ե., 1978, էջ 26։

Չնայած հայկական զորքերի հերոսական դիմադրությանը, թուրքերին հաջողվում է շարունակել առաջխաղացումը։ Ապրիլի 5-ին նրանք գրավում են Սարիղամիշը, 7-ին՝ Արդահանը, 13-ին վրացական զորքերը հեռանում են Բաթումից։ Անդրկովկասյան կառավարության նախագահ Ա. Չխենկելու հրամանով ապրիլի 25-ին թուրքերին է հանձնվում նաև Կարսը։ Չբավարարվելով այդքանով՝ թուրքերը շարունակում են հարձակումը և մայիսի 15-ին գրավում Ալեքսանդրապոլը։ Այնուհետև նրանք արշավում են Ղարաքիլիսայի ուղղությամբ։ Թուրքական զորքերի մի այլ զորախումբ, գնդապետ Քյազիմ-բեյի գլխավորությամբ, երկաթուղու երկայնքով շարժվում է Երևանի վրա և մայիսի 20-ին գրավում Սարդարապատի մոտ գտնվող Արաքս կայարանը։ Մայիսի 21-ի առավոտյան թուրքերը շարունակում են հարձակումը՝ նպատակ ունենալով գրավել Սարդարապատը, ապա Երևանը։ Հայ ժողովրդի համար այդ օրհասական պահին Հայկական կորպուսի զորամասերը օգնության հասած աշխարհազորայինների հետ միասին կարողանում են Սարդարապատում ոչ միայն կասեցնել թուրքական հաղթարշավը, այլև ետ շպրտել նրանց։ 1-ին հատուկ հայկական հեծյալ գնդի դասակի հրամանատար, ենթասպա Բաղրամյանը ակտիվորեն մասնակցում է Սարդարապատի ճակատամարտին և իր համեստ լուման ներդնում հայ ժողովրդի ճակատագրական նշանակություն ունեցող այդ հաղթանակում, որի շնորհիվ Արարատյան դաշտավայրի հայ բնակչությունը փրկվեց մի նոր եղեռնից։

Սարդարապատի ճակատամարտին զուգընթաց մայիսի 22—29-ը մարտեր տեղի ունեցան Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի շրջաններում, որտեղ հայ զինվորները մեկ անգամ ևս ապացուցեցին, որ իրենք կարող են լինել աշխարհի լավագույն բանակների զինվորներ։ Մայիսյան այդ հերոսամարտերը բախտորոշ նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար. մայիսի 28-ին վերականգնվեց հայկական պետականությունը։ Հայաստանի Հանրապետությունը ստեղծում է իր բանակը, որի հեծյալ գնդի շարքերում որպես էսկադրոնի հրա-

մանատար ծառայում է Սարդարապատի հերոս Բաղրամյանը։ Հեծյալ գունդը տեղավորված էր Ալեքսանդրապոլում և 1920 թ. մայիսի սկզբին իր հրամանատար, գնդապետ Անդրեյ Պավելի Մելիք-Շահնազարովի գլխավորությամբ անցավ Մայիսյան ապստամբության կողմը։ Ապստամբությունը տարածվեց նաև Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Ղազախ-Շամշադինում և Զանգեզուրում։ Ապստամբությունը ղեկավարում էին կոմունիստները, որոնք ցանկանում էին Հայաստանում շուտափույթ հաստատել խորհրդային կարգեր, քանի որ ապրիլի 28-ին Ադրբեջանն արդեն խորհրդայնացվել էր և, օգտվելով պատեհ առիթից, փորձում էր խորհրդայնացման քողի տակ Հայաստանի Հանրապետությունից պոկել Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և այլ բուն հայկական տարածքներ։ Սակայն դաշնակցական կառավարությունը չկարողացավ ճիշտ գնահատել պատմական պահը (նրանք ավելի շատ հավատում էին արևմտյան մեծ տերություններին) և արյան մեջ խեղդեց ապստամբությունը։ Գլխավորվեցին ապստամբության ղեկավարներ Սարգիս Մուսայելյանը, Բագրատ Ղարիբջանյանը, Ստեփան Ալավերդյանը և շատ ուրիշներ։ Ապստամբության շատ մասնակիցներ, այդ թվում նաև ենթասպա Բաղրամյանը, առանց դատի բանտ նետվեցին։

— Մենք պետք է ավելի խոհեմ լինեինք, ավելի շրջահայաց, պետք է ատ քայլն ըրած ըլլայինք մայիսյան ընդվզումի օրերին, Հայաստանը հանձնած ըլլայինք ձեզ, պոլշևիկներուդ, — մահից 5 տարի առաջ Բեյրութում ակադեմիկոս Ռուբեն Զարյանի հետ հանդիպման ժամանակ նշել է Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը,— Հայաստանի տարածքն ավելի ընդարձակ կըլլար՝ Ղարս, Արդահան, Իգդիր... էհ, ինչ ըսեմ, ինչպես արդարանամ[17]։

---

[17] «Հայաստանի Հանրապետություն», 1993, 24 նոյեմբերի, էջ 6 (Սիմոն Վրացյանը մահացել է 1969 թ. մայիսի 21-ին, Բեյրութում)։

Ապստամբության ճնշումից որոշ ժամանակ անց Բաղրամյանը ազատվում է բանտից, սակայն նրան չեն վստահում էսկադրոնի հրամանատարությունը և մի խումբ տարեց զինվորների հետ ուղարկում են Կարսի մարզ Բաշկադիկլարի շրջան՝ խոտ հավաքելու հեծյալ գնդի համար։ Սակայն, երբ սեպտեմբերին թուրքերը պատերազմ սկսեցին Հայաստանի Հանրապետության դեմ, Բաղրամյանը նշանակվեց գնդի սուսերակիրների դասակի հրամանատար և ակտիվ մասնակցություն ունեցավ թուրքական զավթիչների դեմ մղված մարտերին։ Չնայած հայկական փոքրաթիվ զորքերի հերոսական դիմադրությանը (հայ-թուրքական ճակատում հայերն ունեին 20 հազարից փոքր-ինչ ավելի զորք), թուրքական 60-հազարանոց զորքը, որին զգալի օժանդակություն էին ցույց տալիս նաև թուրքական սպաների կողմից մերձճակատային շրջաններում բնակվող մահմեդականներից կազմված զորախմբերը, կարողացավ կարճ ժամանակամիջոցում հասնել զգալի հաջողությունների։ Սեպտեմբերի 29-ին թուրքերը գրավեցին Սարիղամիշն ու Կաղզվանը, հոկտեմբերի 30-ին, չորսօրյա համառ մարտերից հետո, Կարսը (որը անգլիացիների կողմից կողոպտվելուց հետո մնացել էր առանց բերդապահ ծանր հրետանու, իսկ եղածներն էլ հիմնականում հին ու շարքից դուրս եկած հրանոթներ էին՝ առանց անձնակազմերի), նոյեմբերի 5-ին՝ Ալեքսանդրապոլը։ Հայաստանի Հանրապետության կառավարությունը օգնության խնդրանքով դիմում է իր այսպես կոչված դաշնակից մեծ տերությունների՝ Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարություններին, ինչպես նաև Աղգերի Լիգային։ Սակայն հայ ժողովրդի համար այդ օրհասական պահին մեծ տերություններից և ոչ մեկը օգնության ձեռք չպարզեց։ Թուրքական ռազմաճակատում հայերի կրած անհաջողություններից անմիջապես օգտվեցին վրաց մենշևիկները, որոնք նոյեմբերի 13-ին իրենց զորքերը մտցրեցին Լոռվա «Չեղոք գոտին» (Ալավերդու, Ուղունլարի և Վորոնցովկայի շրջանները) և գրավեցին այն։ Կարսի, Ալեքսանդրապոլի և Լոռվա անկմանը հետևեց նոյեմբերի 29-ին Ի-

ջևանի կողմից խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի 20-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերի ներխուժումը Հայաստան։ Հայկական բանակը, որն այդ ուղղությամբ ուներ ընդամենը 2000 զինվոր, ի վիճակի չէր և չէր էլ ձգտում մարտնչել թվով մի քանի անգամ գերազանցող ռուսական զորքերի և նրանց առաջապահում Հայաստան մտած 1500 հոգուց բաղկացած Հայկական առանձին գնդի դեմ, առանց դիմադրության վայր դրեց զենքը։ Նույն օրը Իջևանում Հայաստանի Հեղկոմը հանդես է գալիս Հայաստանը խորհրդային սոցիալիստական հանրապետությունն հայտարարելու մասին հռչակագրով[18]: Դեկտեմբերի 1-ին Երևանում գտնվող խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը անմիջապես դիմեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար ընդունել Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու մասին որոշում։ Նույն օրը կառավարությունն ընդունեց համապատասխան որոշում, որը հստակ երևում է վարչապետ Սիմոն Վրացյանի կողմից ստորագրած հետևյալ փաստաթղթերից. «Բյուրոն, ֆրակցիան, կառավարությունը որոշեցին ընդունել կարմիրների առաջարկը սովետիզացիայի մասին...»[19]: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ին, Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրաժարվեց իշխանությունից և այն հանձնեց ռազմական նախարար Դրոյին, որն էլ նույն օրը Լեգրանի հետ կնքեց համաձայնագիր, որի առաջին կետով «Հայաստանը հայտարարվում է Անկախ Սոցիալիստական խորհրդային Հանրապետություն»[20]: Դեկտեմբերի 2-ին հրապարակվում է նաև ՀԽՍՀ ամբողջ բանակի հրամանատար Դրոյի և ՌԽՍՖ կոմիսար Սիլինի ստորագրած թիվ 1 հրամանը՝ Հայաստանի Հանրապետության բանակը ՀԽՍՀ Կարմիր բա-

---

18 Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, ե., 1967, էջ 118։

19 ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 248, թ. 2։

20 Ս. Վրացյան, Հուշեր մոտիկ անցյալից, «Հայրենիք», 1923, նոյեմբեր, թիվ 1։ Նույնի՝ Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 439։

նակի վերակազմավորելու մասին։ Այս հրամանի համաձայն հին բանակը ոչ թե կազմացրվեց, այլ կազմավորվեց նոր տիպի բանակի։ Նրա բոլոր զորամասերը մնում էին իրենց նախկին վայրերում, իսկ կադրերը շարունակում էին ծառայությունը[21]։ 1921 թ. հունվարի 1-ի տվյալներով Հայկական կարմիր բանակը բաղկացած էր երեք հետևակային, մեկ հեծյալ բրիգադներից, հրետանային, մասնագիտական և օժանդակ այլ զորամասերից[22]։ Հեծյալ բրիգադը բաղկացած էր երկու հեծյալ գնդերից։ Ապագա մարշալը նշանակվեց Հայկական 1-ին հեծյալ գնդի էսկադրոնի հրամանատար և այդ պաշտոնում 1921 թ. փետրվարի 18—22-ը մասնակցեց վրացական մենշևիկներից Լոռու ազատագրմանը, ինչպես նաև Վրաստանում խորհրդային կարգերի հաստատմանը։ Դրանից հետո նա նշանակվեց Խորհրդային Վրաստանում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչության ապարատում՝ զինվորական կցորդ Անդրեյ Պավլի Մելիք-Շահնազարյանի օգնական։ Հենց այդ օրերին էր, որ ապագա մարշալը Թիֆլիսում հանդիպեց ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ և նրան օգնեց 11-րդ կարմիր բանակի շտաբից Երևան մեկնելու անցաթուղթ ձեռք բերելու (Հովհաննես Թումանյանը Երևան էր մեկնում փետրվարյան հակախորհրդային ապըստամբության ղեկավարների հետ բանակցություններ վարելու)։ Մեծ բանաստեղծի հետ ունեցած հանդիպման մասին ջերմ տողեր է գրել Բաղրամյանն իր հուշերում։

«Շտաբի ճանապարհին Թումանյանի և իմ միջև աշխույժ զրույց սկսվեց,—նշում է Բաղրամյանը,—նրան հետաքրքրում էր ամեն ինչ. որտե՞ղ եմ ես ծնվել, ովքե՞ր են իմ ծնողները, ի՞նչ զինվորական կրթություն ունեմ, եղել եմ արդյոք ռազմաճակատում և այժմ որ գնդում եմ ծառայում... Երբ Թումանյանն իմացավ, որ ես ծառայում եմ Հայկական հեծյալ բրիգադում, որի

---

21 «Կոմունիստ», 1920, 2 դեկտեմբերի, թիվ 1։ «Բանրեր Հայաստանի արխիվներից», Ե., 1976, թիվ 3, էջ 15—16։

22 Ռուսական բանակի պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՌԲՊԿԱ), ֆ. 25873, ց. 6, գ. 118, թթ. 164—170։

2—24

A 85523

գնդերը 11-րդ բանակի զորամասերի հետ սկսելով իրենց հարձակումը Ղարաքիլիսայի շրջանից՝ մարտերով հասան Թիֆլիս, սկսեց հարցուփորձ անել, թե ինչ վերաբերմունք ունեն Լոռու և Իջևանի բնակչությունը դաշնակների ապստամբության հանդեպ, ինչպես են դրանք անդրադառնում մեր բրիգադի զինվորների և հրամանատարության վրա, արդյոք նրանց մոտ ցանկություն չի առաջանում ակտիվ մասնակցությունն ցուցաբերել արկածախնդիր խռովության վերացմանը։ Իմ պատասխանները կարծես թե լիովին բավարարեցին բանաստեղծին, և նա որոշ դադարից հետո ասաց. «Դաշնակ պարագլուխները չեն կարող լրջորեն գիտակցել տեղի ունեցող իրադարձությունները։ Նրանք մեկ անգամ ևս ցույց տվեցին իրենց ոչնչությունը և անկարողությունը։ Մեր ժողովրդի փրկությունը, նրա ապագան կապված է, ինչպես ես միշտ էլ ասել եմ, Ռուսաստանի հետ, որը մեզ այժմ բերել է ազատություն և ազգային վերածննդի հնարավորություն։ Ահա թե ինչու, շարունակեց Թումանյանը, ես ձգտում եմ օգտագործել իմ ամբողջ հեղինակությունը, օգնել Հայաստանի Հեղկոմին որքան կարելի է արագ վերջ տալ դաշնակների նոր անմտությանը, որպեսզի մեր երկրում վերականգնվի խորհրդային իշխանությունը, դրա հետ մեկտեղ խաղաղությունն ու բարգավաճումը...»[23]։

Ինչպես հայտնի է, Թումանյանը, վտանգի ենթարկելով կյանքը, 1921 թ. մարտի 30-ին հասել էր Երևան։ Սակայն մեծ բանաստեղծի իմաստուն խոսքը լսելու փոխարեն դաշնակցական ղեկավարները նրան ենթարկեցին տնային կալանքի։ Միայն ապրիլի 2-ին է նա ազատվում կալանքից՝ 11-րդ բանակի զորամասերի և հայկական պարտիզանական ջոկատների կողմից Երևանն ազատագրելուց հետո։ Դաշնակցական ղեկավարները փոքրաթիվ զորամասերի հետ անցնում են Զանգեզուր և միանում Նժդեհին, որը ադրբեջանական կարմիր ասքյարների կողմից երկրամասը պաշտպանելու նպա-

---

23 Ի. Ք. Բաղրամյան, *Իմ հիշողությունները*, էջ 113—114։

տակով այնտեղ ստեղծել էր Լեռնային Հայաստանի ինքնուրույն հանրապետություն։

1921 թ. մայիսի սկզբներին Մոսկվայից Հայաստան եկավ պետական և կուսակցական ականավոր գործիչ, մեծ հայրենասեր Ալեքսանդր Թեոդորովիչ Մյասնիկյանը, որը նշանակվեց Հայաստանի Հեղկոմի նախագահ։ Մայիսի 21-ին Հեղկոմը վերակազմավորվում է ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի, որի նախագահ և ռազմական գործերի կոմիսար է նշանակվում Ալ. Մյասնիկյանը[24]։ Նրա ղեկավարությամբ նոր թափ է ստանում Հայկական բանակի վերակազմավորման և ամրապնդման գործը։ Թիֆլիսից նրա հետ Երևան են վերադառնում մի խումբ զինվորական գործիչներ, որոնց թվում և Հովհ. Բաղրամյանը, որը նշանակվում է ռազմժողկոմատի շտաբում, որպես շտաբի պետի օգնական օպերատիվ հարցերի գծով։ Շտաբի պետի պարտականությունները կատարում էր Ա. Պ. Մելիք-Շահնազարովը։ Այդ պաշտոնում էլ Բաղրամյանը 1921 թ. ամռանը մասնակցում է Դարալագյազի և Զանգեզուրի կռիվներին, ձեռք բերում շտաբային աշխատանք կատարելու փորձ։ Քաղաքացիական կռիվները Հայաստանում ավարտվելուց հետո Հայկական կարմիր բանակը 1921 թ. ամռան վերջերից մինչև 1922 թ. աշնան սկզբները ենթարկվում է վերակազմավորման. սկզբում ստեղծվում է Հայկական հավաքական բրիգադ, ապա՝ Հայկական հրաձգային դիվիզիա (1922 թ. սեպտեմբերի 5-ին). դիվիզիայի հրամանատար է նշանակվում Ա. Պ. Մելիք-Շահնազարովը[25]։ Դիվիզիայում նշանակումներ են ստանում Հայկական բանակի նախկին սպաներից շատերը, նրանց թվում Հայաստանի Հանրապետության նախկին ռազմական նախարար, գեներալ-մայոր Խաչատուր Արարատովը, որը նշանակվեց դիվիզիայի հրամանատարի տեղակալ՝ դիվիզիայի հրետանու

---

24 Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, էջ 157։

25 ՌԲՊԿԱ, ֆ. 25873, ց. 1, գ. 1539, թ. 443, ֆ. 216, ց. 3, գ. 397, թ. 443, գ. 480, թ. 13։

պետ, շտաբս-կապիտան Վլադիմիր Տամրուչին (հետագայում տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ), որը նշանակվեց դիվիզիայի շտաբի պետ։ Առաջին հրաձգային գնդի հրամանատար նշանակվեց Ալեքսանդր Միրմանյանը, երկրորդ հրաձգային գնդինը՝ Նիկոլայ Խուդաբաշյանը, հեծյալ գնդինը՝ Հովսեփ Լազարևը (երեքն էլ նախկին գնդապետներ) և այլն[26]։ Հովհ. Բաղրամյանը 1922 թ. հոկտեմբերին նշանակվեց Հայկական հրաձգային դիվիզիայի հեծյալ գնդի գնդացրային էսկադրոնի հրամանատար։ 1922 թ. հոկտեմբերի 17-ին խորհրդային Հայաստանի ռազմական գործերի ժողովրդական կոմիսար է նշանակվում Գայը՝ Հայկ Դիմիտրիի Բժշկյանը, որը Առաջին համաշխարհային պատերազմում և 1918—1920 թթ. Ռուսաստանի քաղաքացիական կռիվներում ձեռք բերած իր հարուստ փորձը ամբողջությամբ նվիրաբերեց Հայկական հրաձգային դիվիզիայի կոփման և ամրապնդման գործին[27]։ Հովհաննես Բաղրամյանը խորը ակնածանքով է հիշում ինչպես Ալ. Ֆ. Մյասնիկյանի, այնպես էլ Գայի մասին, որոնց անմիջական հրամանատարությամբ բախտ է ունեցել մասնակցելու խորհրդային Հայաստանի զինված ուժերի ստեղծման ու կայունացման գործին։ Գայը պարբերաբար լինում էր զորամասերում, ներկա լինում զորավարժություններին, օգտակար խորհուրդներ տալիս հրամանատարներին։ 1923 թ. գարնան սկզբներին Գայը ներկա է եղել հեծյալ գնդի զորավարժություններին, գոհ մնացել Բաղրամյանի էսկադրոնի գործողություններից, ըստ արժանվույն գնահատել երիտասարդ հրամանատարին։ Զորավարժություններից հետո նա մտերմիկ զրույց է ունեցել գնդի ողջ անձնակազմի հետ, շնորհակալություն հայտնել հայ հեծելազորայիններին՝ զորավարժության ժամանակ գերազանց գործելու համար, հետաքրքիր

---

[26] Նույն տեղում, ֆ. 1535, ց. 1, գ. 2, թթ. 46—121։

[27] 1922 թ. նոյեմբերի վերջերին Հայաստանի ռազմական գործերի ժողովրդական կոմիսարիատը վերակազմվում է զինվորական կոմիսարիատի. Գայը հաստատվում է հանրապետության զինվորական կոմիսար։ Գայը Հայաստանում մնաց մինչև 1923 թ. մարտի 23-ը։

դեպքեր պատմել քաղաքացիական կռիվներից։ «Նա ոչ միայն ականավոր զորապետ էր, այլև, ինչպես մենք հասկացանք, շնորհալի հռետոր,— իր հուշերում գրում է Բաղրամյանը,— ժողովրդի խոսքը տպավորիչ էր, պատկերավոր, հագեցած նուրբ հումորով։ ...Դայն իմ վրա թողեց անջնջելի տպավորություն։ Նա այնպիսի զորապետ էր, որին ձգտում էին նմանվել ամեն ինչով»[28]։

Հայկական դիվիզիայի հրամանատարությունը նույնպես ըստ արժանվույն գնահատեց էսկադրոնի հրամանատար Բաղրամյանի մարտավարական շնորհքը և 1923 թ. աշնանը առաջ քաշեց հեծյալ գնդի հրամանատարի պաշտոնում, որտեղ ապագա մարշալը իր ռազմական փայլուն ունակությունները է՛լ ավելի լավ դրսևորելու հնարավորություն ստացավ։ Ուստի պատահական չէր, որ 1924 թ. աշնանը հայկական դիվիզիայի հրամանատարությունը նրան զործուղեց Լենինգրադ՝ կարմիր բանակի բարձրագույն հեծելազորային դպրոցում սովորելու համար։ Այստեղ Բաղրամյանը ոչ միայն հմուտ դասախոսների օգնությամբ ձեռք բերեց անհրաժեշտ գիտելիքներ, այլև մտերմացավ իր համակուրսեցիների հետ, որոնց թվում էին ապագա մարշալներ Գեորգի Կոնստանտինովիչ Ժուկովը, Կոնստանտին Կոնստանտինովիչ Ռոկոսովսկին, Անդրեյ Իվանովիչ Երյոմենկոն, հետագայում գեներալ-գնդապետներ Իվան Միխայլովիչ Չիստյակովը, Պրոկոֆի Լոգվինովիչ Ռոմանենկոն և ուրիշներ։ Բաղրամյանին թույլատրվեց Լենինգրադ տանել նաև ընտանիքը։ Հիշեցնենք, որ Բաղրամյանը ամուսնացել էր 1922 թ. վերջերին ադուլիսցի Թամարա Հմայակի Սարգսյանի հետ, որի հետ ծանոթացել էր դեռևս 1920 թ. Ալեքսանդրապոլում, երբ Թամարան սովորում էր գիմնազիայում։ Մայիսյան ապստամբության, իր ձերբակալության, ապա Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվների ժամանակ Բաղրամյանը կորցրել էր նրան։ Ուստի 1922-ի վերջերին, երբ խաղաղվել էր ամեն ինչ, ինքն էլ արդեն 25

---

28 Ի. Փ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 123—124։

տարեկան էր, որոշեց գտնել սիրած աղջկան։ «Պարզվեց, որ Թամարան գտնվում է Նախիջևանում, որ նա երկու տարի առաջ ամուսնացել է մի հայ սպայի հետ, ունեցել է զավակ, սպան կռիվներում սպանվել է, իսկ Թամարան մեկ տարեկան տղայի հետ մնացել է ծնողների մոտ։ Բաղրամյանը խորհում է կատարվածի մասին, կապ հաստատում և մի օր էլ իր նշանածուհուն գտնում դեպի Նախիջևան,— մարշալի մասին գրած աշխատության մեջ նշում է անվանի պատմաբան, Բաղրամյանի մտերիմ, պրոֆեսոր Արամայիս Մնացականյանը։— Տեսակցությունը լինում է սրտաշարժ։ Հովհաննես Բաղրամյանն ամուսնանում է Թամարայի հետ, նրան փոխադրում Երևան, իսկ տղային որդեգրում է և կնքում Մովսես Հովհաննեսի Բաղրամյան»[29]։ Մեկ տարի անց ծնվում է Հովհաննես և Թամարա Բաղրամյանների դուստրը՝ Մարգարիտը, որը հետագայում դառնում է բժշկուհի, իսկ Մովսես Բաղրամյանը՝ գեղանկարիչ։ Թամարա Հմայակովնան ավելի քան 50 տարի ապրում է Հովհաննես Բաղրամյանի հետ և մահանում Մոսկվայում, 1973 թվականին։

Լենինգրադում Բաղրամյանը սովորեց մինչև 1925 թ. ամռան վերջերը։ Նրա հետ միասին հեծելազորային դպրոցում սովորում էր նաև Համազասպի, էսկադրոնի հրամանատար Սերգեյ Իսայի Կարապետյանը (1899—1954), որը 1936—1938 թթ. դարձավ հայկական հեծյալ գնդի, Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ դիվիզիայի հրամանատար, 1943-ին արժանացավ գեներալ-մայորի կոչման։ Ուսուցման շրջանում ինչպես Հ. Խ. Բաղրամյանը, այնպես էլ Ս. Ի. Կարապետյանը նյութական խիստ կարիքի մեջ էին։ Նրանց ստացած թոշակը հազիվհազ բավարարում էր միայն ամենաառաջնահերթ կարիքների համար։ Իմանալով այդ մասին՝ Հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատար Անդրեյ Մելիք-Շահնազարովը, զինկոմ Հայկ Հովսեփյանը և շտաբի պետ Բոդդան Բաղդասարյանը 1925 թ. ապրիլի 21-ին զեկուցագիր

---

29 Ա. Ն. Մնացականյան, *Մարշալ Բաղրամյան*, էջ 47։

են ուղարկում Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի նախագահի անունով՝ միջնորդելով Լենինգրադում սովորող Բաղրամյանին և Կարապետյանին նշանակել միանվագ նպաստ յուրաքանչյուրին 100-ական ռուբլու չափով։ Ապրիլի 27-ին ժողկոմխորհի նախագահը բավարարում է դիվիզիայի հրամանատարության միջնորդությունը և նշանակում նպաստը, որը որոշ չափով թեթևացնում է ապագա զորապետների հոգսը, հնարավորություն տալով նրանց ձեռք բերել նաև անհրաժեշտ գրականություն և ուսումնական պիտույքներ[30]։ Լենինգրադում սովորելու ընթացքում Բաղրամյանը և նրա ընկերները ձեռք էին բերում ոչ միայն ռազմական կայուն գիտելիքներ, մասնակցում ձիասպորտի մրցումների, սառը պենքի տիրապետման, այլև մեծ հետաքրքրությամբ ծանոթանում Ռուսաստանի մշակույթին, մայրաքաղաքի հասարակական ու մշակութային կյանքին, այցելում Էրմիտաժ, Ռուսական թանգարան, տեսարժան այլ վայրեր, ձեռք բերում գեղագիտական ճաշակ, արվեստը հասկանալու կարողություն, ընդարձակում իրենց մտահորիզոնը։

Իր հուշերում Բաղրամյանը բարձր է գնահատում լենինգրադյան ուսուցման շրջանը, ջերմ խոսքեր գրում համակուրսեցիների մասին. «Մեր ուսումնական խմբում էին Ա. Ի. Երյոմենկոն, Գ. Կ. Ժուկովը, Ն. Լ. Միշուկը, Կ. Կ. Ռոկոսովսկին, Պ. Լ. Ռոմանենկոն, Յա. Ս. Սավելևը, Ս. Պ. Սինյակովը, Վ. Ի. Չիստյակովը և ուրիշ հրամանատարներ, թվով 25 մարդ[31]։ Իրենց խառնվածքով, վարվելակերպով լինելով միանգամայն տարբեր մարդիկ, նրանք այն ժամանակ արդեն ուժեղ կամքի տեր, համարձակ մտածելակերպով ու վարման-

---

[30] ՀՀ նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊՊԿԱ), ֆ. 113, ց. 3, գ. 268, թ. 1)։ Այս մասին գրվում է առաջին անգամ։ Վերոհիշյալ փաստաթուղթը հայտնաբերվել է մեր կողմից և հանձնվել մարշալի կյանքն ու գործունեությունը լուսաբանող փաստաթղթերի ժողովածուն կազմող հեղինակային կոլեկտիվին)։

[31] Հեծելազորային բարձրագույն դպրոցում սովորողների ընդհանուր թիվը անցնում էր 200-ից։

քով փորձված հրամանատարներ էին։ Այդ ժամանակ մեզնից ոչ մեկը դեռ երեսուն տարեկան էլ չկար։ Երիտասարդ, ուժեղ, ֆիզիկապես և բարոյապես կոփված, մենք ձգտում էինք մեկս մյուսին գերազանցել և՛ ուսման մեջ, և՛ ձիասպորտային մրցումներում։

Մեր մեջ, անշուշտ, ամենից համառը Անդրեյ Իվանովիչ Երյոմենկոն էր։ Ունենալով ընդամենը ծխական դպրոցի չորրորդ դասարանի կրթություն, նա բացառիկ աշխատասիրությամբ յուրացնում էր բավականաչափ ընդարձակ և հագեցած ուսումնական ծրագիրը։ Հաստատակամությունն ու համառությունը նրան ուղեկցեցին ամբողջ կյանքում և ամբողջ ուժով դրսևորվեցին հատկապես Հայրենական մեծ պատերազմի տարիներին։

Գեորգի Կոնստանտինովիչ Ժուկովը մեր խմբի ունկնդիրների մեջ համարվում էր ամենաընդունակներից մեկը։ Նա դեռ այն ժամանակ աչքի էր ընկնում ոչ միայն վառ արտահայտված կամային հատկություններով, այլև իր յուրահատուկ մտածողությամբ։ Հեծելազորի մարտավարական պարապմունքների ժամանակ Ժուկովը մեկ անգամ չէ, որ մեզ զարմացնում էր որևէ անակնկալով։ Գեորգի Կոնստանտինովիչի՝ վճիռները մշտապես առաջ էին բերում բուռն վեճեր, և նրան սովորաբար հաջողվում էր մեծ տրամաբանությամբ պաշտպանել իր հայացքները։ Նրա կրծքին, ինչպես նաև շատ ուրիշների, փայլում էր Կարմիր դրոշի շքանշանը՝ քաղաքացիական պատերազմում ցուցաբերած սխրանքների համար։

Խմբում հատուկ համակրանք էր վայելում նրբագեղ և չափազանց քաղաքավարի Կոնստանտին Կոնստանտինովիչ Ռոկոսովսկին։ Վայելչակազմ կեցվածքը, դրավիչ արտաքինը, աղնիվ, բարի բնավորությունը և հոյակապ սպորտային կոփվածքը, առանց որի հեծյալը հեծյալ չէր, իրեն էր ձգում բոլոր ընկերներին։ Մեզ՝ մոլի հեծյալներիս մոտ, նա արժանավորապես համարվում էր ամենափորձված հեծյալը և հեծելազորի մարտավարության գիտակ անձը։ Դրա վկայությունն էր նաև Ռոկոսովսկու կրծքի Կարմիր դրոշի շքանշանը, որը

պերճախոս կերպով խոսում էր անցյալ մարտերում ցուցաբերած արիության և անվեհերության մասին»[32]:

1925 թ. դաշտային լարված պայմաններում տեղի ունեցած ամառային պարապմունքներով և Լենինգրադում կայացած եզրափակիչ զորախաղերով ավարտվեց ուսուցումը դրպրոցում, և շրջանավարտները վերադարձան իրենց զորամասերը։ Բաղրամյանը վերադարձավ Հայաստան և կրկին ստանձնեց Հայկական հրաձգային դիվիզիայի հեծյալ գնդի հրամանատարությունը և այդ պաշտոնը վարեց մինչև 1931 թ.։

1925—1930 թթ. հեծյալ գունդը մշտապես աչքի է ընկնում ինչպես Հայկական հրաձգային դիվիզիայի, այնպես էլ Անդրկովկասյան զինվորական օկրուգի մասշտաբով կազմակերպված զորախաղերում։ Այսպես, օրինակ, 1928 թ. կայացած զորախաղերում իրեն փայլուն դրսևորեց հայկական, վրացական, ադրբեջանական հեծյալ գնդերից և օկրուգային ենթակայության երեք այլ զորամասերից կազմված հավաքական զորախումբը՝ Հովհաննես Բաղրամյանի հրամանատարությամբ։ Հայկական հեծյալ գունդը բարձր ֆիզիկական պատրաստականություն և մարտավարական հմտություն ցուցաբերեց նաև 1930—1931 թթ. ձմռանը կազմակերպված զորախաղերում, որոնք անց էին կացվում լեռնային բարդ տեղանքում. «Գնդի հրամանատարը անձամբ գիտեր իր զորամասի ոչ միայն միջին ու կրտսեր հրամկազմի անդամներին, այլև բոլոր զինվորներին, հետաքրքրվում էր նրանց տրամադրությամբ, ստեղծում անհրաժեշտ պայմաններ, որպեսզի նրանք պատվով կատարեն իրենց զինվորական պարտքը», շատ ճիշտ նկատել են մարշալի 90-ամյակի կապակցությամբ «Գիտելիք» ընկերության հրատարակած ուշագրավ, գիտահանրամատչելի գրքույկում ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը և պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Պ. Սիմոնյանը[33]:

---

[32] И. Х. Баграмян. Мои воспоминания, с. 132—133.

[33] Գ. Բ. Ղարիբջանյան, Ա. Պ. Սիմոնյան, *Մարշալ Բաղրամյան*, Ե., 1987, էջ 10—11։

1930 թ. Հ. Խ. Բաղրամյանին երեք ամսով գործուղում են Մոսկվա՝ ԲԳԿԲ-ի Գլխավոր շտաբին կից բարձրագույն հրամանատարական կազմի վերապատրաստման դասընթացներում կատարելագործվելու համար, քանի որ նրան ատեստավորել էին հեծյալ բրիգադի հրամանատարի պաշտոնում։ Դասընթացները ղեկավարում էր ռազմական գիտության ականավոր տեսաբան, գլխավոր շտաբի պետի տեղակալ Վլադիմիր Կիրիակովիչ Տրիանդաֆիլովը։ Բաղրամյանի և ականավոր ռազմագետի միջև ծայր է առնում ջերմ բարեկամություն, որը պայմանավորված էր ոչ միայն ապագա մարշալի փայլուն ընդունակություններով, այլև նրանով, որ Վ. Կ. Տրիանդաֆիլովը բավականին վարժ խոսում էր հայերեն։ Նա ծնվել էր 1894 թ. Կարսի մարզի Մագարաջի գյուղում՝ հունական ընտանիքում։ 1923 թ. ավարտել էր ԲԳԿԲ-ի ռազմական ակադեմիան, զբաղվել Առաջին համաշխարհային պատերազմի և քաղաքացիական կռիվների գիտական ուսումնասիրությամբ։ Տրիանդաֆիլովի «Ժամանակակից բանակի գործողության թափը» աշխատությունը, որը հրատարակվել էր Մոսկվայում 1926 թ. և «Ժամանակակից բանակի գործողության բնույթը» անտիպ գործը այդ տարիներին ձեռքից ձեռք էր անցնում ինչպես զինվորական ակադեմիայում, այնպես էլ կատարելագործման դասընթացներում։ Տրիանդաֆիլովի հետ շփումը, նրա գործերին ծանոթանալը Բաղրամյանի մեջ ուսումը ակադեմիայում շարունակելու ցանկություն առաջացրեց։ Դասընթացներն ավարտելուց հետո Հայաստան վերադառնալուց որոշ ժամանակ անց Բաղրամյանը 1931 թ. ապրիլին ընդունելության քննությունները գերազանց հանձնելով ընդունվեց Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիա։ Նրա հետ միասին ակադեմիա ընդունվեցին ապագա բանակի գեներալ, Խորհրդային Միության հերոս Ալեքսեյ Սեմյոնովիչ Ժադովը, զրահատանկային զորքերի մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Պավել Սեմյոնովիչ Ռիբալկոն, գեներալ-գնդապետ Լեոնիդ Միխայլովիչ Սանդալովը, Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ

Միքայել Արտեմի Պարսեղովը։ 1931 թ. ակադեմիայի պետը Ռոբերտ Պետրովիչ Էյդեմանն էր, 1932 թ. նրան փոխարինեց Բորիս Միխայլովիչ Շապոշնիկովը (1940 թ. Խորհրդային Միության մարշալ)։ Այդ ժամանակ Բ. Մ. Շապոշնիկովը առաջատար ռազմական տեսաբաններից էր, հեղինակ բավականաչափ հանրահայտ «Բանակի ուղեղը» երեքհատորանոց աշխատության և ռազմատեսական զանազան հարցերին վերաբերող մի շարք կարևոր ուսումնասիրությունների։ Նա հսկայական փորձ և գիտելիքներ ունեցող զորապետ էր, անսահման բարձր կուլտուրայի տեր մարդ։ Նրա օրոք 1932 թ. ստեղծվեց ակադեմիայի օպերատիվ ֆակուլտետը, որի ղեկավար դարձավ հայտնի ռազմագետ և մանկավարժ Դ. Ս. Խասերսոնը. այն համարվեց ակադեմիայի հիմնական ֆակուլտետը և ուներ երեք տարվա ուսուցման ժամկետ։ Ուսումնական գործընթացի հիմքում դրված էր համազորային մարտի ուսուցումը։ 1936 թ. այս ֆակուլտետի հիման վրա բացվեց ԲԳԿԲ-ի զբաղեցրած շտաբի ակադեմիան։ Հ. Խ. Բաղրամյանը եղավ օպերատիվ ֆակուլտետի առաջին ուսանողներից։ Այստեղ նրան դասավանդում էին նաև այնպիսի շնորհալի դասախոս-ռազմագետներ, ինչպիսիք էին՝ Դ. Մ. Կարբիշևը, Ա. Ս. Ֆեդոտովը, Ա. Վ. Դոլուբևը, Ս. Ն. Կրասիլնիկովը և ուրիշներ։ Ուսուցման առաջին տարում ունկնդիրները ուսումնական ծրագիրն անցնում էին գնդի, երկրորդ տարում՝ դիվիզիայի, երրորդ տարում՝ կորպուսի մասշտաբով։ Քանի որ Հ. Խ. Բաղրամյանը մինչև ակադեմիա ընդունվելը խորը գիտելիքներ ուներ ռազմական առարկաների հիմունքներից, ապա նրան հաջողվեց բավականաչափ խորությամբ հասկանալ բանակային օղակում հարձակողական գործողությունների էությունը։ Բաղրամյանը սովորում էր իրեն հատուկ հետաքրքրասիրությամբ. համառ աշխատանքը և բնական ընդունակությունները նրան հնարավորություն են տալիս 1938 թ. ակադեմիան ավարտել գերազանցությամբ[34]։

---

[34] **П. А. Ротмистров.** Путь полководца.—Тыл и снабжение Советских Вооруженных Сил, 1967, №11, М., с. 17.

Հաշվի առնելով Հ. Խ. Բաղրամյանի գերազանց առաջադիմությունը, ակադեմիայի ղեկավարությունը ցանկանում էր նրան պահել որպես դասախոս։ Սակայն դեպի կենդանի զորքը ձգտող ապագա մարշալը խնդրում է իրեն նշանակել որևէ զորամասում։ Նրա խնդրանքը կատարվում է. 1934 թ. ամռանը նշանակվում է Ժիտոմիրում կանգնած 5-րդ հեծյալ դիվիզիայի շտաբի պետ։ Դիվիզիան մտնում էր Կոտովսկու անվան հեծյալ կորպուսի մեջ՝ ուկրաինական զինվորական օկրուգի կազմում։ 1935 թ. մայիսի 17-ին վերջինիս հիման վրա կազմավորվեցին Կիևի և Խարկովի զինվորական օկրուգները. Բաղրամյանի դիվիզիան մտավ Կիևի զինվորական օկրուգի մեջ[35], որի հրամանատարը Իոնա Էմմանուիլովիչ Յակիրն էր։ 5-րդ հեծյալ դիվիզիայի շտաբի օպերատիվ բաժնի պետը հմուտ հեծելազորային Իսա Ալեքսանդրովիչ Պլիևն էր (հետագայում բանակի գեներալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս)։ Դիվիզիայում Հ. Խ. Բաղրամյանը ծառայեց շուրջ երկուսուկես տարի՝ գործնականում ավելի խորացնելով իր ռազմական գիտելիքները։ Բոլոր զորավարժություններում օկրուգի հրամանատարությունը միշտ էլ գերազանց էր գնահատում նրա շտաբային աշխատանքը։ «Ծառայությունս ընթանում էր ոչ վատ, և ես լիովին զոհ էի իմ ճակատագրից,— կարդում ենք Բաղրամյանի հուշերում,— սակայն, երբ 1936 թ. ամռանը հայտնի դարձավ, որ Համկ(բ)կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշմամբ ստեղծվում է գլխավոր շտաբի ակադեմիա՝ ավագ հրամանատարական կազմի խորը օպերատիվ պատրաստության համար, ես, ինչպես նաև իմ շատ ընկերներ, ուղղակի այրվում էինք այդ ուսումնական հաստատությունն ընկնելու համար»[36]։ Կորպուսի հրամանատարությունը չէր ուզում բաժանվել տաղանդավոր զինվորականից և նրան առաջ քաշեց կորպուսի շտաբի պետի պաշտոնում։ Սակայն շուտով ստացվեց ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմ, Խորհրդ-

---

[35] 1938 թ. հուլիսի 26-ին Կիևի և Խարկովի զինվորական օկրուգների հիման վրա կազմավորվեց Կիևի հատուկ զինվորական օկրուգը։

[36] И. Х. Баграмян. Мои воспоминания, с. 451.

դային Միության մարշալ Կ. Ե. Վորոշիլովի հրամանը՝ Հ. Խ. Բաղրամյանին գլխավոր շտաբի ակադեմիա ընդունելու մասին։ Ստանալով հրամանը՝ Բաղրամյանը կնոջ և երկու երեխաների հետ մեկնեց Մոսկվա և տեղավորվեց ակադեմիայի հարմարավետ հանրակացարանում։ Ակադեմիայի առաջին ունկնդիրների թվում էին ապագա մարշալներ, Խորհրդային Միության կրկնակի հերոսներ Ալեքսանդր Միխայլովիչ Վասիլևսկին, Մատվեյ Վասիլևիչ Զախարովը, Խորհրդային Միության հերոս Լեոնիդ Ալեքսանդրովիչ Գովորովը, բանակի գեներալներ, Խորհրդային Միության հերոսներ Վլադիմիր Վասիլևիչ Կուրասովը, Պավել Ալեքսեևիչ Կուրոչկինը, Նիկոլայ Ֆեոդորովիչ Վատուտինը, Ալեքսեյ Նիկոլաևիչ Անտոնովը և ուրիշներ, որոնք Հայրենական մեծ պատերազմի տարիներին գլխավորեցին ռազմաճակատներ, բանակներ, գլխավոր շտաբը և այլ պատասխանատու պաշտոններ։ Ակադեմիայում ուսուցման ծրագիրը նախատեսված էր երկու տարվա համար, որի ընթացքում ունկնդիրները կստանային բարձրագույն հրամանատարական կադրերի համար նախատեսված գիտելիքների անհրաժեշտ առավելագույնը։ Դասավանդվող հիմնական առարկաներն էին՝ բարձրագույն զորամիավորումների մարտավարությունը և օպերատիվ արվեստը։ Կարևոր տեղ էր հատկացվում նաև զորքերի կազմակերպման, մոբիլիզացիայի, ռազմական տնտեսության, ռազմական արվեստի պատմության, օտար լեզուների ուսուցմանը և այլն։ Ակադեմիայի առաջին պետը կոմդիվ Դիմիտրի Ալեքսանդրովիչ Կուչինսկին էր, որն օժտված էր ոչ միայն կազմակերպչական մեծ տաղանդով, այլև ռազմական արվեստի խորը գիտակ էր։ Ակադեմիայում դասավանդում էին ականավոր մասնագետներ՝ կոմդիվ Պ. Ի. Վակուլիչը (բարձրագույն զորամիավորումների մարտավարություն), կոմբրիգ Գ. Ս. Իսսերսոնը (օպերատիվ արվեստ), կոմկոր Մ. Ի. Ալաֆուզոն (զորքերի կազմակերպման և մոբիլիզացիայի հիմունքներ), կոմդիվ Վ. Ա. Մելիքովը (ռազմական պատմություն), դիվինժեներ Դ. Մ. Կարբիշևը (ռազմական ինժեներական արվեստ և ուրիշներ։ Ակադեմիա-

յի ունկնդիրների առջև հետաքրքիր և արժեքավոր դասախոսություններով հանդես էին գալիս ճանաչված զորահրամանատարներ, Խորհրդային Միության առաջին մարշալներ Մ. Ն. Տուխաչևսկին, Ա. Ի. Եգորովը, Առաջին կարգի բանակի հրամանատարներ Ի. Պ. Ուբորևիչը, Ի. Է. Յակիրը, Գ. Դ. Գայը և ուրիշներ։

Գլխավոր շտաբի ակադեմիայում սովորելու տարիներին Հ. Խ. Բաղրամյանը ձեռք բերեց այնպիսի գիտելիքներ, որոնք խիստ անհրաժեշտ էին հատկապես պատերազմի պայմաններում խոշոր զորամիավորումների օպերատիվ ղեկավարման համար։ Ուսուցման շրջանում նա մեծ ուշադրություն էր դարձնում ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելուն, որը դուրս չմնաց ակադեմիայի ղեկավարության տեսադաշտից։ Ուստի պատահական չէր, որ երբ 1938 թ. ակադեմիան տվեց իր առաջին շրջանավարտները, Հ. Խ. Բաղրամյանին պահեցին ակադեմիայում, որպես ընդհանուր մարտավարության ամբիոնի ավագ դասախոս, չնայած ապագա մարշալը ձգտում էր վերադառնալ զորք։

Գլխավոր շտաբի ակադեմիայում սովորելու և աշխատելու տարիներին էր, որ կոփվեց Բաղրամյանի փայլուն զինվորական տաղանդը։ Նա ձեռք բերեց գիտելիքների այն տեսական պաշարը, որը հետագայում թույլ տվեց նաև իր անկրկնելի ձեռագիրը դնել ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում։

Մինչև 1940 թ. աշուն նա իր ողջ ուժերն ու գիտելիքները ի սպաս է դնում բանակի համար բարձրորակ կադրեր պատրաստելու գործին։ Հենց այդ շրջանում էլ՝ 1939 թ. Հ. Խ. Բաղրամյանը դարձավ կոմունիստական կուսակցության անդամության թեկնածու։ Զորք վերադառնալու նրա մտադրությունը իրականացավ միայն 1940 թ. սեպտեմբերին՝ Լենինգրադյան հեծելազորային դասընթացների ընկերոջ Գ. Կ. Ժուկովի շնորհիվ. վերջինս այդ ժամանակ արդեն փառաբանված զորավար էր, բանակի գեներալ, Խալխին-Գոլի մոտ տեղի ունեցած մարտերում հաղթանակ տանելու համար 1939 թ. արժանացել էր Խորհրդային Միության հերոսի կոչման, որից

հետո 1940 թ. նշանակվել Կիևի հատուկ զինվորական օկրուգի հրամանատար։ Գ. Կ. Ժուկովի միջնորդությամբ ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի 1940 թ. սեպտեմբերի 2-ի հրամանով գնդապետ Հ. Խ. Բաղրամյանը նշանակվում է վերոհիշյալ օկրուգի 12-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ[37]. այդ ժամանակ բանակի շտաբի պետը գեներալ-մայոր Բագրատ Իսահակի Առուշանյանն էր, որի հետ 20-ական թվականների սկզբներին Բաղրամյանը ծառայել էր Հայկական հրաձգային դիվիզիայում, բանակի հրամանատարը գեներալ-լեյտենանտ Ֆիլիպ Ալեքսեևիչ Պարուսինովն էր։ Բանակի մեջ մտնում էին 72-րդ, 96-րդ և 99-րդ հրաձգային դիվիզիաները, որոնք տեղաբաշխված էին Արևմտյան Ուկրաինայի Ստանիսլավ, Պերեմիշլ, Սանոկ, Դոբրոմիլ, Սամբոր, Ուժգորոդ շրջաններում, որոնք մեկ տարի առաջ էին միացվել Ուկրաինական ԽՍՀ-ին։ Լեռնային բարդ տեղանքում և կլիմայական անբարենպաստ պայմաններում անցկացված զորավարժությունները ավարտվում են հաջողությամբ։ Ուժգոկյան լեռնանցքը հաղթահարելու ժամանակ պարզ դարձավ, որ սովորական հրաձգային միավորումները մեծ դժվարությունների են հանդիպում չափազանց ծանրաբեռնված լինելու հետևանքով։ Պարզ դարձավ, որ դրանք հարկավոր է շուտ վերակազմավորել թեթև լեռնահրաձգային դիվիզիաների, որոնք հանդերձավորված կլինեն լեռնային պայմաններում գործելու համար։ Չնայած գնդապետ Հ. Խ. Բաղրամյանը 12-րդ բանակում ծառայեց կարճ ժամանակամիջոցում՝ մինչև 1940 թ. դեկտեմբերի 20-ը[38], սակայն այդ ընթացքում էլ իրեն դրսևորեց որպես հասուն ղեկավար և զինվորական գործի բաղմագիտակ հրամանատար։

Նոր տարին գնդապետ Հ. Խ. Բաղրամյանը դիմավորեց Կիևում՝ Կիևի հատուկ զինվորական օկրուգի շտաբի պետի տեղակալի՝ շտաբի օպերատիվ բաժնի պետի պաշտոնում։ Շտաբի պետը գեներալ-լեյտենանտ Մաքսիմ Ալեքսեևիչ Պուր-

---

37 ՌՊՊԿԱ, ֆ. 37837, ց. 4, գ. 341, թ. 871։

38 Նույն տեղում։

կանն էր։ 1941 թ. հունվարի սկզբներին բանակի գեներալ Գ. Կ. Ժուկովը առաջ քաշվեց Գլխավոր շտաբի պետի՝ ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի տեղակալի պաշտոնում։ Փետրվարին նրա փոխարեն օկրուգի հրամանատար նշանակվեց գեներալ-գնդապետ, Խորհրդային Միության հերոս Միխայիլ Պետրովիչ Կիրպոնոսը, օկրուգի ռազմական խորհրդի անդամը կորպուսային կոմիսար Նիկոլայ Նիկոլաևիչ Վաշուգինն էր, հրետանու պետը՝ գեներալ-գնդապետ Նիկոլայ Դիմիտրևիչ Յակովլևը[39]։ Փորձված հրամանատարների հետ միասին Հ. Խ. Բաղրամյանը մասնակցում է օկրուգի տեղամասում պետական սահմանի պաշտպանության և հակառակորդին արժանի հակահարված հասցնելու պլանի մշակմանը, որը որոշ լրացումներից հետո հավանության է արժանանում Գլխավոր շտաբի կողմից։ Դրա իրականացումը բավականաչափ բարդ էր, քանի որ օկրուգի տեղամասում պետական սահմանի 940 կիլոմետրանոց տարածքում տեղաբաշխված 5-րդ, 6-րդ, 26-րդ և 12-րդ բանակների ուժերը բավարար չէին դրա համար։ Ուստի եռանդուն աշխատանքներ են իրագործվում օկրուգը նոր զորամասերով համալրելու, պետական սահմանի պաշտպանությունն ուժեղացնելու ուղղությամբ։ Սկսեցին շտապ կերպով կազմակերպվել հրետանային հակատանկային 5 բրիգադ, օդադեսանտային կորպուս, անցկացվել զանազան տիպի զորավարժություններ և այլն։ Գարնան սկզբներից օկրուգի հետախուզական բաժնում սկսվեցին մեկը մյուսից տագնապալի տեղեկություններ ստացվել։ Սահմանի մյուս կողմում գերմանացիները բազմաթիվ դաշտային օդանավակայաններ էին կառուցում, անցկացնում երկաթուղու ճյուղեր, ավտոտրանսպորտի համար ճանապարհները մոտեցնում սահմանին։ Ապրիլից սկսվեցին գերմանական զորքերի տեղաշարժերը։ Ամեն օր Ուկրաինայի սահմանամերձ շրջաններ էին

---

39 1941 թ. հունիսին՝ պատերազմն սկսվելուց մի քանի օր առաջ օկրուգի հրետանու պետ նշանակվեց Խորհրդային Միության հերոս, գեներալ-լեյտենանտ Մ. Ա. Պարսեղովը։

ժամանում գերմանական զորքով և ռազմական հանդերձանքով մինչև երկու հարյուր զնացքկազմ, ավելի հաճախակի էին դառնում գերմանական ինքնաթիռների կողմից պետական սահմանի խախտման դեպքերը։ Սակայն վերջիններս ցած գցելու հրաման չկար։ Դրությունը ավելի ու ավելի տագնապալից էր դառնում, որը ստիպում էր օկրուգի հրամանատարությանը ուժեղացնել պաշտպանության զորքերի մարտական կազմը և ընդհանուր պատրաստությունը[40]։ Սակայն դա քիչ էր, քանի որ զորքերում զգացվում էր զենքի, մարտական տեխնիկայի, տրանսպորտային ու կապի միջոցների պակաս։ Ավելի դժվար էր հրամանատարական գործը։ Դրա վրա խիստ բացասաբար էին ազդել 1937—1940 թթ. ստալինյան անհիմն բռնությունները, որոնց զոհ էին գնացել շուրջ 40 հազար զինվորականներ, որոնց թվում ԽՍՀՄ առաջին 5 մարշալներից 3-ը, 5 առաջին կարգի բանակային հրամանատարներից (հավասարազոր է բանակի գեներալի կոչման)՝ 4-ը, մեկ առաջին բանակային կոմիսարից՝ 1-ը, 2 առաջին կարգի նավատորմի ֆլագմանից (հավասար է Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչման)՝ 2-ը, 9 երկրորդ կարգի բանակային հրամանատարներից (հավասար է գեներալ-գնդապետի կոչման)՝ 9-ը, 57 կոմկորներից (հավասար է գեներալ-լեյտենանտի կոչման)՝ 50-ը, 186 վոմդիվներից (հավասար է գեներալ-մայորի կոչման)՝ 154-ը, 656 գնդապետներից՝ 401-ը և այլն[41]։ Նրանց թվում էին նաև Հովհ. Բաղրամյանին քաջածանոթ Ի. Է. Յակիրը, Ի. Պ. Ուբորևիչը, Գ. Դ. Գայը (Հայկ Բժշկյան), Ա. Պ. Մելիք-Շահնազարովը և ուրիշներ։ Զգալի կորուստներ էր կրել նաև Կիևի հատուկ զինվորական օկրուգը։ «Հիշում եմ, 1940 թ. մայիսին մեր օկրուգի զորքերում հր-

---

[40] Ի. Ք. Բաղրամյան, *Այսպես է սկսվել պատերազմը*, Ե., 1975, էջ 88—90։

[41] *Տվյալները վերցված են՝* 50 лет Вооруженных Сил СССР, М., 1968; История второй мировой войны 1939—1945, т. 2, М., 1974; Советская военная энциклопедия, т. 1—8, М., 1976—1980; Военный энциклопедический словарь, М., 1984 *աշխատություններից։*

բամանատարական ու տեխնիկական կազմի 30 հազարից ավելի մարդու պակաս կար,— գրել է Հ. Խ. Բաղրամյանը,— 1941 թվականին մենք մեծ հույսեր էինք դնում ռազմական ուսումնարանների մայիսյան շրջանավարտների վրա։ Բայց երիտասարդ լեյտենանտները զորամասեր ընկան պատերազմը սկսվելուց ընդամենը մի քանի օր առաջ և, իհարկե, չըհասցրին ընտելանալ, ճանաչել իրենց ենթականերին... Ավելի դժվար պրոբլեմը, բոլոր տեսակի զենքերով, հատկապես նոր տիպի տանկերով, ինքնաթիռներով և հրետանային համակարգերով զորքերը հագեցնելն էր... Մեր օկրուգի զորքերում նորագույն տեսակների ինքնաթիռները կազմում էին ինքնաթիռների համակազմի միայն 15 տոկոսը։ Նույնպիսին էր նաև տանկերի վիճակը... Մեր օկրուգի զորքերի բոլոր ցամաքային զորքերի համար հիվանդոտ տեղը տրանսպորտային միջոցներն էին։ Ունեինք ավտոմոբիլների ու տրակտորների անհրաժեշտ քանակի 25—30 տոկոսից ոչ ավելի...»[42]։ Այսպիսի իրավիճակում հունիսի 19-ին Գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Գ. Կ. Ժուկովից հեռագիր ստացվեց՝ ԽՍՀՄ պաշտպանության ժողովրդական կոմիսար, Խորհրդային Միության մարշալ Ս. Կ. Տիմոշենկոյի հրամանի համաձայն Կիևի զինվորական օկրուգում ստեղծել ռազմաճակատային վարչություն և հունիսի 22-ին այն Կիևից փոխադրել Տերնոպոլ։ Հունիսի 21-ի կեսօրին գնդապետ Բաղրամյանը անհրաժեշտ պարտականությունները կատարելուց հետո, ավտոմեքենաների շարասյան գլուխ անցած, ժիտոմիրյան խճուղով ճանապարհ ընկավ դեպի արևմուտք։ Երեկոյան անցան Ժիտոմիրը, իսկ հունիսի 22-ի վաղ առավոտյան դուրս եկան Բրոդիի մոտերքը, որտեղ ականատես եղան գերմանական ինքնաթիռների կողմից քաղաքի մոտ գտնվող օդանավակայանի և վառելանյութի պահեստների ռմբակոծմանը։ Ֆաշիստական ինքնաթիռները խուզող թռիչքներով երկու անգամ

---

42 Ի. Ք. Բաղրամյան, Այսպես է սկսվել պատերազմը, էջ 94—99։

սլացան ավտոշարասյան վրայով՝ գնդակոծելով այն։ Բաղրամյանը և նրա զինակիցները համոզված էին, որ պատերազմ է սկսվել։ Նշանակված ժամկետից շուտ՝ հունիսի 22-ի առավոտյան Բաղրամյանը իր աշխատակիցների հետ հասավ Տերնոպոլ, որտեղ արդեն գտնվում էր օկրուգի հրամանատարությունը։ Նույն օրը Կիևի հատուկ զինվորական օկրուգի հիման վրա ստեղծվում է Հարավարևմտյան ռազմաճակատը, որի շտաբի պետի տեղակալ և օպերատիվ բաժնի պետ է դառնում գնդապետ Բաղրամյանը։ Պատերազմի հենց առաջին օրվանից ռազմաճակատի համար ծանրագույն բարդ և անբարենպաստ պայմաններում նա խուճապի չմատնվեց և ամենաճգնաժամային պահերին անգամ պահպանեց ինքնատիրապետումն ու մարտական ոգին։ Չնայած երկարատև երթից հոգնած լինելուն, գնդապետ Բաղրամյանը պատերազմի առաջին իսկ օրվանից մխրճվեց գործի մեջ, որը տևեցնդմեջ շարունակվելու էր 1418 օր՝ մինչև 1945 թ. մայիսի 9-ը։

Ինչպես Հարավարևմտյան ռազմաճակատում, այնպես էլ խորհրդա-գերմանական ճակատի մյուս հատվածներում ստեղծվել էր բավականաչափ ծանր իրավիճակ։ Օգտվելով պատերազմի նախօրյակին խորհրդային զեկավարության թույլ տված անհեռատես սխալներից, հանկարծակի և ուխտադրուժ հարձակման հետևանքով ձեռք բերած նախաձեռնությունից, ինչպես նաև ավիացիայի և տանկերի թվական գերակշռությունից, գերմանաֆաշիստական զորքերը զգալի հաջողությունների հասան։ Հունիսի 22-ին նրանց հաջողվեց 250—300 կմ խորությամբ ռմբակոծել Մոլդավիայի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Մերձբալթյան հանրապետությունների տնտեսական և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող կենտրոնները, ծանր վնաս պատճառել հատկապես օդանավակայաններում գտնվող խորհրդային ավիացիային(միայն հունիսի 22-ին ֆաշիստները ոչնչացրեցին խորհրդային շուրջ 1200 ինքնաթիռ, որից շուրջ 900-ը գետնի վրա, միայն Արևմտյան ռազմաճակատը առաջին օրը կորցրեց 738 ինքնա-

թիռ)[43] և սրընթաց կերպով շարժվել դեպի արևելք՝ Լենինգրադի, Մոսկվայի և Կիևի ուղղություններով։ Ծանր վտանգ կախվեց երկրի վրա։ Խորհրդային կառավարությունը, գնահատելով ստեղծված դրությունը, հունիսի 22-ին հանդես եկավ հայտարարությամբ, որով բացահայտեց հիտլերյան զավթիչների նենգ նպատակը, ցույց տվեց հայրենիքին սպառնացող վտանգի լրջությունը։ Ժողովրդին կոչ արվեց ոտքի կանգնել՝ պաշտպանելու հայրենիքը, Հայրենական պատերազմ սկսել երկիր ներխուժած ֆաշիստական զավթիչների դեմ։ Նույն օրը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը հրամանագիր ընդունեց երկրի մերձճակատային շրջաններում պատերազմական դրություն հայտարարելու և այդ կապակցությամբ զինվորական ու քաղաքացիական իշխանությունների իրավասությունների ու խնդիրների մասին։ Միաժամանակ հրամանագիր ընդունվեց 1905—1918 թթ. ծնված քաղաքացիներին բանակ զորակոչելու վերաբերյալ[44]։ Հունիսի 23-ին ԽՍՀՄ ժողկոմխորհը և Համկ(բ)կ Կենտկոմը որոշում ընդունեցին ԽՍՀՄ Զինված ուժերի գլխավոր հրամանատարության Զորակայան ստեղծելու մասին։ 1941 թ. օգոստոսի 8-ից ռազմավարական ղեկավարման այդ բարձրագույն մարմինը սկսեց կոչվել Գերագույն գլխավոր հրամանատարության Զորակայան։ Հունիսի 29-ին ԽՍՀՄ ժողկոմխորհը և Համկ(բ)կ Կենտկոմն ընդունեցին ղեկավար հրահանգ՝ ուղղված մերձճակատային մարզերի կուսակցական և խորհրդային կազմակերպություններին, որտեղ շարադրվեց խորհրդային ժողովրդի պայքարի ծրագիրը[45]։ Հունիսի 30-ին ստեղծվեց պատերազմի ժա-

---

[43] Տե՛ս 50 лет Вооруженных Сил СССР, с. 259; Великая Отечественная война Советского Союза 1941—1945, Краткая история, М., 1970, с. 60; История второй мировой войны 1939—1945, т. 4, М., 1975, с. 35.

[44] Великая Отечественная война Советского Союза. Краткая история, с. 70.

[45] Великая Отечественная война 1941—1945. Энциклопедия, М., 1985, с. 242.

մանակաշրջանի արտակարգ մարմին՝ ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտե՝ Համկ(բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահ Ի. Վ. Ստալինի նախագահությամբ. Պաշտպանության պետական կոմիտեն իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ իշխանությունը երկրի ներսում։ Բոլոր քաղաքացիները, կուսակցական, խորհրդային, կոմերիտական և զինվորական մարմինները պարտավոր էին անվերապահորեն կատարել Պաշտպանության պետական կոմիտեի բոլոր որոշումներն ու ցուցումները։ Հուլիսի 3-ին ռադիոյով ժողովրդին դիմեց Ի. Վ. Ստալինը։ 1941 թ. հուլիսի 10-ին Ի. Վ. Ստալինը նշանակվեց Զորակայանի նախագահ, հուլիսի 19-ին՝ պաշտպանության ժողկոմ, իսկ օգոստոսի 8-ից՝ ԽՍՀՄ զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար[46]: Նույն թվականի հուլիսի 30-ից Գ. Կ. Ժուկովի փոխարեն գլխավոր շտաբի պետ է նշանակվում Խորհրդային Միության մարշալ Բորիս Միխայլովիչ Շապոշնիկովը, սակայն Գ. Կ. Ժուկովը մնաց Զորակայանի անդամ, իսկ ավելի ուշ՝ 1942 թ. օգոստոսից՝ ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի առաջին տեղակալ և Գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալ։

1941 թ. հուլիսի 10-ին Հյուսիսարևմտյան, Արևմտյան և Հարավարևմտյան ռազմավարական ուղղություններում գլխավոր հրամանատարներ նշանակվեցին Խորհրդային Միության մարշալներ Կ. Ե. Վորոշիլովը, Ս. Կ. Տիմոշենկոն, Ս. Մ. Բուդյոննին. 1941 թ. սեպտեմբերին Հարավարևմտյան ուղղության գլխավոր հրամանատար դարձավ Ս. Կ. Տիմոշենկոն[47]:

Համկ(բ)Կ Կենտկոմի, Խորհրդային կառավարության, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության, Պաշտպանության պետական կոմիտեի և Զորակայանի կոչերը, որոշումները, ղեկավար հրահանգներն ու հրամանները կարևոր նշանակություն ունեցան դերմանաֆաշիստական զավթիչների

---

[46] Советская военная энциклопедия, т. 7, М., 1979, с. 516.

[47] Военный энциклопедический словарь, с. 195.

դեմ խորհրդային ժողովրդի պայքարը կազմակերպելու և ղեկավարելու գործում։

Պատերազմի հենց առաջին օրերին ֆաշիստական ընտիր բանակները, որ մինչ այդ հեշտ հաղթարշավ էին անցել Արևմտյան Եվրոպայի երկրներում, իրենց համար անսպասելի հանդիպեցին խորհրդային զինվորների հերոսական դիմադրությանը և հսկայական կորուստներ կրեցին։ 1941 թ. ամռանը և աշնանը խորհրդային զորքերը հյուսիսային, կենտրոնական և հարավային ուղղություններով մղում էին համառ պաշտպանական մարտեր, հակառակորդին պատճառում կենդանի ուժի և տեխնիկայի ղղալի կորուստներ, դանդաղեցնում նրա առաջխաղացումը, դրանով իսկ վիժեցնում կայծակնային հարվածով մի քանի շաբաթում ԽՍՀՄ-ը խորտակելու Հիտլերի սին պլանները։ 1941 թ. սահմանային մարտերում, Անդրբալթիկայի, Մերձբալթիկայի, Բելոռուսիայի, Ուկրաինայի և Մոլդովայի տարածքներում ծավալված արյունահեղ կռիվներում խորհրդային զորքերն արյունաքամ արեցին գերմանական բանակի հարվածային զորախմբերին։ Սակայն ուժերն անհավասար էին։ Հյուսիսարևմտյան ուղղությամբ հակառակորդին հաջողվեց դուրս գալ Լենինգրադի մերձակա մատույցները և սեպտեմբերի 8-ին կտրել քաղաքը երկրի հետ կապող ցամաքային ուղիները։ Սկսվեց Լենինգրադի հերոսական պաշտպանությունը, որը տևեց շուրջ 900 օր։ Գլխավոր իրադարձությունները ծավալվեցին Մոսկվայի ուղղությամբ, որտեղ 1941 թ. հուլիսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը Սմոլենսկի մոտ տեղի ունեցած ճակատամարտում խորհրդային զորքերը հմուտ հակահարվածներով ստիպեցին հակառակորդին առաջին անգամ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում անցնել պաշտպանություն։ Դա հնարավորություն տվեց խորհրդային հրամանատարությանը ժամանակ շահել Մոսկվայի պաշտպանությունն ամրապնդելու և հակառակորդին ջախջախելու համար։ Այդ մարտերում ծնվեց խորհրդային գվարդիան։ Լարված բնույթ էին կրում խորհրդային զորքերի մարտական գործողությունները նաև հարավարև-

մության ուղղությամբ։ Խորհրդային զորքերը ծանր մարտերով ստիպված էին նահանջել դեպի արևելք՝ միաժամանակ թշնամու զորքերին պատճառելով մարդկային և նյութական մեծ չափերի կորուստներ։ Հատկապես արյունահեղ էր Դուբնոյի, Լուցկի, Ռովնոյի մոտ տեղի ունեցած պատերազմի առաջին շրջանի խոշորագույն տանկային ճակատամարտը, որը ծավալվեց 1941 թ. հունիսի վերջերին. ճակատամարտին երկու կողմից մասնակցում էին ավելի քան 1500 տանկ[48]։ Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերին հաջողվեց ռազմավարական այդ կարևոր ուղղությամբ մի ամբողջ շաբաթ կասեցնել գերմանաֆաշիստական 1-ին տանկային խմբավորման (հրամանատար՝ գեներալ Էվալդ Կլեյստ) առաջխաղացումը՝ ծանր կորուստներ պատճառելով նրան։ Դա հնարավորություն տվեց խորհրդային հրամանատարությանը ժամանակ շահել և շրջապատման վտանգից դուրս քաշել զորքերի լավագույն խմբավորումը, ինչպես նաև նախապատրաստվել պաշտպանության Կիևի մատույցներում։

Գնդապետ Հ. Խ. Բաղրամյանը անմիջական մասնակցություն ունեցավ այդ մարտերի կազմակերպմանն ու անցկացմանը, անձամբ եղավ տանկային ու մեքենայացված զորամասերում, մոտիկից օգնելով տանկիստներին։ Ճակատային բարդ պայմաններում տեղի ունեցող ռազմական խորհրդի նիստերի ժամանակ նա օպերատիվ-մարտավարական տեսակետից ճիշտ զեկույցներ էր տալիս, որոնք հավանության էին արժանանում ոչ միայն ռազմաճակատի հրամանատարության, այլև հունիսյան այդ ծանր օրերին ռազմաճակատում գտնվող Գ. Կ. Ժուկովի կողմից։ Հետագայում վերհիշելով հունիսի վերջերին կայացած այդ ծանր մարտերը՝ անվանի զորահրամանատարը անչափ բարձր է գնահատել պատերազմի առաջին օրերի դժվար կացությունների մեջ Բաղրամյանի անձնվեր աշխատանքը. «Պետք է նշել ռազմաճակատի շտա-

---

[48] Ի. Ք. Բաղրամյան, Այսպես է սկսվել պատերազմը, էջ 170։

բի պետ Մ. Ա. Պուրկաևի և ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ, օպերատիվ բաժնի պետ Ի. Ք. Բաղրամյանի մեծ մըտաղգաստությունը և փայլուն կազմակերպական ընդունակությունները, որ հանդես բերվեցին այդ խիստ բարդ իրադրության մեջ, պատերազմի առաջին օրվանից»[49]:

Այնուհետև գնդապետ Բաղրամյանը ակտիվորեն մասնակցել է Կիևի պաշտպանական գործողությանը, որը տեղի է ունեցել 1941 թ. հուլիսի 7-ից մինչև սեպտեմբերի 26-ը և հիմնական նպատակը գերմանաֆաշիստական զորքերի Կիևի ուղղությամբ հարձակման ետմղումն էր։

Գերմանաֆաշիստական հրամանատարությունը հուլիսի վերջերին և օգոստոսի սկզբներին ղգալով, որ չի կարողանում կարճ ժամանակամիջոցում մեծ հաջողությունների հասնել Լենինգրադի և Մոսկվայի ուղղություններում, խոշորամասշտաբ հարձակում սկսեց Կիևի ուղղությամբ՝ ձգտելով օգոստոսի 8-ին գրավել Ուկրաինայի մայրաքաղաքը և հաղթանակի զորահանդես կազմակերպել Կրեշչատիկում։ Սակայն թշնամին շարաչար սխալվում էր։ Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերը դաժան մարտերում ծանր հարվածներ էին հասցնում նրան, ստիպում ամեն մի թիզ հողակտորի համար չափազանց թանկ վճարել։ Կիևի պաշտպանական գործողությունն ընթանում էր 300 կմ լայնություն և շուրջ 600 կմ խորություն ունեցող ընդարձակ տարածքի վրա։ Ռազմաճակատի զորքերը մարտնչում էին բացառիկ ծանր պայմաններում, սակայն թշնամու գերազանցությունը աստիճանաբար բացահայտ էր դառնում, որը ստիպում էր խորհրդային զորքերին աստիճանաբար ետ քաշվել։ Գերմանաֆաշիստական հրամանատարությունը իր «Կենտրոն» զորախմբի ուժերի մի զգալի մասն օգտագործելով Հարավարևմտյան ռազմաճակատի ուղղությամբ, դրանով իսկ հետաձգեց նրանց հարձակումը գլխավոր ուղղությամբ՝ դեպի Մոսկվա։ Դա հնարավորություն տվեց խորհրդային հրամանատարությանը Մոսկվայի մոտ

---

[49] Г. К. Жуков. Воспоминания и размышления, М., 1970, с. 241.

կուտակել ռազմավարական պահեստային նոր ուժեր, որոնք հետագայում վճռական նշանակություն ունեցան Մոսկվայի ճակատամարտի ժամանակ։ Հուլիս-օգոստոսյան այդ թեժ մարտերում գնդապետ Հ. Խ. Բաղրամյանը պարտաճանաչ կատարում էր ռազմաճակատի հրամանատարության առաջադրանքները, հարկ եղած դեպքում լինում ճակատամարտի ամենավտանգավոր հատվածներում, տեղերում զգալի օգնություն ցույց տալիս զորամիավորումների հրամանատարներին։ Հայրենիքը բարձր գնահատեց գնդապետ Հ. Խ. Բաղրամյանի ծառայությունները և ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի 1941 թ. օգոստոսի 12-ի որոշմամբ նրան շնորհվեց գեներալ-մայորի կոչում[50]։ Իսկ մի քանի օր անց ռազմաճակատի շտաբի կուսակցական կազմակերպությունը գեներալ-մայոր Հ. Խ. Բաղրամյանին ընդունեց կուսակցության շարքերը[51]։

Օգոստոսի երկրորդ կեսերի սկզբին դրությունը Հարավարևմտյան ռազմաճակատում կայունացավ։ Ֆաշիստական հրամանատարության բոլոր մտադրությունները՝ ոչնչացնելու Դնեպրի արևմտյան ափին մարտնչող խորհրդային զորքերին, վիժեցվեց վերջիններիս հերոսական պաշտպանության և պատասխան հարվածների շնորհիվ։ Գերմանական «Հարավ» բանակների խմբի զգալի ուժերի ավելի քան մեկ ամիս շարունակվող անընդմեջ գրոհները Կիևի տակ չհասան վճռական հաջողության և ավարտվեցին լիակատար ձախողմամբ[52]։ Սակայն ռազմական գործողությունների հետագա զարգացումն ընթանում է ի վնաս Կիևի պաշտպանների, քանի որ Հարավարևմտյան ռազմաճակատի աջ թևում գործող Բրյանսկի ռազմաճակատի զորքերը չեն կարողանում կասեցնել գեներալ-գնդապետ Հայնց Վիլհելմ Գուդերիանի տանկային դիվիզիաների հարձակումը դեպի Կիևի հյուսիսարևելյան թիկունքը։ Նրան ընդառաջ են գնում գեներալ Է. Կլեյստի տանկային զորքերը։ Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերի համար

---

[50] «Правда», 1941, 13 августа.

[51] И. Х. Баграмян. Мои воспоминания, с. 300.

[52] Հ. Փ. Բաղրամյան, *Հերոս քաղաքը Դնեպրի ափին*, Ե., 1967, էջ 152։

ստեղծվում է շրջապատման ակնհայտ սպառնալիք։ Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ ռազմաճակատի հրամանատարությունը դիմում է Զորակայանին՝ խնդրելով թույլ տալ զորքերը հետ քաշել թիկունքային բնագծեր։ Սակայն Զորակայանը կտրուկ մերժում է ժամանակին արված այդ խելացի առաջարկությունը։ Դրությունը ժամառժամ բարդանում էր։ Գործին խառնվում է Հարավարևմտյան ուղղության գլխավոր հրամանատար, Խորհրդային Միության մարշալ Ս. Մ. Բուդյոննին։ Նա հեռագիր է ուղարկում Զորակայան՝ Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերին սպառնացող շրջապատման վտանգի մասին, խնդրում թույլ տալ զորքերը հետ քաշել դեպի արևելք՝ թիկունքային բնագծեր։ Սակայն մարշալի միջնորդությունը նույնպես մերժվեց։ Դեռ ավելին, նրան սեպտեմբերի սկզբներին հեռացրեցին Հարավարևմտյան ուղղության գլխավոր հրամանատարի պաշտոնից։ Նրա փոխարեն այդ պաշտոնում նշանակվեց Խորհրդային Միության մարշալ Ս. Կ. Տիմոշենկոն։ Այդ ժամանակ իրար ընդառաջող Գուդերիանի և Կլեյստի տանկային խմբերի միջև մնացել էր մի քանի տասնյակ կիլոմետր. թշնամու օղակը ամեն րոպե կարող էր փակվել[53]։

Հարավարևմտյան ուղղության զորքերի գլխավոր հրամանատարության շտաբը գտնվում էր Պոլտավա քաղաքում, իսկ Հարավարևմտյան ռազմաճակատի շտաբը սեպտեմբերի 1-ին տեղափոխվեց Կիևից արևելք՝ Պիրյատին քաղաք։ Հաջորդ օրը Ս. Կ. Տիմոշենկոն իր մոտ է կանչում գեներալ-մայոր Հ. Ա. Բաղրամյանին՝ նրանից մանրակրկիտ տեղեկություն ստանալու համար։ Սակայն, երբ Բաղրամյանը ներկայացավ մարշալին և սկսեց զեկուցել ռազմաճակատի ծանր վիճակի մասին, լուր ստացվեց Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերի, այդ թվում Կիևի ամրացված շրջանի և ռազմաճա-

---

[53] Միայն սեպտեմբերի 15-ին Գուդերիանի և Կլեյստի տանկերը, որոնք Կիևը շրջանցել էին հյուսիսից և հարավից, վերջապես միացան Լոխվիցի շրջանում։

կատի հրամանատարական կետի շրջապատված լինելու մասին։ Ձեկուցն ավարտելուց հետո Բաղրամյանը թույլտվություն է խնդրում՝ ինքնաթիռով ռազմաճակատի շտաբ վերադառնալու համար։ Մարշալ Տիմոշենկոն, մտահոգված լինելով ռազմաճակատի զորքերը շրջապատման կաթսայից դուրս բերելու պատճառով, համաձայնվեց, միաժամանակ տալով բանավոր հրաման. «Ձեկուցեք, ընկե՛ր Բաղրամյան, գեներալ Կիրպոնոսին, որ ստեղծված իրավիճակում Հարավարևմտյան ուղղության ռազմական խորհուրդը, չունենալով անհրաժեշտ ռեզերվներ, Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերի համար միակ նպատակահարմար որոշումն է համարում բոլոր ուժերով հետ քաշվելը։ Ռազմաճակատի հրամանատարին հայտնեք իմ բանավոր հրամանը՝ թողնելով Կիևի ամրացված շրջանը և ոչ մեծ ուժերով պաշտպանվելով Դնեպր գետի բնագծով, ռազմաճակատի գլխավոր ուժերով անհապաղ հետ քաշվել դեպի Պայոլ գետով անցնող թիկունքային պաշտպանական բնագիծը»[54]։ Արագընթաց ռմբակոծիչ ինքնաթիռով, ամեն րոպե վտանգի ենթարկելով կյանքը, Բաղրամյանը բարեհաջող տեղ է հասնում և ռազմաճակատի հրամանատար գեներալ-գնդապետ Կիրպոնոսին հաղորդում մարշալի հրամանը։ Սակայն վերջինս ավելի համոզված լինելու՝ հետ քաշվելու և Կիևը թողնելու բանավոր հրամանի իսկության մեջ, հեռագրում է Ի. Վ. Ստալինին։ Միայն սեպտեմբերի 18-ի գիշերը Ձորակայանից ստացվեց ռադիոգիր, որով թույլատրվում էր թողնել Կիևը։ Սեպտեմբերի 19-ին Կիևի վերջին պաշտպանները թողեցին քաղաքը։ Այժմ հիմնական խնդիրը շրջապատման օղակից դուրս գալն էր, որն արդեն համարյա անհնարին էր։ Լոխվիցի շրջանում հակառակորդի տանկային ուժերի հանդիպման հետևանքով Կիևից արևելք ընկած ընդարձակ տարածության վրա շրջապատման էին ենթարկվել ռազմաճակատի 5-րդ, 37-րդ, 26-րդ բանակների զգալի մասը, մասամբ նաև 21-րդ և 38-րդ բանակների զորքերը։ Նրանց մի մասին հաջողվեց մարտերով դուրս պրծնել մահվան օղա-

---

[54] Նշվ. աշխ., էջ 228—229։

կից, իսկ շատ-շատերը, որոնց թվում նաև ռազմաճակատի հրամանատար, գեներալ-գնդապետ Մ. Պ. Կիրպոնոսը, շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Վ. Ի. Տուպիկովը, ռազմական խորհրդի անդամ, դիվիզիոնային կոմիսար Ե. Պ. Ռիկովը հերոսաբար զոհվեցին։ Շատ-շատերը գերի վերցվեցին թշնամու կողմից։

Շրջապատման օղակից դուրս եկողների մեջ էր նաև գեներալ-մայոր Հ. Խ. Բաղրամյանը։ Նա իր շուրջն էր համախմբել ռազմաճակատի շտաբի ողջ մնացած աշխատողներին, պահակային ջոկատներին և շրջապատման մեջ մնացած ուրիշ սպաների և զինվորների, ստեղծել 1000 հոգանոց մի զորաջոկատ և հմտորեն մարտերով այն դուրս բերել ծուղակից և ներկայացել Հարավարևմտյան ուղղության գլխավոր հրամանատարության շտաբ։ Այդ սխրանքի համար գեներալ Բաղրամյանը մարշալ Ս. Կ. Տիմոշենկոյի՝ 1941 թ. նոյեմբերի 6-ի թիվ 2 հրամանով պարգևատրվեց մարտական Կարմիր դրոշի շքանշանով[55]. դա Բաղրամյանի առաջին մարտական պարգևն էր Հայրենական մեծ պատերազմում։

Այսպիսով, Կիևի պաշտպանական գործողության ընթացքում Հ. Խ. Բաղրամյանը ռազմաճակատի շտաբի օպերատիվ բաժնի պետի պարտականությունները մարտական դժվարին պայմաններում հաջողությամբ կատարելու և այդ ընթացքում ցուցաբերած տոկունության, քաջության և մարտավարական բարձր կարողությունների համար արժանանում է գեներալ-մայորի կոչման, ընդունվում կուսակցության շարքերը, արժանանում կառավարական առաջին պարգևին։

Ավելի քան երկուսուկես ամիս տևած գործողությունը կարևոր դեր խաղաց «կայծակնային պատերազմի» գերմանաֆաշիստական պլանների ձախողման գործում, թույլ տվեց, որ հակառակորդը ընթացքից դրավի Կիևը և դժվարացրեց նրա հարձակումը Մոսկվայի ուղղությամբ։ Սակայն այդ ամենը ձեռք բերվեց հսկայական կորուստների գնով։ Հարավ-

---

55 Ռուսաստանի դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՌԴ ՊՆԿԱ), ֆ. 33, ց. 682524, գ. 419, թ. 2։

արևմտյան ռազմաճակատը 1941 թ. հուլիսի 7—սեպտեմբերի 26-ը իր 627000 զորքից կորցրեց 585598 մարդ[56]:

Կիևի պաշտպանական գործողության ավարտից հետո Զորակայանը Հարավարևմտյան ռազմաճակատի հրամանատարությունը դրեց Խորհրդային Միության մարշալ Ս. Կ. Տիմոշենկոյի և նրա շտաբի վրա: Շտաբի պետ է նշանակվում գեներալ-լեյտենանտ Պավել Իվանովիչ Բոդինը, նրա տեղակալ՝ օպերատիվ բաժնի պետ գեներալ-մայոր Հ. Խ. Բաղրամյանը: Ռազմաճակատի զորքերը սեպտեմբերի երկրորդ կեսերին ամրանում են Բելոպոլյի—Լեբեդին—Շիշակի բնագծում և կանգնեցնում դեպի Խարկով շարժվող հիտլերյան զորքերի ճանապարհը: Հարավարևմտյան ռազմաճակատի շտաբի վրա էր դրված նաև Հարավային ռազմաճակատի զորքերի կառավարման խնդիրը: Շրջապատումից դուրս եկած, ինչպես նաև նոր մարդկանցով համալրված շտաբը կարճ ժամանակամիջոցում վերականգնեց իր աշխատունակությունը և անմիջապես գործի լծվեց: «Գործը նրանով էր հետաքրքրվում,— գրում է Բաղրամյանը,— որ ռազմաճակատի ապարատի ղեկավարներից շատերը նախկին աշխատանքից ինձ լավ ծանոթ էին: Ռազմաճակատի հրամանատարի տեղակալ էր նշանակված մեր 26-րդ բանակի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ֆեոդոր Յակովլևիչ Կոստենկոն, հրետանու գծով հրամանատարի տեղակալ՝ գեներալ-լեյտենանտ Մ. Ա. Պարսեղովը, ռազմաօդային ուժերի հրամանատար՝ ավիացիայի գեներալ-մայոր Ֆ. Յա. Ֆալալաևը, զրահատանկային զորքերի գծով ռազմաճակատի հրամանատարի օգնական՝ գեներալ-լեյտենանտ Վ. Ս. Տամրուչին, քաղվարչության պետ՝ բրիգադային կոմիսար Ս. Ֆ. Գալաջևը և ուրիշներ...»[57]:

Չնայած նահանջի ծանր օրերի դառն հուշերին, գեներալ-մայոր Բաղրամյանը և նրա զինակիցները ոչ մի վայրկյան

---

[56] Гриф секретности снят. Потери Вооруженных Сил СССР в войнах, боевых действиях и военных конфликтах. Статистическое исследование, М., 1993, с. 166—167.

[57] Ի. Քրիստոֆորի Բաղրամյան, *Այսպես է սկսվել պատերազմը*, էջ 506։

անգամ չէին կորցնում թշնամու դեմ հաղթանակի հավատը և ամեն ինչ անում էին դրա համար։

Հարկադրական նահանջը մեծ փորձությունների դաս եղավ ինչպես Բաղրամյանի, այնպես էլ նրա զինակիցների համար։ Նրանք լավ էին հասկանում, որ նահանջի պատճառը ոչ թե իրենց թույլ տված վրիպումներն էին, այլ հակառակորդի ուժերի մեծ գերակշռությունը, տանկային միավորումների առավել շարժունությունը, օդային ուժերում ունեցած առավելությունը։ Գերմանական զորքերի ժամանակավոր հաջողության «գաղտնիքը» կռահելով հանդերձ՝ Բաղրամյանն ուշիուշով խորամուխ է լինում օպերատիվ-մարտավարական տրվյալների մեջ, ուսումնասիրում դրանք և հանգում այնպիսի եզրակացությունների, որոնք անսպասելի էին հակառակորդի համար և նրան կանգնեցնում էին փակուղու առաջ։ Դա փայլուն կերպով դրսևորվեց Ռոստովյան գործողության ժամանակ[58]։

Սմոլենսկի և Կիևի մոտ դժվարին հաղթանակներ տանելուց հետո գերմանաֆաշիստական զորքերը վերսկսում են իրենց հարձակողական գործողությունները «Կենտրոն» և «Հարավ» ուղղություններով։ Սեպտեմբերի 30-ից սկսվում է պատերազմի առաջին շրջանի ամենախոշոր ճակատամարտերից մեկը՝ Մոսկվայի ճակատամարտը։ Գուդերիանի տանկային զորախումբը արշավում է Մոսկվայի ուղղությամբ։ Հիտլերը նպատակ էր դրել մինչև նոյեմբերի 7-ը գրավել ԽՍՀՄ մայրաքաղաքը և այդ օրը զորահանդես կազմակերպել Կարմիր հրապարակում։ Հարձակումը շարունակվեց նաև Հարավարևմտյան և Հարավային ռազմաճակատների ուղղությամբ։ Գեներալ Կլեյստի զորքերին հաջողվեց հարավում ճեղքել 9-րդ բանակի գոտին և հոկտեմբերի 17-ին գրավել Ազովի ծովի ափերին գտնվող Տագանրոգ քաղաքը՝ սպառնալիք ստեղծելով Դոնի Ռոստովի համար։ Մարշալ Տիմոշենկոն գեներալներ Բոդինի և Բաղրամյանի հետ մշակում էր ֆաշիստական զորքերի

---

58 Գ. Բ. Զարիբջանյան, Ա. Պ. Սիմոնյան, *Մարշալ Բաղրամյան*, էջ 14։

առաջխաղացումը կասեցնելու և նրան հակահարված հասցնելու պլան, որն իրագործվեց նոյեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 2-ն ընկած ժամանակաշրջանում։ Բաղրամյանն ակտիվորեն մասնակցում է նաև այդ գործողության իրականացման ընթացքում զորքերի ղեկավարման աշխատանքներին։ Հարավային ռազմաճակատի երեք բանակներ նոյեմբերի 17-ին անցնում են հակահարձակման՝ նպատակ ունենալով ջախջախել գեներալ Կլեյստի 1-ին տանկային բանակը, որը բավականաչափ ուժեղացված էր «Հարավ» բանակների խմբի այլ զորամիավորումներով։ Նոյեմբերի 20-ին հակառակորդը, օգտագործելով տանկերի և ավիացիայի նկատմամբ ունեցած իր բացահայտ գերակշռությունը, կոտրեց Դոնի Ռոստովը պաշտպանող զորքերի համառ դիմադրությունը և հաջորդ օրը գրավեց այն։ Սակայն մշակված պլանի համաձայն, նոյեմբերի 27-ին Հարավային ռազմաճակատի զորքերը հյուսիսից և արևելքից միաժամանակ հակառակորդին հասցրեցին հզոր հակահարված և երկու օր անց՝ նոյեմբերի 29-ին, ազատագրեցին Դոնի Ռոստովը։ Ձարգացնելով հաջողությունը, ռազմաճակատի զորքերը հիտլերականներին շպրտեցին Միուս գետից այն կողմ։ Թշնամու քթի տակ ամուր փակվեց Կովկասի դարպասը։ Գերմանաֆաշիստական զորքերը կրեցին ծանր կորուստներ։ Միայն հակահարձակման ընթացքում Հարավային ռազմաճակատի զորքերը գրավեցին 154 տանկ, 8 զրահամեքենա, 244 հրանոթ, 93 ականանետ, 1455 ավտոմեքենա և այլ մարտական տեխնիկա[59]։

Ռոստովյան գործողությունը երկրի ռազմավարական պաշտպանության ընթացքում փայլուն կերպով անցկացված հակահարձակումներից մեկն էր, որի շնորհիվ ոչ միայն խոշոր պարտություն հասցվեց գերմանական 1-ին տանկային բանակին և «Հարավ» բանակախմբի մյուս զորքերին, այլև այն Դոնի Ռոստովի տակ կաշկանդեց «Հարավ» բանակախմբի գրեթե բոլոր ուժերը, որը հնարավորություն չտվեց գեր-

59 Ի. Ք. Բաղրամյան, Այսպես է սկսվել պատերազմը, էջ 621։

մանական հրամանատարությանը դրա հաշվին ուժեղացնել Մոսկվայի տակ գործող իր ուժերին։ Դոնի Ռոստովի մոտ տարած հաղթանակը մեծ չափով նպաստեց Մոսկվայի ճակատամարտի հաղթական ելքին։

Ռոստովյան գործողության ժամանակ գեներալ Բաղրամյանի դրսևորած զորավարական հմտությունը անկասկած չմընաց գլխավոր հրամանատարության կողմից, որը նրան ժամանակավորապես նշանակեց գեներալ-լեյտենանտ Ֆ. Յա. Կոստենկոյի գլխավորած ռազմաճակատային օպերատիվ զորախմբի շտաբի պետ։ Զորախմբի մեջ մտնում էին 2 հրաձգային, 3 հեծյալ դիվիզիա, 1 մոտոհրաձգային, 1 տանկային բրիգադ և ուժեղացման համար տրված այլ զորամասեր։ Կոստենկոյի շտաբի վրա միաժամանակ դրված էր Հարավարևմտյան ռազմաճակատի աջ թևի՝ 3-րդ և 13-րդ բանակների մարտական գործողությունների ղեկավարությունը։ Օպերատիվ խումբը գործելու էր Մոսկվայից հարավ՝ Ելեցի ուղղությամբ։

Ինչպես հայտնի է, 1941 թ. դեկտեմբերի 5-ին Արևմտյան, Կալինինի, Բրյանսկի ռազմաճակատների զորքերը հակահարձակման անցան Մոսկվայի մոտ, որի հետևանքով հակառակորդը ետ շպրտվեց դեպի արևմուտք 100—150 կմ։ Մոսկովյան հարձակողական գործողության ընթացքում դեկտեմբերի 6—16-ը իրականացվեց Մոսկվայի ճակատամարտի բաղկացուցիչ մասը կազմող Ելեցյան գործողությունը, որի պլանի մշակման և իրականացման գործին ակտիվ մասնակցություն ունեցավ գեներալ-մայոր Բաղրամյանը։ Գործողության հետևանքով Հարավարևմտյան ռազմաճակատի աջ թևի զորքերը մարտերով առաջ շարժվեցին Ելեցի ուղղությամբ և դեկտեմբերի 9-ին քաղաքն ազատագրեցին ֆաշիստական զավթիչներից։ Զարգացնելով հարձակումը հյուսիսարևմտյան ուղղությամբ՝ Կոստենկոյի զորախումբը մինչև դեկտեմբերի 16-ը խորացավ ավելի քան 80—100 կմ՝ վերացնելով հակառակորդի երկու դիվիզիա, կործանիչ հարված հասցվեց գերմանական 2-րդ տանկային բանակին, դրանով իսկ զգալի օգնություն ցույց տալով հակահարձակման անցած Արևմտյան

ռազմաճակատի ձախ թևի զորքերին, որոնք կատարում էին Մոսկվայի ճակատամարտում հիմնական խնդիրը։ Ելեցյան գործողության բնորոշ առանձնահատկությունը նրա՝ կարճ ժամանակաընթացքում մշակումն ու իրականացումն էր։ Այն իրագործվեց համեմատաբար արագ թափով, ձմեռային դժվարին պայմաններում և մեծ չափով նպաստեց Մոսկվայի ճակատամարտի հաղթական ընթացքին։

Մոսկվայի տակ տարած հաղթանակի մասին Բաղրամյանը հետագայում գրում է. «Մոսկվայի տակ տարած հաղթանակը Հայրենական մեծ պատերազմի առաջին տարվա ռազմաքաղաքական վճռական իրադարձությունն էր։ Դժվար է գերագնահատել նրա հետևանքները պատերազմի հետագա ընթացքի վրա։ Վերջնականապես տապալվեց կայծակնային պատերազմի հիտլերյան պլանը, պսակազերծվեց հիտլերյան բանակի անհաղթելիության մասին եղած առասպելը։ Աշխարհի ժողովուրդներն առաջին անգամ հավատացին ագրեսորին սանձելու հնարավորությանը»[60]։

Հայրենիքը բարձր գնահատեց գեներալ-մայոր Հ. Խ. Բաղրամյանի զգալի ավանդը ռոստովյան գործողության ժամանակ ձեռք բերված հաջողությունների, ելեցյան գործողության մշակման և այն փայլուն կերպով իրականացնելու մեջ։ ԽՍՀՄ ժողկոմխորհի 1941 թ. դեկտեմբերի 27-ի որոշումով Բաղրամյանին շնորհվեց գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում[61]։ Հենց այդ ժամանակ էլ նա առաջ քաշվեց Հարավարևմտյան ռազմավարական ուղղության շտաբի օպերատիվ վարչության պետի պաշտոնում։ Հարավարևմտյան ուղղության մեջ էին մտնում Բրյանսկի, Հարավարևմտյան և Հարավային ռազմաճակատների զորքերը։ Այդ պաշտոնում գեներալ-լեյտենանտ Հ. Խ. Բաղրամյանը 1942 թ. հունվարի 18—31-ը մասնակցեց Բարվենկովո—Լոզովայա գործողության մշակմանը և իրականացմանը։ Գործողության հիմնական

---

[60] Ի. Ք. Բաղրամյան, *Այսպես է սկսվել պատերազմը*, էջ 677։

[61] «Правда», 1941, 28 декабря.

խնդիրն էր՝ դուրս գալ հակառակորդի Դոնբաս-տագանրոգյան խմբավորման թիկունքը, կտրել դեպի արևմուտք նրա նահանջի ճանապարհը, այնուհետև շրջափակվելով Ազովի ծովի ափերին ոչնչացնել այդ խմբավորման զորքերը։ Գործողությունը իրականացվեց Հարավարևմտյան (հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Ֆ. Յա. Կոստենկո) և Հարավային (հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Ռ. Յա. Մալինովսկի) ռազմաճակատների զորքերի ուժերով, որոնք հարձակման համար կենտրոնացվել էին Խարկովից հարավ՝ Սլավյանսկ, Իզյում, Բալակլեա շրջանում։

Հունվարի 18-ին երկու ռազմաճակատների զորքերն անցան վճռական հարձակման և ձմեռային սաստիկ սառնամանիքների պայմաններում տեղի ունեցած կատաղի մարտերով ճեղքեցին թշնամու խիստ ամրացված պաշտպանությունը։ Զարգացնելով ձեռք բերված հաջողությունը՝ խորհրդային զորքերը հետևակի և հեծելազորի համակցված հարվածներով (գործողությանը մասնակցում էին 6 համազորային բանակ և 3 հեծելազորային կորպուս) հունվարի 23-ին ազատագրեցին Բարվենկովո, իսկ երեք օր անց՝ հունվարի 26-ին՝ Լոզովայա քաղաքները։ Բարվենկովոն թշնամու՝ խոշորագույն բանակային թիկունքային բազան էր, իսկ Լոզովայան՝ կարևորագույն երկաթուղային և խճուղային հանգույց, որը վեր էր ածվել գլխավոր բաշխիչ կայարանի։ Բարվենկովո—Լոզովայա գործողության հետևանքով խորհրդային զորքերը 100կմ ճակատով ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը և դեպի արևմուտք ու հարավ-արևմուտք շարժվեցին 90—100կմ։ Դրանով իսկ վտանգի տակ դրվեց գերմանական դոնբասյան խմբավորման հաղորդակցությունը, այդ ուղղությամբ տեղում կաշկանդվեցին զգալի ուժեր, որոնց հնարավորություն չտրվեց փոխադրելու այլ ուղղություններ։ Թշնամին կրեց մեծ կորուստներ. շարքից հանվեց ավելի քան 35 հազար զինվոր ու սպա, վերցվեց հարուստ ավար։ Սակայն խորհրդային զորքերին չհաջողվեց մինչև վերջ իրականացնել պլանով նախատեսված խնդիրն ամբողջովին, քանի որ չկային

անհրաժեշտ չափով հրետանային և տանկային ուժեր։ Այնուամենայնիվ Բարվենկովո—Լոզովայա գործողությունը, որն իրագործվեց 1942 թ. ձմռանն իրականացված ընդհանուր ռազմավարական հարձակման ընթացքում, իր մտահղացմամբ և կատարման վարպետությամբ խորհրդային զորահրամանատարության կողմից իրականացված գործողություններից ամենահաջողվածներից մեկն էր։ Դրանում իր արժանի ավանդը ուներ Հարավարևմտյան ուղղության շտաբի օպերատիվ վարչության պետ, գեներալ-լեյտենանտ Հ. Ս. Բաղրամյանը։ Հայտնի է, որ նախնական պլանի համաձայն այդ գործողությունը պետք է սկսվեր 1942 թ. հունվարի 12-ին։ Սակայն Բաղրամյանը, մանրակրկիտ ուսումնասիրելով հակառակորդի վերաբերյալ տվյալները և հարձակման հետ կապված մընացած հարցերը, գալիս է այն եզրակացության, որ գործողության սկսվելու օրը պետք է հետաձգել մի քանի օրով։ Մարշալ Տիմոշենկոն հաշվի է առնում Բաղրամյանի փաստարկները և հարձակման օրը նշանակում հունվարի 18-ին։ Ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, Բաղրամյանը չէր սխալվել։

Հետագայում ի մի բերելով Բարվենկովո—Լոզովայա գործողության արդյունքները՝ Բաղրամյանը ինքնաքննադատարար վեր է լուծում այն պատճառները, որոնք Հարավարևմտյան ուղղության զորքերին խանգարեցին լիովին հաղթանակ ձեռք բերել 1942 թ. հունվարին։ Դրանց թվում նա առաջին հերթին նշում է խստաշունչ ձմռան պայմանները, հակառակորդի համեմատությամբ մեկ ու կես անգամ քիչ հրետանի ու տանկեր ունենալը և այլն։ «Դրա հետ չպետք է մոռանալ,— գրում է նա,— որ խոսքը վերաբերում է 1942 թ. ձմռանը, երբ մենք դեռևս խոշոր հարձակողական գործողությունների փորձ չունեինք։ Այն ժամանակ մենք բոլորս սովորում էինք, սովորում էինք դժվարին իրադրության մեջ, երբ թշնամին դիրքավորվում էր նյութական ռեսուրսներով, ինչպես և այն ժամանակաշրջանի համար ժամանակակից պայմաններում մարտական գործողություններ վարելու փոր-

ձով։ Այսպիսի ուսումը չէր կարող չունենալ սխալներ ու վրիպումներ։ Բայց այն ժամանակ մենք ձեռք բերեցինք շատ արժեքավոր փորձ, որը օգտագործվեց մեր հետագա բոլոր հարձակողական օպերացիաներում»[62]։

1942 թ. մարտի սկզբին Զորակայանը Հարավարևմտյան ուղղության ռազմական խորհրդից պահանջեց զեկուցում ներկայացնել Հարավարևմտյան ուղղության օպերատիվ-ռազմավարական իրադրության վերաբերյալ և կարծիքներ հայտնել առաջիկա ամառային մարտական գործողություններում ուղղության զորքերի հնարավոր խնդիրների մասին։ Ուղղության գլխավոր հրամանատար, Խորհրդային Միության մարշալ Ս. Կ. Տիմոշենկոն և ռազմական խորհրդի անդամ Ն. Ս. Խրուշչովը այդ պատասխանատու զեկուցումը կազմելու գործը հանձնարարում են Հարավարևմտյան ուղղության շտաբի օպերատիվ վարչության պետ, գեներալ-լեյտենանտ Հ. Խ. Բաղրամյանին և Հարավարևմտյան ուղղության շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Պ. Ի. Բոդինին։ Առանց ժամանակ կորցնելու՝ մարտական բարեկամներն սկսում են մշակել Զորակայանին ներկայացվելիք զեկուցումը։ «Դա մեծ մասշտաբների և չափազանց պատասխանատու աշխատանք էր,— հետագայում հիշում է Բաղրամյանը,— պետք է ամփոփեինք ձրմեռային կամպանիայի արդյունքները, հանգամանորեն վերլուծեինք սովետա-գերմանական ռազմաճակատում ստեղծվող ընդհանուր իրադրությունը, փորձեինք որոշել, թե հիտլերյան հրամանատարությունն ամառային կամպանիայում ստրատեգիական ինչ ուղղությամբ և ինչ նպատակով կարող էր իրագործել իր գլխավոր հարվածը։ Այդ վերլուծության արդյունքը պետք է պատասխաներ այն հարցին, թե ամռանը ընդհանուր առմամբ ամբողջ սովետա-գերմանական ռազմաճակատում ինչպես կսկսվեն ու կղարգանան հիմնական մարտական գործողությունները։ Դրա հիման վրա պետք է որոշ-

---

62 Ի. Քրիստոֆորի Բաղրամյան, *Այսպես մենք հասանք հաղթանակի*, Ե., 1979, էջ 58։

վեր Հարավարևմտյան ուղղության զորքերի տեղը և դերը այդ մարտական գործողություններում»[63]:

Այնուհետև զեկուցագրում նշվում է, որ ուղղության զորքերի ռազմաճակատի գծի երկարությունը 1000կմ քիչ ավել է և այդ հսկայական տարածության վրա տեղաբաշխված են 74 հրաձգային և 18 հեծյալ դիվիզիաներ, 480 տանկ ու 800 մարտական ինքնաթիռ։ Հրաձգային դիվիզիաների անձնակազմերը համալրված էին կիսով չափ, իսկ երեք դիվիզիա՝ միայն երեք քառորդով։ Զորքերը լավ չէին ապահովված նորագույն տանկերով, հակատանկային ու զենիթային հրանոթներով, ականանետներով ու գնդացիրներով։ Ինքնաթիռների համարյա մեկ երրորդը կազմում էին «Ու—2» տիպի ամենապարզ կառուցվածքի մեկ շարժիչավոր, երկթևանի դանդաղընթացներից, որոնք գլխավորապես օգտագործվում էին հրամանատարության և շտաբների կապը զորքերի հետ ապահովելու համար. մարտական մեքենաների պակասության պատճառով դրանք հաճախակի օգտագործվում էին նաև որպես դիշերային ռմբակոծիչներ։

Զեկուցագրում նշված էր, որ Հարավարևմտյան ուղղության երեք ռազմաճակատների դիմաց հակառակորդն ուներ 64 դիվիզիա, որից 7-ը տանկային, 6-ը մեքենայացված, 3-ը էսէսական, 500 տանկ, 1000-ից ավելի մարտական ինքնաթիռ։ Հակառակորդը Հարավարևմտյան ուղղության զորքերին գերազանցում էր նորագույն տանկերով, հակատանկային հրետանիով և առանձնապես ինքնաթիռների քանակով ու որակով։

Զորակայանի առջև հարց էր բարձրացվում ուղղության զորքերը համալրել 32—34 հրաձգային դիվիզիաներով, 27—28 տանկային բրիգադներով, 19—24 հրետանային գնդերով, 756 մարտական ինքնաթիռներով և անհրաժեշտ այլ տեխնիկայով ու հանդերձանքով[64]։ Եթե Զորակայանը տրամադրեր

---

63 Նույն տեղում, էջ 62—63։

64 Նույն տեղում, էջ 68։

այդ համալրումը, ապա հնարավոր կլիներ հարձակումն սկսել Դոնբաս—Խարկով ուղղությամբ։

Մարտի վերջերին Ս. Կ. Տիմոշենկոն, Ն. Ս. Խրուշչովը և Հ. Խ. Բաղրամյանը եղան Մոսկվայում՝ Զորակայանին ներկայացնելու կազմած զեկուցագիրը։ Մարտի 27-ի երեկոյան Կրեմլում իր աշխատասենյակում նրանց ընդունեց Ի. Վ. Ստալինը։ Նրա հետ էր նաև Գլխավոր շտաբի պետ Բ. Մ. Շապոշնիկովը։ Նախօրոք պայմանավորվածության համաձայն հիմնական զեկուցումը տվեց Հ. Խ. Բաղրամյանը։ Դա նրա առաջին հանդիպումն էր Ստալինի հետ։ Հաղթահարելով հուզմունքը՝ Բաղրամյանը, Գերագույն գլխավոր հրամանատարի առջև փռելով քարտեզը, սկսեց զեկուցել Հարավարևմտյան ուղղություններում ստեղծված օպերատիվ-ռազմավարական իրադրության և ամառվա ընթացքում իրենց ռազմավարական մտադրությունների մասին։ Զորակայանից համալրումներ պահանջելու առաջարկությունները Բաղրամյանը հաստատում էր խորապես հիմնավորված փաստարկներով։ Զեկուցման քննարկումից պարզ դարձավ, որ Գերագույն գլխավոր հրամանատարը չէր կարող ընդունել այն, քանի որ գերմանաֆաշիստական զորքերի՝ 1942 թ. ամառային հարձակման գլխավոր ուղղությունը նրա կարծիքով լինելու էր Մոսկվան, այլ ոչ թե հարավարևմտյան ուղղությունը։ Հենց Մոսկվայի ուղղությամբ էլ պետք է կենտրոնացվեին Զորակայանի պահեստային ուժերը, որոնք առանց այդ էլ շատ սուղ էին։ Ուստի Ստալինը պահանջում էր շուտափույթ մշակել նոր պլան, որի հիմնական նպատակը կլիներ միայն Խարկովի աղատագրումը՝ այն էլ առանց Զորակայանից լրացուցիչ ուժեր պահանջելու։ Մարտի 28—30-ը Ս. Կ. Տիմոշենկոն, Ն. Ս. Խրուշչովը և Հ. Խ. Բաղրամյանը ձեռնամուխ են լինում Խարկովյան հարձակողական գործողության պլանի մշակմանը։ Մարտի 30-ի երեկոյան նրանք Բ. Մ. Շապոշնիկովի և Ա. Մ. Վասիլևսկու ներկայությամբ Ի. Վ. Ստալինին են ներկայացնում Հարավարևմտյան զորքերի գործողությունների 1942 թ. ապրիլ-մայիս ամիսների պլանը, որի հիմնական նպատակն էր գրա-

վել Խարկովը, ապա վերախմբավորելով ուժերը՝ հարվածել հյուսիս-արևելքից՝ գրավել Դնեպրոպետրովսկը, Սինելնիկովոն և դրանով իսկ հակառակորդին զրկել Դնեպր գետի վրայի կարևոր անցարանից և Սինելնիկովո երկաթուղային հանգույցից: Պլանի մեջ մանրամասնորեն տրված էր գործողությունը հաջողությամբ անցկացնելու համար անհրաժեշտ զորքերի և տեխնիկայի քանակը, ստացվելիք համալրումների չափը և այլն: Նախատեսվում էր գործողությունը սկսել ապրիլի վերջերին: Զորակայանը, ընդհանուր առմամբ, հավանություն տվեց այդ պլանին և պահանջեց վերադառնալ ռազմաճակատ և նախապատրաստվել գործողության իրականացմանը: Ապրիլի սկզբներին Հարավարևմտյան ուղղության զինվորական կառավարությունը վերադարձավ Վորոնեժ, որտեղ տեղակայված էր շտաբը և անմիջապես սկսեց Խարկովյան գործողության նախապատրաստական աշխատանքները: Հենց այդ օրերին էլ Զորակայանի որոշմամբ ապրիլի 8-ին Հարավարևմտյան ուղղության զինվորական հրամանատար, մարշալ Ս. Կ. Տիմոշենկոն ստանձնեց Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերի անմիջական հրամանատարությունը, իսկ այդ ռազմաճակատի զորքերի նախկին հրամանատարը՝ գեներալ-լեյտենանտ Ֆ. Յա. Կոստենկոն, նշանակվեց նրա տեղակալ: Այդ որոշման համաձայն գեներալ-լեյտենանտ Հ. Խ. Բաղրամյանը դարձավ ռազմաճակատի շտաբի պետը, պահպանելով Հարավարևմտյան ուղղության օպերատիվ խմբի պետի պաշտոնը[65]: Ուղղության զորքերի կազմից հանվեց Բրյանսկի ռազմաճակատը և հանձնվեց Զորակայանին: Մայիսի 4-ին Գերագույն զինվորական հրամանատարության Զորակայանի որոշմամբ Հարավարևմտյան ուղղության օպերատիվ խումբը վերակազմավորվեց ուղղության շտաբի: Հ. Խ. Բաղրամյանը դարձավ ուղղության շտաբի պետը՝ միաժամանակ մնալով Հարավարևմտյան ռազմաճակատի շտաբի պետի պաշտոնում[66]: Ապրիլի 10-ին

---

65 Նույն տեղում, էջ 85։

66 Նույն տեղում, էջ 93։

Զորակայանին ներկայացվեց խարկովյան գործողության պրլանը, որը պետք է սկսվեր մայիսի 4-ին՝ Հարավարևմտյան և Հարավային[67] ռազմաճակատների ուժերով։ Սակայն հետագայում ստիպված էին անձնակազմի ու սպառազինության համալրման ոչ ժամանակին ստացվելու պատճառով հարձակման օրը հետաձգել մայիսի 12-ին։ Գործողության հիմնական նպատակը հակառակորդի խարկովյան խմբավորման ջախջախումն էր, Խարկովի ազատագրումը և Դնեպրոպետրովսկի ուղղությամբ հարձակում նախապատրաստելու համար պայմաններ ստեղծելը։ Նախատեսված էր, որ Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերը պետք է երկու հարված հասցնեին Խարկովի ընդհանուր ուղղությամբ, մեկը հյուսիս-արևելքից՝ Վոլչանսկի շրջանից, մյուսը՝ հարավից՝ Բարվենկովյան ելուստից։ Մալինովսկու զորքերին հանձնարարված էր Բարվենկովյան ելուստի հարավային դիմամասի ամուր պաշտպանությունը՝ դրանով իսկ ապահովելով Հարավարևմտյան ռազմաճակատի գլխավոր հարվածային խմբավորման հարձակումը հարավից։ Հարկ է նշել, որ գերմանաֆաշիստական հրամանատարությանը նախօրոք հայտնի էին դարձել խորհրդային հրամանատարության մտադրությունները, և իրենք ևս իրենց հերթին պատրաստում էին ռազմավարական հզոր գործողություն, որի նպատակը ոչ միայն Խարկովի պահպանումն էր, այլ նաև Հյուսիսային Դոնեց գետի արևմտյան տարածքների դրավումը Խարկովից հարավ-արևվելք, որը հնարավորություն էր ստեղծելու անմիջապես հզոր ռազմավարական հարձակում սկսել այդ ուղղությամբ՝ դեպի արևելք։

Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերի հարձակումը սկսվեց մայիսի 12-ին։ Երեք օրվա ընթացքում ռազմաճակատի զորքերը համառ մարտերով ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը և Խարկովից հյուսիս առաջ շարժվեցին

---

[67] Հարավային ռազմաճակատի հրամանատարը գեներալ-լեյտենանտ Ռոդիոն Յակովլևիչ Մալինովսկին էր։

18—25կմ, իսկ հարավում՝ 25—50կմ։ Բարենպաստ պայմաններ ստեղծվեցին հարձակման հետագա հաջողությունը զարգացնելու համար։ Դրա համար անհրաժեշտ էր անմիջապես ճեղքվածքների մեջ մտցնել շարժական զորամիավորումներ։ Սակայն ռազմաճակատի հրամանատարությունը հապաղեց, ձեռքի տակ եղած տանկային կորպուսները անմիջապես մարտի մեջ չնետեց, քանի որ նրան մոլորության մեջ էր գցել հետախուզության հայտնած տեղեկությունը՝ Զմիևկայի շրջանում հակառակորդի խոշոր տանկային խմբավորման կուտակման մասին։ Հարձակման անցած զորքերն ուժասպառ եղան, և առաջխաղացման թափը հաջորդ օրերին կտրուկ ընկավ։ Միայն մայիսի 17-ին ռազմաճակատի հրամանատարությունը մարտերի մեջ մտցրեց 21-րդ տանկային կորպուսը, բայց արդեն պահը բաց էր թողնված։ Ռազմաճակատի այլ տեղամասերում ակտիվ հարձակողական գործողությունների բացակայությունը հնարավորություն տվեց հակառակորդին այլ ուղղություններից անարգել ճեղքման տեղամաս փոխադրել թարմ ուժեր։ Մայիսի 17-ին արդեն գերմանաֆաշիստական հրամանատարությունը կարողացել էր Հարավային ռազմաճակատի 9-րդ բանակի հանդեպ, որը գործում էր Բարվենկովյան ելուստի հենամասերում, ստեղծել ուժեղ հարվածային խմբավորում։ Հարավարևմտյան ուղղության և Հարավային ռազմաճակատի հրամանատարությունը թերագնահատեց 9-րդ բանակի դոտում հակառակորդի հնարավոր հարվածի վտանգը և համապատասխան միջոցներ չձեռնարկեց։ Մայիսի 17-ին գերմանաֆաշիստական զորքերն անցան հարձակման և դուրս եկան Հարավարևմտյան ռազմաճակատի գլխավոր հարվածային զորախմբի թիկունքը։ Միաժամանակ նրանք հյուսիսից և հարավից հակահարվածներ հասցրեցին Խարկովի անմիջական ուղղությամբ գործող 28-րդ բանակի հարվածային թևերին։ Փոխանակ ետ քաշվելու և համապատասխան միջոցների դիմելու՝ Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերը շարունակում էին հարձակումը Խարկովի ուղղությամբ՝ ավելի բարդացնելով իրավիճակը։ Միայն մայիսի 19-ի օրվա երկրորդ կեսին Ս. Կ. Տիմոշենկոն հրաման տվեց

ռազմաճակատի զորքերին անցնել պաշտպանության Բարվենկովյան ելուստի շրջանում, սակայն այդ հրամանը բավականաչափ ուշացած էր։ Մայիսի 23-ին հակառակորդի «Կլեյստ» բանակախմբի զորքերը Բալակլեյայից հարավ միացան գերմանական 6-րդ բանակի զորքերի հետ՝ դրանով իսկ կտրելով խորհրդային զորքերի նահանջի ճանապարհը Բարվենկովյան ելուստից դեպի Հյուսիսային Դոնեցի ձախ ափ։ 38-րդ բանակի ուժերով ներսից շրջափակումը վերացնելու նպատակով հասցրած հարվածները հաջողություն չունեցան։ Ոչ մեծ խմբերով նրանք տեղ-տեղ ճեղքեցին հակառակորդի ճակատային գիծը և անցան Հյուսիսային Դոնեցի արևելյան ափը։ Երկու ռազմաճակատների զորքերը կրեցին մարդկային և տեխնիկայի մեծ կորուստներ։ Շրջափակումից փրկվեց ընդամենը 22 հազար մարդ։ Մարտերում հերոսաբար զոհվեցին Հարավարևմտյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Ֆ. Յա. Կոստենկոն, 57-րդ բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Կ. Պ. Պոդլասը, բանակախմբի հրամանատար, գեներալ-մայոր Լ. Վ. Բոբկինը, 6-րդ բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ա. Մ. Գորոդնյանսկին և ուրիշներ։

Խորհրդային պատմագրության մեջ խարկովյան գործողության անհաջող վախճանն ընդունված է համարել արդյունք Հարավարևմտյան ուղղության և Հարավարևմտյան ռազմաճակատի հրամանատարության կողմից օպերատիվ-ռազմավարական իրադրության ոչ ճիշտ գնահատման, ռազմաճակատների զորքերի փոխգործողության հստակ կազմակերպվածության բացակայության, տանկային կորպուսը մարտերի մեջ ուշացած մտցնելու, զորքերի կառավարման ընթացքում թույլ տված բացթողումների ու անբավարար օպերատիվ ապահովման։ Խարկովյան գործողության հետևանքով Հարավարևմտյան և Հարավային ռազմաճակատների զորքերը ոչ միայն կրեցին մարդկային ու տեխնիկայի հսկայական կորուստներ, այլև զրկվեցին Խարկովից հարավ Հյուսիսային Դոնեցի մոտ ունեցած կարևոր օպերատիվ հենակետից և

1942 թ. ամռանը նախատեսված հարձակողական գործողությունն իրականացնելուց։ Այդ ամենի հետևանքով ընդհանուր իրադրությունը Հարավարևմտյան ուղղությամբ բավականաչափ ծանրացավ[68]։

Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության բառակի հերոս Գ. Կ. Ժուկովը հետագայում խարկովյան գործողության անհաջողության մասին խոսելիս նշում է. «Վերլուծելով Խարկովյան օպերացիայի անհաջողությունների պատճառը՝ դժվար չէ հասկանալ, որ Հարավարևմտյան ուղղության զորքերի պարտության հիմնական պատճառն այն լուրջ վտանգի թերագնահատումն էր, որն իր մեջ թաքցնում էր Հարավարևմտյան ստրատեգիական ուղղությունը, ուր չէին կենտրոնացված Զորակայանի անհրաժեշտ ռեզերվներ։ Եթե հարավարևմտյան ուղղության օպերատիվ թիկունքային բնագծերում կանգնած լիներն Զորակայանի մի քանի պահեստային բանակներ, ապա 1942 թ. ամռանը հարավարևմտյան ուղղության զորքերի հետ աղետ տեղի չէր ունենար»[69]։

Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Ա. Մ. Վասիլևսկին, վերլուծելով խարկովյան գործողության ընթացքում Հարավարևմտյան ուղղության զորքերի մարտական գործողությունների ղեկավարման գործում նրա հրամանատարության թույլ տված լուրջ սխալները, հաստատում է, սակայն, որ «1942 թվականի գարնանը հարավում մեր զորքերի խոշոր պարտության գլխավոր պատճառը՝ հակառակորդի մտադրությունը և 1942 թ. ամռանը նրա գործողությունների հիմնական ուղղությունները որոշելիս Զորակայանի և Գլխավոր շտաբի թույլ տված հաշվեհսկալն էր։ Կանխակալ, սխալ այն կարծիքը, որ հակառակորդն ամռանը հիմնական հարվածը կհասցնի կենտրոնական ուղղությամբ, Գերագույն հրամանատարի վրա ճնշում էր ընդհուպ մինչև

---

[68] История второй мировой войны 1939—1945, т. 5, М., 1975, с. 131.

[69] Г. К. Жуков. Воспоминания и размышления, с. 368.

հուլիսը։ Հենց այդ ճնշումն էր պատճառը, որ Ստալինը մերժեց Հարավարևմտյան ուղղության ռազմական խորհրդի՝ ձախողված հարձակումը դեռևս մայիսի 17-ին դադարեցնելու խնդրանքը։ Մայիսի 18-ին Վասիլևսկուն զանգահարեց Ն. Ս. Խրուշչովը և հայտնեց հարձակումը անհապաղ դադարեցնելու Ստալինի մերժման մասին և խնդրեց իմ միջնորդությունը. «Ես պատասխանեցի,— հիշում է Վասիլևսկին,— որ արդեն մեկ անգամ չէ, որ փորձել եմ համոզել Գերագույնին դրանում։ Ստալինը, հենվելով Հարավարևմտյան ուղղության ռազմական խորհրդի հակասական զեկուցագրի վրա, մերժեց իմ առաջարկությունը»[70]:

Վերլուծելով խարկովյան գործողության անհաջողությունների պատճառները՝ Հ. Խ. Բաղրամյանը նշում է. «Իհարկե, Խարկովի մոտ մեր ունեցած անհաջողությունների պատճառները միայն Գերագույն գլխավոր հրամանատարության հաշվեխախներով չեն սահմանափակվում, Հարավարևմտյան ուղղության հրամանատարությունը նույնպես մի շարք սխալներ ու թերություններ էր թույլ տվել... Խարկովի մոտ տեղի ունեցած իրադարձությունների խիստ գիտական վերլուծության դեպքում կարելի է առանց չափազանցության ասել, որ դրանց ելքը միանգամայն այլ կարող էր լինել միայն այն դեպքում, եթե Հարավարևմտյան ուղղության ստրատեգիական մասշտաբի ռեզերվները ստանար ժամանակին։ Այդ իմաստով բնորոշ է իրադարձությունների հաջորդական զարգացումը։ Միայն այն ժամանակ, երբ մեր հիմնական ստրատեգիական ռեզերվները տեղափոխվեցին հարավ, սովետական զինված ուժերը 1942 թվականի աշնանը Ստալինգրադի մոտ փայլուն հաղթանակ տարան»[71]:

Ամբողջ գործողության ընթացքում Բաղրամյանը լարված հետևում էր իրադարձությունների զարգացմանը, ճիշտ վերլուծում այն, անում հիմնավորված հետևություններ։ Երբ

---

[70] А. М. Василевский. Дело всей жизни, М., 1984, с. 173—174.

[71] Հ. Ք. Բաղրամյան, *Այսպես մենք հասանք հաղթանակի*, էջ 159—160։

մայիսի 17-ին արդեն պարզ էր դարձել, որ հասունանում է սպառնալիքը ուղղության զորքերի դեմքին, նա Ս. Կ. Տիմոշենկոյից պահանջում է շտապ դադարեցնել հարձակումը. «Սրտի մեծ ցավով պետք է ասեմ,— հիշում է Բագրամյանը, — որ ինձ չհաջողվեց մարշալ Ս. Կ. Տիմոշենկոյին համոզել, որ անհրաժեշտ է շտապ ընդունել այն հիմնական որոշումը»[72]:

1942 թ. հունիսի 12-ին հակառակորդը նոր հարձակում սկսեց Հարավարևմտյան ուղղությամբ։ Օգտագործելով իր թվական և տեխնիկական գերակշռությունը, ինչպես նաև ռազմավարական նախաձեռնությունը՝ գերմանաֆաշիստական զորքերը ձգտում էին աքցանի մեջ վերցնել Հարավարևմտյան և Հարավային ռազմաճակատների զորքերը, ջախջախել նրանց և շարժվել Կովկասի և Ստալինգրադի ուղղությամբ։ Շնորհիվ ժամանակին ձեռք առնված միջոցառումների, այս անգամ Հարավարևմտյան ուղղության զորքերը խուսափեցին շրջապատումից, բայց ստիպված էին ծանր մարտերով նահանջել արևելք։

Հունիսի 21-ին Զորակայանը լուծարեց Հարավարևմտյան ուղղությունը։ Դրանից 5 օր անց Բագրամյանն ազատվեց Հարավարևմտյան ռազմաճակատի շտաբի պետի պաշտոնից։ Բագրամյանն անմիջապես դիմեց Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Վ. Ստալինին՝ իրեն որևէ հրամանատարական աշխատանքի նշանակելու խնդրանքով։ Հունիսի 28-ին գեներալ-լեյտենանտ Բագրամյանը նշանակվեց Արևմտյան ռազմաճակատի 61-րդ բանակի հրամանատարի տեղակալ. բանակի հրամանատարը գեներալ-լեյտենանտ Պ. Ա. Բելովն էր, որի հետ Բագրամյանը սովորել էր Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում։ Բանակն այդ ժամանակ պատրաստվում էր հարված հասցնելու հակառակորդի Բոլխովյան խմբավորմանը։ Սակայն հաղթել էր կարողացել ծանոթանալ իրադրությանը և անցնել աշխատանքային նոր պարտականությունների կատարմանը, երբ հուլիսի 15-ին ստացվեց Զո-

---

[72] Նույն տեղում, էջ 146։

բակայանի նոր հրամանը Բաղրամյանին Արևմտյան ռազմաճակատի 16-րդ բանակի հրամանատար նշանակելու մասին, վերջինիս հրամանատար գեներալ-լեյտենանտ Կ. Կ. Ռոկոսովսկին առաջ էր քաշվել Բրյանսկի ռազմաճակատի հրամանատարի պաշտոնում: Արևմտյան ռազմաճակատի հրամանատարը բանակի գեներալ Գ. Կ. Ժուկովն էր: Զորակայանի կողմից Բաղրամյանին այս պատասխանատու պաշտոն վստահելը ցույց էր տալիս, որ Գերագույն գլխավոր հրամանատարը Խարկովի մոտ կրած անհաջողությունների համար Բաղրամյանին չէր մեղադրում: Մինչև այդ 16-րդ բանակը փառաբանվել էր Սմոլենսկի և Մոսկվայի ճակատամարտերում, արդեն ուներ մարտական լավ ավանդույթներ, սպայական փորձված անձնակազմ, կրակի քուրայում թրծված զինվորներ: Այս բանակում Բաղրամյանը ծառայեց մինչև 1943 թ. նոյեմբերի 17-ը: Հենց այդ ընթացքում էր, որ նոր փայլով շողշողաց գեներալի զորավարական տաղանդը, որը նրան դասեց խորհրդային բանակի ականավոր զորավարների շարքը: 1942 թ. հուլիսին բանակը տեղաբաշխված էր Մոսկվայի հարավարևմտյան հեռավոր մատույցներում՝ Ժիզդրայի ուղղությամբ: Բանակի շտաբը գտնվում էր Կալուգայի մարզի Սուխինիչի քաղաքից հարավ՝ Զվանովո գյուղի մոտ գտնվող անտառում: Բանակի շտաբի պետը գեներալ-մայոր Միխայիլ Սերգեևիչ Մալինինն էր, մարտական հարուստ փորձի և ռազմական գիտելիքների գիտակ մարդ, որն անցել էր քաղաքացիական կռիվների դպրոցը, 1931-ին ավարտել Ֆրունզեի անվան ակադեմիան, 1930—1940 թթ. մասնակցել ֆիննական պատերազմին, հետագայում (1955 թ.) նրան շնորհվել է բանակի գեներալի կոչում: 16-րդ բանակի ռազմական խորհրդի անդամներն էին՝ դիվիզիայի կոմիսար Ալեքսեյ Անդրեևիչ Լոբաչևը և գնդի կոմիսար Ֆիլիպ Վասիլևիչ Յաշչկինը: Բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետը և շտաբի պետի տեղակալը Զապսայան դիվիզիայում քաղաքացիական կռիվների թոհ ու բոհով անցած, հրամանատարական կատարելագործման երկու դասընթացներ, Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան

ավարտած, Մեծ հայրենականի առաջին օրերին բրիգադի, ապա դիվիզիայի շտաբի պետի պարտականություններ կատարած, մեծ փորձի տեր և բազմակողմանի օժտված գնդապետ Ֆեոդոր Նիկոլաևիչ Բոբկովն էր։ Բանակի հրամանատարությունը ստանձնելու ժամանակ 16-րդ բանակը Ժիզդրայից (Կալուգայի մարզ) 20կմ դեպի հյուսիս պաշտպանում էր 70 կիլոմետրանոց մի բնագիծ, որն անցնում էր Շիպիլովկայից մինչև Կատերյանկայի գետաբերան և այնուհետև Ժիզդրա ու Ռեսետա գետերի հոսանքով մինչև Մոիլով։ Բանակի կազմում կար 7 հրաձգային դիվիզիա, 4 հրաձգային և 3 տանկային բրիգադ, ուժեղացման մի քանի այլ զորամասեր, որոնք ընդգրկված էին 5-րդ գվարդիական հրաձգային, 1-ին գվարդիական հեծյալ և 10-րդ տանկային կորպուսների մեջ։ Բաղրամյանն իրեն յուրահատուկ օպերատիվությամբ ծանոթացավ ենթակաների հետ, լսեց բոլոր զորատեսակների հրամանատարների ու ծառայությունների պետերի կարծիքը իրեն հետաքրքրող հարցերի վերաբերյալ և մեծ եռանդով լծվեց 70 կիլոմետրանոց բնագծի պաշտպանության կազմակերպման գործին։ Օգոստոսի 11-ին հակառակորդի մի մեծ խմբավորում, որը բաղկացած էր 15 դիվիզիաներից, որից 5-ը՝ տանկային, որոնք ունեին 500 մարտական մեքենա, հարձակվեցին Արևմտյան ռազմաճակատի ձախ թևի բանակների վրա։ Հիտլերականները մտադրություն ունեին խորը ճեղքել ռազմաճակատի 16-րդ և 61-րդ բանակների պաշտպանությունը, այնուհետև զարգացնել հաջողությունը Սուխինիչիի ուղղությամբ, դուրս գալ Յուխնովի շրջան և սպառնալիքի տակ դնել Արևմտյան ռազմաճակատի ամբողջ ձախ թևը։ Դրանով դեպի Մոսկվա շարժվելու վտանգ կստեղծվեր, որը կստիպեր խորհրդային հրամանատարությանը Ստալինգրադի շրջանից ուժեր փոխադրել հյուսիս և թուլացնել հարավային թևը։ Բանակի հրամանատարը կռահել էր հակառակորդի հրամանատարության նենգ մտադրությունը և ամեն ինչ անում էր այն ի չիք դարձնելու։ Սուխինիչի ուղղությամբ հակառակորդի խոշոր հարվածը ետ մղելու գործում, ինչպես հետագայում հիշում է Բաղրամյանը, բացառիկ կարևոր դեր խաղաց Արև-

մըտյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Գ. Կ. Ժուկովը, որը հմտորեն ուղղություն էր տալիս բանակի և մոտեցած ռեզերվների ուժերին։ Հանդիպելով կազմակերպված դիմադրության՝ հակառակորդի հարվածային խմբավորումը մինչև օգոստոսի 18-ը ուժասպառ եղավ՝ կորցնելով շուրջ 10 հազար զինվոր ու սպա, ավելի քան 200 տանկ, մեծ քանակությամբ այլ տեխնիկա։ Դա ստիպեց թշնամուն դադարեցնել հարձակումը։ Օգոստոսի 22-ին 16-րդ և 61-րդ բանակների զորքերը, ռազմաճակատի ռեզերվի 3-րդ տանկային բանակի աջակցությամբ, անցան հակահարձակման և զգալի չափով վերականգնեցին զորքերի սկզբնական դրությունը՝ թշնամուն պատճառելով կենդանի ուժի և տեխնիկայի զգալի կորուստներ։

Օգոստոսյան չարված մարտերը Բաղրամյանի համար մեծ փորձություն ու խիստ ուսանելի դպրոց էին։ Չէ՞ որ հենց այդ ժամանակ նրան առաջին անգամ վիճակվեց անմիջականորեն ղեկավարել այնպիսի օպերատիվ միավորման մարտական գործողությունները, ինչպիսին բանակն է։ Մինչ այդ Բաղրամյանը մարտական գործողություններին մասնակցել էր միայն խոշոր շտաբների կազմում։ «Անձամբ սեփական փորձով այն ժամանակ համոզվեցի,— գրում է նա,— թե մարտական իրադրությունում ինչպիսի վիթխարի տարբերություն կա շտաբային ու հրամանատարական աշխատանքի միջև, շտաբի պետը համեստ խնդիր ունի՝ իրագործվող օպերացիայում բոլոր միջոցներով հրամանատարին ապահովել զորքերի հաջող ղեկավարումը։ Ճիշտ է, նա որոշ չափով կարող է աղդել հրամանատարի որոշման ընդունման վրա, առաջարկելով այնպիսի տարբերակ, որն իր կարծիքով, առավելապես համապատասխանում է օպերատիվ իրադրությանը։ Բայց միայն հրամանատարը իրավունք ունի որոշում ընդունել, որի համապատասխան էլ զորքերը պետք է գործեն, և պարտավոր է առաջին հերթին ինքը կրել հետևանքների պատասխանատվությունը»[73]։

---

[73] Ի. Քհ. Բաղրամյան, *Այսպես մենք հասանք հաղթանակի*, էջ 195։

1942 թ. օգոստոսի վերջերին Արևմտյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Գ. Կ. Ժուկովը նշանակվեց ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի 1-ին տեղակալ և Գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալ։ Նրա փոխարեն ռազմաճակատի հրամանատար նշանակվեց գեներալ-գնդապետ Իվան Ստեպանովիչ Կոնևը (1944 թ. Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս, 1944, 1945 թթ.). 1943 թ. փետրվարին նրան փոխարինեց գեներալ-գնդապետ (1946 թ. Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության հերոս, 29.5.1945թ.) Վասիլի Դանիլովիչ Սոկոլովսկին։

1942 թ. սեպտեմբեր—1943 թ. փետրվար ընկած ժամանակաշրջանում գեներալ-լեյտենանտ Բագրամյանի 16-րդ բանակը ամուր պաշտպանություն էր գրավել նախկին դիրքերում և նախապատրաստվում էր հարձակողական նոր գործողությունների։ Այդ շրջանում հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում դիպուկահարների (սնայպերներ) խմբերի պատրաստմանը, որոնք միայն այդ շրջանում ոչնչացրեցին 2000-ից ավելի հիտլերական։ Բանակի գործողությունների դատում թշնամուն ավելորդ հաղթաթղթեր չտալու նպատակով մշտապես ամրապնդվում էին գրաված բնագծերը, թշնամուն պահում լարված վիճակում, դրանով իսկ թույլ չտալով նրան այդ տեղամասից զորքեր փոխադրել հարավ, որտեղ Դոն գետի մեծ ոլորանի և Վոլգայի միջև ընկած շրջանում 1942 թ. հուլիսից ծավալվել էր Ստալինգրադյան ճակատամարտը։ Զբաղվելով իրենց ռազմաճակատային առօրյա գործերով՝ 16-րդ բանակի ողջ անձնակազմը և առաջին հերթին սպաներն ու գեներալները չթույլատրող ուշադրությամբ հետևում էին ճակատամարտի ընթացքին։ Ինչպես հայտնի է, այն ավարտվեց 1943 թ. փետրվարի 2-ին՝ գերմանաֆաշիստական զորքերի խոշոր խմբավորումների շրջապատումով և լրիվ ջախջախումով։ Հակառակորդն այստեղ կորցրեց ավելի քան 1,5 միլիոն մարդ, որը կազմում էր խորհրդագերմանական ճակատում մարտնչող ֆաշիստական զորքերի մեկ քա-

ռորդը[74]: Ստալինգրադյան ճակատամարտում տարած հաղթանակով խորհրդային զինված ուժերը հակառակորդից խլեցին ռազմավարական նախաձեռնությունը և այն իրենց ձեռքում պահեցին մինչև պատերազմի հաղթական ավարտը: Չնայած Բաղրամյանը անմիջական մասնակցություն չունեցավ այդ ճակատամարտին, բայց և այնպես իր բանակի գոտում կաշկանդված պահելով հակառակորդի մեծաթիվ ուժեր, որոնք այնքան անհրաժեշտ էին Ստալինգրադում, դրանով իսկ իր ավանդը ներդրեց ճակատամարտում տարած պատմական հաղթանակի գործում: Նա Ստալինգրադի մոտ տարած հաղթանակը համարում էր «ընդհանրապես Հայրենական մեծ պատերազմի և երկրորդ համաշխարհային պատերազմի ամենակարևոր իրադարձություններից մեկը»[75]:

1943 թ. փետրվարի 9-ին Բաղրամյանը ռազմաճակատի հրամանատարից առաջադրանք ստացավ պատրաստվել ժիզդրայի ուղղությամբ հարձակողական գործողությունն իրականացնելու: Նախապատրաստական աշխատանքների ընթացքում կատարվեցին անհրաժեշտ համալրումներ, մանրակրկիտ հետախուզվեց թշնամու պաշտպանական բնագիծը, որը կես տարվա մեջ ավելի էր ամրացվել: Հարձակումը սկսվեց փետրվարի 22-ին՝ երկու ժամ տևած հրետանային նախապատրաստությունից հետո, Զապրուդնոյե և Վիսոկայա բնակավայրերի միջև 18կմ լայնությամբ գոտում: Մեծ ուժ և հրմտություն էր պահանջվում Բաղրամյանի զորքերից՝ հակառակորդի զորեղ պաշտպանությունը ճեղքելու համար: Չնայած դանդաղ, բայց և այնպես հաջողվեց ճեղքել ամենաբազմազան ինժեներական միջոցներով կառուցված պաշտպանական արգելափակոցների խիտ ցանցը և առաջ շարժվել: Փետրվարի 27-ին թշնամու ժիզդրայան խմբավորման համար տագնապալի իրավիճակ ստեղծվեց, քանի որ հնգօրյա կատաղի

---

[74] История второй мировой войны 1939—1945, т. 6, М., 1976 с. 81.

[75] Ի. Քաղրամյան, *Այսպես մենք հասանք հաղթանակի*, էջ 201:

մարտերի ընթացքում Բաղրամյանի բանակի միավորումները նրան հասցրել էին կենդանի ուժի և տեխնիկայի լուրջ կորուստներ, դրավել մարտավարական կարևոր բարձունքներ՝ Ժիզդրա, Բրյանսկ ուղղությամբ հարվածելու համար։ Դա լուրջ սպառնալիք էր հակառակորդի համար, ուստի ճեղքման ամբողջ ճակատում շտապ կարգով սկսեց հակամիջոցառումներ պատրաստել, մոտեցնել տանկային և հետևակային խոշոր ռեզերվներ։ Ուժերի հարաբերակցությունն աստիճանաբար սկսեց թեքվել թշնամու կողմը։ Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև Բրյանսկի ու կենտրոնական ռազմաճակատների հարձակման հատվածներում ստեղծվող իրավիճակը, Արևմտյան ռազմաճակատի հրամանատար՝ գեներալ-գրնդապետ Վ. Դ. Սոկոլովսկին հրաման տվեց Բաղրամյանին դադարեցնել բանակի հարձակումը և անցնել պաշտպանության։ Չնայած ձմեռային դժվարին պայմաններում անցկացված գործողությունը չպսակվեց Ժիզդրայի ազատագրումով, այնուամենայնիվ, 16-րդ բանակի հաջող գործողությունները նպաստեցին հակառակորդի Ռժև-Վյազմայի հենակետից ֆաշիստական զորքերի լիովին դուրս բերմանը։ Մոսկվայի արևմտյան մատույցներում գտնվող այդ ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող հենակետի վերացումով հակառակորդը նահանջեց 130—160 կիլոմետր, որի հետևանքով մայրաքաղաքի վրա թշնամու հարձակման նոր վտանգը իսպառ չքացավ։ Ռազմաճակատի գիծը կրճատվեց 300 կիլոմետրով, որի հետևանքով զորքերի համար ճանապարհ բացվեց դեպի արևմուտք։ 16-րդ բանակի մարտիկների անձնազոհությունը բարձր գնահատվեց հայրենիքի կողմից։ Գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում ցուցաբերած խիզախության, կայունության, կարգապահության ու կազմակերպվածության, անձնակազմի հերոսության համար 16-րդ բանակը ԽՍՀՄ պաշտպանության ժողովրդական կոմիսար Ի. Վ. Ստալինի հրամանով 1943 թ. ապրիլի 16-ին վերակազմավորվում է 11-րդ գվարդիական բանակի[76]։

---

[76] Советская военная энциклопедия, т. 2, М., 1976, с. 491.

Գվարդիական կոչման արժանանալը մեծ պատիվ էր բանակի մարտիկների, հրամանատարների և քաղաշխատողների համար։ Դա նրանց մարտական սխրանքների և հայրենիքի հանդեպ ունեցած պարտքը սրբորեն կատարելու բարձր գնահատականն էր։ Բարձր գնահատվեց նաև բանակի հրամանատարի ծառայությունը. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1943 թ. ապրիլի 9-ի հրամանագրով գեներալ-լեյտենանտ Հ. Խ. Բաղրամյանը պարգևատրվեց Կուտուզովի 1-ին աստիճանի զորավարական շքանշանով[77]։

Ինչպես հայտնի է, 1943 թ. ամռանը հիտլերյան հրամանատարությունը, օգտվելով Եվրոպայում երկրորդ ճակատի բացակայությունից, մտադրվել էր Օրյոլ—Կուրսկ—Բելգորոդի շրջանում իրականացնել հսկայածավալ հարձակողական գործողություն՝ հույս ունենալով վրեժ լուծել Ստալինգրադի համար և վերադարձնել կորցրած ռազմավարական նախաձեռնությունը։ Հայրենական մեծ պատերազմի ամենախոշոր[78] և վճռական նշանակություն ունեցող Կուրսկի ճակատամարտը սկսվեց հուլիսի 5-ին և ավարտվեց օգոստոսի 23-ին։ Կուրսկի ճակատամարտում ոչ միայն ամբողջովին ջախջախվեցին հակառակորդի 30 ընտիր դիվիզիաներից (այդ թվում 8 տանկային) բաղկացած զորամիավորումները, այլև ընդմիշտ թաղվեց գեբելսյան ստահոդ քարոզչության ստեղծած այն առասպելը, թե խորհրդային զորքերն ընդունակ են միայն ձմեռային պայմաններում հաղթելու։ Կուրսկի աղեղում կրած պարտության հետևանքով լիովին կործանվեց գերմանաֆաշիստական բանակի հարձակողական ռազմավարությունը, գերմանական բանակը ստիպված էր ամբողջ ճակատով մեկ անցնել պաշտպանության։ Ռազմավարական նախաձեռնությունն ամբողջովին իր ձեռքը վերցնելով՝ խորհրդային հրամանատարությունը նպաստավոր պայմաններ ստացավ՝ զարգացնելու

---

[77] «Правда», 1943, 10 апреля.

[78] Մոսկվայի ճակատամարտին երկու կողմերից մարտերին մասնակցել է շուրջ 1,5 միլիոն մարդ, Ստալինգրադի ճակատամարտին՝ 2 միլիոն, իսկ Կուրսկի ճակատամարտին՝ ավելի քան 3 միլիոն մարդ։

ռազմավարական հարձակումը տարբեր ճակատներում։ Կուրսկի տակ տարած հաղթանակով և խորհրդային զորքերի՝ Դնեպրի ափերը հասնելով ավարտվեց պատերազմում արմատական բեկումը։

Պատմական այդ ճակատամարտին ակտիվ մասնակցություն ունեցավ նաև գեներալ-լեյտենանտ Հ. Խ. Բաղրամյանը, որի 11-րդ գվարդիական բանակը, գործելով օրյոլյան ուղղությամբ, վճռական դեր խաղաց հաղթանակի գործում։ Օրյոլյան գործողությունն իրագործվեց 1943 թ. հուլիսի 12-ից մինչև օգոստոսի 18-ը՝ Բրյանսկի, Կենտրոնական և Արևմտյան ռազմաճակատների ուժերով։ Խորհրդային զորքերը ջախջախեցին հակառակորդի օրյոլյան խմբավորման 15 դիվիզիա, դեպի արևմուտք շարժվեցին 150կմ և օգոստոսի 5-ին ազատագրեցին Օրյոլ քաղաքը։ Նույն օրը Տափաստանային ռազմաճակատի զորքերն ազատագրեցին Բելգորոդ քաղաքը[79]։ Ի պատիվ ռուսական այդ հինավուրց քաղաքներն ազատագրող զորքերի՝ Մոսկվայում Հայրենական մեծ պատերազմում առաջին անգամ 120 հրանոթների 12 համազարկերով տրվեց հրետանային առաջին հրավառությունը, որն այնուհետև դարձավ ավանդույթ։

Օրյոլյան հաղթանակի գործում առանձնապես մեծ էր գվարդիայի գեներալ-լեյտենանտ Հ. Խ. Բաղրամյանի դերը, որը ոչ միայն ակտիվորեն մասնակցել էր այդ գործողության պլանի մշակման աշխատանքներին, այլև Գերագույն գլխավոր հրամանատարի մոտ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ, երբ քննարկվում էր գործողության վերջնական տարբերակը, համարձակորեն հանդես էր եկել իր անմիջական պետ, Արևմտյան ռազմաճակատի հրամանատար, գեներալ-գնդապետ Վասիլի Դանիլովիչ Սոկոլովսկու և Բրյանսկի ռազմաճակատի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մաքս Անդրեևիչ Ռեյտերի կազմած պլանի դեմ։ Այս պլանով նախատեսվում էր հիմնական հարվածը հասցնել Խոտինեցի ուղղու-

---

[79] Освобождение городов. М., 1985, с. 46, 178.

թյամբ, բայց այդ պահին ստեղծված իրադրությունը խանգարում էր դրա իրականացմանը։ Բաղրամյանն առաջարկում էր ավելի համեստ, բայց ռեալ խնդիր՝ իր 11-րդ գվարդիական և գեներալ Պ. Ա. Բելովի 61-րդ բանակների հանդիպական հարվածներով շրջապատել ու ոչնչացնել օրյոլյան ելուստը հյուսիսից պաշտպանող հակառակորդի բոլխովյան խմբավորումը։ Դրա շնորհիվ հակառակորդի պաշտպանության մեջ կստեղծվեր հսկայական ճեղքվածք, որը գերմանացիները հազիվ թե կարողանային արագորեն ծածկել։ Բաղրամյանն իր տեսակետը հիմնավորում էր հետախուզության հավաստի տվյալներով։ Սակայն մինչև Զորակայան գնալը, նրան չէր հաջողվել համոզել ինչպես ռազմաճակատների երկու հրամանատարներին, այնպես էլ Գլխավոր շտաբին։ Օրյոլյան գործողության վերջնականապես հաստատման խորհրդակցությունը ղեկավարում էր Ի. Վ. Ստալինը։ Երկու ռազմաճակատների հրամանատարների որոշումների մասին զեկուցեց Գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ-գնդապետ Ա. Ի. Անտոնովը։ «Նրա հանգամանալից զեկուցումը Ստալինը լսեց շատ ուշադիր,— հետագայում այդ խորհրդակցության մասին հիշում է Հ. Խ. Բաղրամյանը,— այնուհետև նա մի քանի հարց տվեց, ճշտելով ռազմաճակատների փոխգործողության մանրամասները։ Ես ոնց որ նստած լինեի փշերի վրա։ Հիմա Գերագույնը հավանություն կտա պլանին, այն երկաթյա ուժ կստանա։ Բայց ինչպե՞ս առարկել Գլխավոր շտաբի կողմից հավանություն գտած առաջարկություններին։ Այն ժամանակ ես բանակի բավականին երիտասարդ հրամանատար էի։ Արդեն սկսել էին հավաքել քարտեզները։ Գերագույնը հարցրեց, «Բոլո՞ր են համաձայն տվյալ որոշմանը։ Հնարավոր է, որևէ մեկը ա՞յլ կարծիք ունի»։ Դա իմ վերջին հնարավորությունն էր։ Ես խնդրեցի թույլ տալ արտահայտվել։ Ստալինը ոչ առանց զարմանքի, բայց միաժամանակ միանգամայն բարյացակամորեն նայեց ինձ. «Խնդրեմ»։ Նորից փռեցին քարտեզները։ Զգտելով զսպել հուզմունքս, շարադրեցի իմ տեսակետը։ Վերջացնելով, հայացքս գցեցի բոլորի վրա, նա-

խազգալով, որ հիմա «մեծ եղյակը»՝ ռազմաճակատների երկու հրամանատարները և գլխավոր շտաբի պետի տեղակալը, կհարձակվեն ինձ վրա։ Մի երկու բոպե լռություն տիրեց։ Այնուհետև խոսք վերցրեց Վ. Դ. Սոկոլովսկին, հետո Մ. Ա. Ռեյտերը։ Երկուսն էլ ձգտում էին ժխտել իմ փաստարկները։ Առանձնապես տաք-տաք էր խոսում Մաքս Անդրեևիչը։ Իր խիստ պատասխանը նա ավարտեց հետևյալ բառերով. «Ընկեր Ստալին, Բաղրամյանը համառորեն ձգտում է, որպեսզի իր համար ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնք հեշտացնեն խնդրի լուծումը։ Եթե նրան լսենք, ապա ստացվում է, որ պետք է ոչ միայն ուժեղացնենք 11-րդ գվարդիականի մարտակազմը, այլև հարևանների հաշվածներով պաշտպանենք այդ միավորման գործողությունները»։ Ստալինը, որ մինչ այդ ուշադրությամբ ուսումնասիրում էր քարտեզը, բարձրացրեց գլուխը, բերանից հանեց ծխամորճը, շշտապելով հարդարեց բեղերը։ Բոլորը լռել էին։ Ռեյտերը կշտամբալից հայացք նետեց վրաս, կարծես ուզում էր ասել. «Չէ որ քեզ զգուշացրեցին՝ սակվիր։ Չլսեցիր՝ հիմա մեղքը քո վիզը»։ Եվ հանկարծ Գերագույնը շատ ցածրաձայն ու հանգիստ ասաց. «Բայց չէ՞ որ Բաղրամյանը ճիշտ բան է ասում։ Եվ իմ կարծիքով նրա առաջարկությանը պետք է համաձայնվել։ Իսկ ինչ վերաբերում է այն բանին, որ բանակի հրամանատարը մտահոգվում է, որ առաջադրանքի կատարման համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեն, ապա դա գովելի է։ Չէ՞ որ անհաջողության դեպքում պատասխանատվության ամբողջ ծանրությունը նրա վրա կընկնի»։ Վենը շարունակել ցանկացողներ չգտնվեցին։ Մեր տարբերակը ի մեծ բավականություն ինձ, ընդունվեց առանց էական փոփոխությունների»[80]:

Բաղրամյանը Մոսկվայից բանակի շտաբ վերադարձավ բարձր տրամադրությամբ և անմիջապես լծվեց գործողության նախապատրաստական աշխատանքներին։ Հարձակման անցնելու նախօրյակին 11-րդ գվարդիական բանակը իր կազմում

---

80 Ի. Քրիստոֆորովիչ Բաղրամյան, Այսպես մենք հասանք հաղթանակի, էջ 240—241։

ուներ 12 հրաձգային դիվիզիա՝ յուրաքանչյուրում 7—7,5 հազար մարդ, դրանց թվում 9 գվարդիական, 2 տանկային կորպուս, 4 տանկային բրիգադ, ծանր տանկերի 2 առանձին գունդ, հրետանային կորպուս, որը կազմում էին գլխավոր հրամանատարի ռեզերվի 3 հրետանային, 2 զենիթահրետանային դիվիզիաներ, 7 ինժեներական գումարտակներ[81]: Սակայն այդ հսկայական ուժերը հարկավոր էր թաքցնել թշնամուց և ստեղծել այն տպավորությունը, որ այդ ուղղությամբ հարձակում չի սպասվում: Գործողության նախապատրաստման գաղտնիությունը և հարձակման անսպասելիությունը Բաղրամյանի ռազմական արվեստի բաղկացուցիչ մասերից էին, որոնք հետագայում կիրառվեցին Բելոռուսիայում, Մերձբալթիկայում և Արևելյան Պրուսիայում: Զորակայանը նույնպես մեծ տեղ էր հատկացնում 11-րդ գվարդիական բանակի հարձակման նախապատրաստմանը: Բանակը, բացի մարդկային և տեխնիկայի միջոցներով բավարարելուց, հաճախակի նրա շտաբ էին գալիս Գերագույն գլխավոր հրամանատարի առաջին տեղակալ, մարշալ Գ. Կ. Ժուկովը, կարմիր բանակի հրետանու հրամանատար, գեներալ Ն. Ն. Վորոնովը, հեռավոր գործողության ավիացիայի հրամանատար, գեներալ Ա. Ե. Գոլովանովը, ռազմաճակատի հրամանատար, գեներալ Վ. Դ. Սոկոլովսկին, մանրակրկիտ ծանոթանում գործողության նախապատրաստության աշխատանքներին, տալիս արժեքավոր խորհուրդներ, գործողության ընթացքում հեռախոսով անձամբ հետաքրքրվում էր Ի. Վ. Ստալինը: Հակառակորդի մոտ ստեղծվեց այն տպավորությունը, որ այդ ուղղությամբ որևէ հարձակողական գործողություն չէր կարող տեղի ունենալ: Հուլիսի 12-ի առավոտյան ժամը 3 անց 20 րոպեին բանակի հրետանին ապդարարեց գործողության սկիզբը: Ճեղքման հատվածում մեկ կիլոմետրին միջին հաշվով ընկնում էր մինչև 200 հրանոթ, իսկ ավելի կարևոր հատվածներում, մինչև 260 հրանոթ, չհաշված գվարդիական ականանետ-

[81] Նույն տեղում, էջ 243:

ները՝ «Կատյուշաները»։ Հրետանային նախապատրաստությունը դեռ չավարտված, թշնամու վրա սլացան 80 ռմբակոծիչներ։ Հրետանու և ավիացիայի պաշտպանությամբ հետևակը նետվեց դեպի թշնամու դիրքերը և ճեղքեց այն։ Բաղրամյանը ճիշտ ժամանակին ճեղքման մեջ մացրեց տանկային կորպուսները, որը հիանալի արդյունք տվեց։ Մարտերի յոթերորդ օրվա վերջին 11-րդ գվարդիական բանակի հարձակման գոտին ընդարձակվեց մինչև 120 կիլոմետր, զորքերը մոտավորապես 70 կիլոմետրով սեպաձև խրվեցին հակառակորդի պաշտպանության մեջ։ Հարձակման ռազմավարական հաջողությունը պահանջում էր ուժերի վերախմբավորում կատարել, ուստի հուլիսի 29-ին 11-րդ գվարդիական բանակը Արևմտյան ռազմաճակատից հանձնվեց նրա ձախ թևում՝ հարավում մարտնչող Բրյանսկի ռազմաճակատին, որի նոր հրամանատար էր նշանակվել գեներալ Մ. Մ. Պոպովը։ Հակառակորդի օրյոլյան խմբավորման վերջնական ջախջախման համար բանակին անհրաժեշտ էին ռեզերվային նոր ուժեր։ Այդ մասին Բաղրամյանը համարձակորեն հայտնեց Ի. Վ. Ստալինին։ Գերագույնն այս անգամ ևս համաձայնեց Բաղրամյանի առաջարկությունների հետ և 24-հազարանոց համալրումը ժամանակին տեղ հասավ։ Դա արտակարգ կարևոր դեր խաղաց գործողության հաջող ավարտման գործում։ Օգոստոսի 6-ին Բաղրամյանի բանակը վերսկսեց հարձակումը Խոտինեցի ուղղությամբ։ Օգոստոսի 10-ին Խոտինեց քաղաքը, որը գտնվում էր Օրյոլից Բրյանսկ տանող ավտոմայրուղու վրա, ազատագրվեց։ Ջարդացնելով հաջողությունը՝ օգոստոսի 15-ին գվարդիականները թշնամուն դուրս վռնդեցին հաղորդակցության ուղիների կարևոր հանգույց Կարաչև քաղաքից, որը գերմանացիների վերջին հենակետն էր Բրյանսկի մատույցներում։ Մինչև օգոստոսի 17-ը գվարդիականներն անընդհատ հարձակողական մարտերով առաջ անցան ավելի քան 200կմ, թշնամուց ազատագրեցին շուրջ 5000 քառ. կմ տարածք՝ 700 բնակավայրերով հանդերձ, որոնց թվում Ուլյանովո, Զնամենսկոյե, Իլյինսկոյե շրջանային կենտրոնները

և այլն։ Այդ ընթացքում հակառակորդի կորուստները կազմել են՝ 71400 սպանված ու վիրավոր, 2615 դերի, 119 ինքնաթիռ, 914 տանկ, 918 հրանոթ, 741 ականանետ, 3104 գնդացիր, 1540 ավտոմեքենա, մեծ քանակությամբ զինամթերք, պարենի, հագուստի և վառելանյութի պահեստներ[82]։ Այդ ամենը զգալի չափով նպաստեց Կուրսկի ճակատամարտի հաղթական ավարտին, ցույց տվեց գեներալ Բաղրամյանի հասուն վարպետությունը հարձակողական գործողության ընթացքում։ Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Պ. Ա. Ռոտմիստրովը «Զորավարի ուղին» հոդվածում, անդրադառնալով Կուրսկի ճակատամարտում տարած հաղթանակում Բաղրամյանի ներդրած ավանդին, նշում է. «Եթե 1942 թվականի առաջին օգոստոսյան մարտերում Բաղրամյանն իրեն դրսևորեց որպես ընդունակ բանակի հրամանատար, ապա 1943 թվականի ամառային հարձակողական մարտերից հետո նա մտավ սովետական լավագույն զորահրամանատարների թվի մեջ»[83]։

Կուրսկի ճակատամարտի օրյոլյան հատվածում 11-րդ գվարդիական բանակի գործողությունների տաղանդավոր ղեկավարման, օպերատիվ-ռազմավարական մեծ գիտելիքներ ու հմտություններ հանդես բերելու համար ԽՍՀՄ ժողկոմխորհի 1943 թ. օգոստոսի 27-ի որոշմամբ Հ. Խ. Բաղրամյանին շնորհվում է գեներալ-գնդապետի կոչում։ Նույն օրը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով գվարդիայի գեներալ-գնդապետ Հ. Խ. Բաղրամյանը պարգևատրվում է Սուվորովի 1-ին աստիճանի, այն ժամանակվա բարձրագույն զորավարական շքանշանով[84]։ Ամառային գործողությունների հաղթական ավարտից շատ չանցած գվարդիայի գնդապետ Հ. Խ. Բաղրամյանը 1943 թ. նոյեմբերի 17-ին առաջ է քաշվում 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքե-

---

82 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 11-րդ գվարդիական բանակի, ց. 5916, գ. 180, թ. 116։

83 П. А. Ротмистров. Путь полководца.—Тыл и снабжение Советских Вооруженных Сил, 1967, № 11, М., с. 17.

84 «Правда», 1943, 28, 30 августа.

րի հրամանատարի պաշտոնում։ Հաջորդ օրը մամուլում հրապարակվում է ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի որոշումը Հ. Խ. Բաղրամյանին բանակի գեներալի կոչում շնորհելու մասին[85]։

Զորքերի օպերատիվ-ռազմավարական այդպիսի խոշոր միավորման հրամանատար նշանակվելը Բաղրամյանի համար մեծ պատիվ էր. ռազմաճակատի մեջ մտնում էին 3—9 համազորային, 1—3 տանկային, 1—2 օդային բանակներ, մի քանի տանկային, մեքենայացված և հեծյալ կորպուսներ, մի քանի տասնյակ այլ զորատեսակների միավորումներ ու զորամասեր և այլն, որտեղ ընդգրկված էին 500—900 հազար զինվոր, սպա և գեներալ[86]։ Ռազմաճակատի հրամանատարի առաջին խնդիրը եղավ Գորոդոկյան գործողության պլանավորումը, որի հաջող անցկացումը կնպաստեր Նևելի շրջանում գտնվող խորհրդային զորքերի շրջապատման վտանգի վերացմանը։ Գորոդոկյան գործողությունն անցկացվեց 1943 թ. դեկտեմբերի 13—31-ը, որտեղ գլխավոր հարվածի ուղղությամբ գործում էր 11-րդ գվարդիական բանակը, որը 1-ին Մերձբալթյանի մեջ էր մտցվել Բաղրամյանի խնդրանքով։ Ճեղքելով թշնամու պաշտպանության գիծը՝ Բաղրամյանի զորքերն առաջ շարժվեցին ավելի քան 60կմ և դեկտեմբերի 24-ին ազատագրեցին Գորոդոկ քաղաքն ու խոշոր երկաթուղային կայարանը, որը հակառակորդը վերածել էր կարևոր հենակետի՝ Վիտեբսկի ուղղության վրա։ Կտրվեց Պոլոցկ—Վիտեբսկ երկաթուղային ճանապարհը, վերացվեց հակառակորդի այսպես կոչված գորոդոկյան ելուստը, որի հետևանքով ռազմաճակատի զորքերը Վիտեբսկի շրջանում դասավորված թշնամական զորքերի խմբավորման նկատմամբ դրավեցին ձեռնտու, թևանցող դիրքեր։ Գորոդոկյան գործողությունը Նևելի «պարկը կարքանդ արեց»[87]։ Տեղանքի և եղանակի բարդ պայմաններում իրագործված գործողության ըն-

---

85 «Правда», 1943, 18 ноября.

86 Военный энциклопедический словарь, с. 787.

87 Մ. Մերժանով, Զինվոր, գեներալ, մարշալ, Ե., 1975, էջ 87։

թացքում ոչնչացվեց հակառակորդի 6 հետևակային և 1 տանկային դիվիզիա, ազատագրվեց ավելի քան 1200 բնակավայր, ոչնչացվեց թշնամու 65000-ից ավելի զինվոր ու սպա, գերվեց 3300 հիտլերական, գրավվեց մեծ քանակությամբ մարտական տեխնիկա և այլ ռազմական գույք[88]: Ի պատիվ Գորոդոկն ազատագրող զորքերի, դեկտեմբերի 24-ի երեկոյան Մոսկվայում 124 հրանոթների 12 համազարկերով հրավառություն տրվեց[89]: Գորոդոկյան գործողության ընթացքում ձեռք բերված հաջողությունը որոշակի դեր խաղաց Զորակայանի կողմից Բելոռուսական ռազմավարական հարձակումը նախապատրաստելու գործում, հուսալի նախադրյալներ ստեղծեց 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի համար հետագայում Վիտեբսկի, Պոլոցկի և Մերձբալթիկայի ուղղությամբ հակառակորդին կործանիչ հարվածներ հասցնելու համար։

Զորավարի տաղանդը, նրա ռազմական իմացության մասշտաբայնությունը և բազմակողմանիությունը, օպերատիվ արվեստը մեծ չափով դրսևորվեցին 1944 թ. հունիսի 23-ից մինչև օգոստոսի 29-ը անցկացված Բելոռուսական գործողության ժամանակ, որը հայտնի է նաև «Բագրատիոն» անունով[90]: Բելոռուսական գործողությունն իրագործվելու էր 1-ին Մերձբալթյան, 1-ին, 2-րդ և 3-րդ Բելոռուսական ռազմաճակատների զորքերի համատեղ ուժերով։ Հիմնական նպատակը էր՝ ջախջախել հակառակորդի «Կենտրոն» բանակախումբը, ինչպես նաև «Հյուսիս» և «Հյուսիսային Ուկրաինա» զորախմբերի մի մասը և ազատագրել Բելոռուսիան, որից հետո խորհրդային զորքերի առջև ճանապարհները բացվում էին դեպի Մերձբալթիկա, Լեհաստան և Արևելյան Պրուսիա։ Բելոռուսական գործողության պլանը սկզբում մշակվել էր գրլ-

---

88 Ի. Ֆ. Բաղրամյան, Այսպես մենք հասանք հաղթանակի, էջ 359։

89 Освобождение городов, с. 77.

90 Բելոռուսական գործողության ընթացքում իրագործվեցին Վիտեբսկի, Պոլոցկի, Մոգիլյովի, Բորբույսկի, Մինսկի, Շյաուլյայի, Վիլնյուսի, Կաունասի, Բելոստոկի և Լյուբլին-Բրեստյան միջանկյալ գործողությունները։

խավոր շտաբում, ապա քննարկվել Զորակայանում՝ 1944 թ. մայիսի 23-ին։ Բացի Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Վ. Ստալինից, խորհրդակցությանը մասնակցում էին նրա առաջին տեղակալ Ա. Ի. Անտոնովը, 1-ին Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար Կ. Կ. Ռոկոսովսկին, նույն ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ Վ. Ե. Բուլգանինը, 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ Վ. Ե. Մակարովը, 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար Հ. Խ. Բաղրամյանը և նրա ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ Դ. Ս. Լեոնովը։ «Արդեն պատերազմից հետո ես իմացա, որ այն ժամանակ Ի. Ք. Բաղրամյանը որոշակի շտկումներ էր մտցրել Զորակայանի նախանշած «Բագրատիոն» խոշորամասշտաբ օպերացիայի պլանի մեջ,— գրում է բանակի գեներալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Ա. Պ. Բելոբորոդովը, որը Բելոռուսական գործողության ընթացքում 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի 43-րդ բանակի հրամանատարն էր,— Զորակայանում քննարկելիս Իվան Քրիստոֆորովիչը իր ռազմաճակատի աջ թևի համար երկյուղ է հայտնել այն կապակցությամբ, որ աջակողմյան հարևան 2-րդ Մերձբալթյան ռազմաճակատը օպերացիայի առաջին փուլում հարձակմանը չէր մասնակցում, իսկ մեր 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը ներդրավվում էին ոչ միայն «Կենտրոն» բանակախմբի հյուսիսային թևի ջախջախման, այլև հյուսիս-արևմուտքից Բելոռուսիայում գործող նրա բոլոր ուժերի խոր թևանցման գործողության մեջ։ Թշնամու «Հյուսիս» հզոր բանակախումբը այդ դեպքում հնարավորություն էր ստանում հյուսիսից ուժեղ հարված հասցնել 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի ձրգված թևին և թիկունքին։ Գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալ Գ. Կ. Ժուկովը համաձայնել է դրա հետ, նկատելով, որ այդպիսի հարվածի սպառնալիքը միանգամայն իրական է։ «Իսկ ի՞նչ ես առաջարկում,— դիմել է նա Իվան Քրիստոֆորովիչին։ Պատասխանը պատրաստ է եղել։ Մերձավորագույն խնդիրը կատարելիս հակառակորդի վիտեբսկյան խմբավորման շրջափակումից ու ջախջախումից հետո, ասել

է Հ. Ք. Բաղրամյանը, նպատակահարմար է հարավարևմտյան ուղղությամբ խոր հարվածի իրականացումը դնել ձախից մեր հարևան 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի զորքերի աջ թևի վրա։ Իսկ մեր հիմնական զորքերն ավելի լավ է ուղղել դեպի արևմուտք, որպեսզի Չերնյախովսկու ռազմաճակատի աջ թևի փոխգործողությամբ ակտիվորեն մասնակցենք «Կենտրոն» խմբի 3-րդ տանկային բանակի ջախջախմանը և միաժամանակ անջատենք «Հյուսիս» բանակախմբի զորքերի աջ թևը։ Այդ առաջարկությունն էլ ընդունվել է Զորակայանի կողմից։ Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, դա դրական դեր խաղաց Լիտվայի և Լատվիայի հաջող ազատագրման գործում»,— վերջացնում է Բելոբորոդովը[91]։

Զորակայանի կողմից գործողության պլանի հաստատման հետ մեկտեղ ռազմաճակատների գործողությունների համաձայնեցման համար նշանակվում են Զորակայանի ներկայացուցիչներ, Գ. Կ. Ժուկովը՝ 1-ին և 2-րդ Բելոռուսական, իսկ Ա. Մ. Վասիլևսկին՝ 3-րդ Բելոռուսական և 1-ին Մերձբալթյան ռազմաճակատներում։ Մայիսի 31-ին Բաղրամյանն ստացավ Զորակայանի ղեկավար հրահանգը, որի համաձայն սկսեց պլանավորել իր ռազմաճակատի գործողությունը։ Այդ հրահանգի համաձայն, ռազմաճակատի զորքերի առջև հետևյալ խնդիրն էր դրված. 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հետ փոխգործողությամբ անցնել Արևմտյան Դվինա գետը և տիրել Բեշենկովիչի շրջանին։ Այնուհետև ուժերի մի մասով, փոխգործողությամբ 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի աջ թևի հետ, ջախջախել հակառակորդի Վիտեբսկի խմբավորումը և տիրել Վիտեբսկ քաղաքին և հետագայում հարձակումը զարգացնել ընդհանուր ուղղությամբ դեպի Լեպել՝ Պոլոցկի ուղղությունից ամուր պաշտպանելով ռազմաճակատի գլխավոր խմբավորումը[92]։ Ռազմաճակատի ռազմական խորհրդի

---

91 Ա. Պ. Բելոբորոդով, *Խոսք այս գրքի հեղինակի մասին (տե՛ս Ի. Ք. Բաղրամյան, Մեծ ժողովրդի զավակները, Ե., 1987, էջ 440—441)։*

92 Ի. Ք. Բաղրամյան, *Այսպես մենք հասանք հաղթանակի, էջ 384—385։*

նիստում Բաղրամյանը մանրամասնորեն պատմեց Զորակայանում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ իր առաջարկությունների համաձայն գործողության պլանի փոփոխության մասին, ծանոթացրեց ստացված հրահանգին և ըստ այդմ էլ առաջադրեց յուրաքանչյուր բանակի խնդիրը։ Դրանից հետո սկսվեց գործողության նախապատրաստման ամենաեռուն շրջանը, որտեղ մեկ անգամ ևս Բաղրամյանը դրսևորեց իր զորավարական ողջ կարողությունները։ Ամենից առաջ հետախուզական հավաստի տեղեկությունների հիման վրա պարզեց ռազմաճակատի առաջիկա հարձակման գոտում հակառակորդի ինժեներական ամրությունների, զորատեսակների, զբաղեցրած տեղանքի մասին մանրամասն տվյալներ։ Դրանից հետո որոշեց գլխավոր հարվածի ուղղությունը, որը, ինչպես հետագայում ապացուցեց հարձակման ընթացքը, շատ հաջող էր ընտրված։ Բաղրամյանը պարզել էր, որ հակառակորդն իր հիմնական ուժերը կենտրոնացրել էր Պոլոցկի ու Վիտեբսկի շրջանները պահելու համար։ Ուստի որոշվեց հարվածը հասցնել նրանց միջև ընկած տարածությունում, որտեղ հակառակորդը չէր սպասում։ Ճեղքման ընթացքում կենտրոնացրեց վիթխարի ուժեր, ռազմաճակատում եղած 4900 հրանոթներից ու ականանետներից ճեղքման հատվածում կենտրոնացվեց 3760-ը, 687 տանկերից ու ինքնագնաց հրետանային սարքավորումներից՝ 535-ը, հրաձգային դիվիզիաների երեք քառորդը։ Դա ճնշող գերակշռություն էր ապահովում հակառակորդի նկատմամբ։ Արևմտյան Դվինան հաղթահարելու ընթացքում որոշվեց սերտ փոխգործողության մեջ մտնել բելոռուսական պարտիզանների հետ։ Հստակ կերպով կազմակերպվեց թիկունքային զորամասերի աշխատանքը, որոնք կարճ ժամանակաընթացքում ռազմաճակատի զորքերը ապահովելու համար տեղափոխեցին 1682 վագոն ռազմամթերք, 2930 ցիստերն վառելիք, 2765 վագոն պարենամթերք և 815 վագոն նյութական այլ միջոցներ։ Շնորհիվ ռազմաճակատի բժշկական ծառայության պետ գեներալ-լեյտենանտ Ավետիք Իդնատի Բուռնազյանի եռանդուն

ջանքերի, հարձակման սկզբին ռազմաճակատն արդեն ուներ 42 հազար մահճակալով 112 դաշտային հոսպիտալ, 74270 մահճակալով 130 էվակոհոսպիտալ[93]: Նախապատրաստական բոլոր աշխատանքները Բաղրամյանը կազմակերպեց հակառակորդից աննկատ, որպեսզի հարձակումը նրա համար անսպասելի լիներ: Հարձակման նախապատրաստման ընթացքում Հ. Խ. Բաղրամյանը ժամանակի մեծ մասն անց էր կացնում զորքերում, օգնում բանակի հրամանատարներին օգտակար խորհուրդներով: «Գործողության նախապատրաստվելու օրերին,— հիշում է բանակի գեներալ Ա. Պ. Բելոբորոդովը,— Իվան Քրիստափորովիչը ռազմաճակատի ամբողջ հրամկազմին ակնբախորեն ցույց տվեց, թե ինչպես պետք է մեծ ու փոքր խնդիրների զանգվածում գտնել գլխավոր օղակը, որին ամուր ու խելացի կերպով կառչելով կարելի է դուրս քաշել ամբողջ շղթան՝ հաղթանակն ապահովելով նվազ զոհերով: Հրամանատարի կարծիքով այդ գլխավոր օղակը հիմնական ջրային արգելքի՝ Արևմտյան Դվինայի հնարավորին չափ արագ և լավ կազմակերպված գրոհանցումն էր: Եվ նա առավելագույն ուշադրություն նվիրեց դրան, հմտորեն օգտագործելով Դնեպրի և մյուս խոշոր գետերի գրոհանցման ժամանակ մեր զորքերի կուտակած մարտական հարուստ փորձը: Իվան Քրիստափորովիչը լայնորեն ու ճկուն օգտագործեց նաև այն կարևոր հանգամանքը, որ Բելոռուսիայի տարածքում գործում էին մարտերում կոփված բազմաթիվ պարտիզանական ջոկատներ: Նրանց հրամանատարության հետ համաձայնեցված էր, թե նրանք որտեղ և գետանցման համար ինչպիսի տեղեր կզավթեն և իրենց ձեռքում կպահեն մինչև մեր առաջավոր զորամասերի մոտենալը, որտեղ և ինչպիսի գետանցման միջոցներ կնախապատրաստվեն»[94]:

Կարմիր բանակի գլխավոր շտաբի պետ, Խորհրդային Միության մարշալ Ա. Մ. Վասիլևսկին, որն այդ ժամանակ Զորակայանի ներկայացուցիչն էր 1-ին Մերձբալթյան ռազմաճա-

---

[93] Նշվ. աշխ., էջ 389—392։

[94] Ա. Պ. Բելոբորոդով, Խոսք այս գրքի հեղինակի մասին, էջ 442։

կատում, հետագայում նույնպես բարձր է գնահատել Բաղրամյանին ընդհանրապես. «Անտարակույս, Ի. Ք. Բաղրամյանը շնորհալի զորավար է։ Նա ունի և հրամանատարական, և շտաբային փորձ, որը օգնում է նրան հաջող կերպով լուծելու ինչպես զորքերին ղեկավարելու, այնպես էլ օպերացիաների պլանները մշակելու հարցերը, ընդ որում նա անպայման ձգտում էր գտնել հաղթանակի հասնելու ամենակարճ ճանապարհները»[95]:

Նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո 1944 թ. հունիսի 23-ի վաղ առավոտյան, ռազմաճակատի զորամիավորումներն անցան հարձակման։ Հակառակորդը, որն այդ ուղղությամբ հարձակում չէր սպասում, ընկրկեց։ Բաղրամյանն իր հրամանատարական կետից մեծ օպերատիվությամբ ղեկավարում էր զորքերի գործողությունները։ Անհրաժեշտ պահին նա կարգադրեց ճեղքման մեջ մտցնել գեներալ-լեյտենանտ Վ. Վ. Բուտկովի 1-ին տանկային կորպուսը։ Արևմտյան Դվինան գետանցելուց առաջ եղավ 15-րդ առանձին գվարդիական տանկային գնդում, որն իր «ԻՍ—122» ծանր տանկերով մոտակա անտառում կանգնած գետանցման էր սպասում։ Այստեղ նրան զեկուցում է տալիս ծանր տանկերի 1-ին վաշտի հրամանատար, գվարդիայի կապիտան Աբել Պողոսի Սիմոնյանը (հետագայում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)։ Բաղրամյանին հետաքրքրում էին գետանցման բոլոր մանրամասնությունները, տանկիստների տրամադրությունը։ Իմանալով, որ զեկուցողը իր հայրենակիցն է՝ Զանգեզուրի Խնձորեսկ գյուղից, ժպտալով ասում է. «Զանգեզուրցիք քաջ կռվողներ են, քեզ տեսնեմ»[96]: Այդ օրը Սիմոնյանի վաշտը Արևմտյան Դվինայի վրա գցված նավակամրջով առաջիններից թվում է անցնում գետի մյուս ափը, ոգևորված նետվում մարտի և նպաստում հարձակման այդ տեղամասում գործողության հաջողությանը։ Մարտերում ցուցաբերած սխրանքների համար խիզախ տանկիստը ռազ-

---

[95] А. М. Василевский, Дело всей жизни, с. 489—490.

[96] Աբել Սիմոնյան, Ռազմի ճանապարհով, Ե., 1981, էջ 67—68։

մաճակատի հրամանատարի հրամանով պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով[97]:

Չխորանալով գործողության իրականացման այլ մանրամասնությունների մեջ՝ նշենք, որ շնորհիվ խնամքով մշակված նախապատրաստական աշխատանքների, Բաղրամյանի զորքերը բելոռուսական պարտիզանների աջակցությամբ հաջողությամբ հաղթահարեցին ջրային հզոր արգելքը և հարձակումը զարգացրին Զորակայանի հրահանգի համաձայն: Հունիսի 26-ին 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի 43-րդ բանակը՝ 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի 39-րդ բանակի և 1-ին օդային բանակի ուժերի աջակցությամբ ազատագրեց Բելոռուսիայի մարզային խոշոր կենտրոն Վիտեբսկ քաղաքը: Նույն օրը երեկոյան Մոսկվայում 224 հրանոթների 20 համազարկերով շնորհավորեցին Վիտեբսկն ազատագրող զորքերին[98]: Այնուհետև 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի 4-րդ հարվածային և 6-րդ գվարդիական բանակները, 3-րդ օդային բանակի համագործակցությամբ շարունակելով հարձակումը հյուսիսարևմտյան ուղղությամբ, հուլիսի 4-ին, համառ մարտերից հետո, ազատագրեցին Պոլոցկ քաղաքը, որը երկաթուղային խոշոր հանգույց էր: Այդ մարտերում աչքի ընկավ 6-րդ գվարդիական բանակի 51-րդ գվարդիական (նախկին Հայկական 76-րդ) հրաձգային դիվիզիան, որն արժանացավ Վիտեբսկյան, իսկ նրա գնդերը՝ Պոլոցկյան պատվավոր անունների[99]: Պոլոցկի գրավումով բացվեցին Լիտվա տանող ճանապարհները: Հուլիսի 4-ի երեկոյան Մոսկվայում 224 հրանոթների 20 համազարկերով հրավառություն տրվեց ի պատիվ Պոլոցկն ազատագրող զորքերի: Հունիսի 23-ից մինչև հուլիսի 4-ը Բաղրամյանի զորքերը ջախջախեցին թշնամու 6 դիվիզիա, մարտերով առաջ գնացին 180կմ, ազատագրեցին

---

97 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 33, ց. 690155, դ. 6918, թ. 112:

98 Освобождение городов, с. 68—69.

99 Կ. Ա. Հարությունյան, 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին, Ե., 1980, էջ 122:

Վիտեբսկի և Պոլոցկի մարզերը, ավելի քան 5000 բնակավայր, այդ թվում՝ Բեշենկովիչի, Լեպել, Դոկշիցի, Դիսնա քաղաքները։ Հարձակման ընթացքում ոչնչացվեց հակառակորդի 40 հազար զինվոր ու սպա, 600 հրանոթ ու ականանետ, 78 ինքնաթիռ, ավելի քան 2000 ավտոմեքենա, մեծ թվով տանկեր ու մարտական այլ տեխնիկա, վերցվեց 15000 գերի[100]։ Հայրենիքը բարձր գնահատեց 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի կատարած մարտական սխրանքները. 74157 մարդ պարգևատրվեց շքանշաններով ու մեդալներով, իսկ գործողության ժամանակ իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած 156 զինծառայողների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում։ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. հուլիսի 29-ի հրամանագրով բելոռուսական գործողության ընթացքում 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի հարձակումը հմտորեն ղեկավարելու, այդ ընթացքում ձեռք բերած ակնառու հաջողությունների, ինչպես նաև ցուցաբերած արիության ու հերոսության համար բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում[101]։

Բելոռուսիայի ազատագրումով դեռևս չավարտվեց «Բագրատիոն» գործողությունը։ Այն շարունակվեց հուլիս-օգոստոս ամիսներին։ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատը, այդ ընթացքում ստանալով նոր համալրումներ՝ 2-րդ գվարդիական և 51-րդ բանակները, հուլիսի 20-ին շարունակեց հարձակումը լիտվական Շյաուլյայ քաղաքի ուղղությամբ։ Համառ մարտերում կոտրելով թշնամու դիմադրությունը՝ երկու օր անց նրանք ազատագրեցին Պանևեժիս, իսկ հուլիսի 27-ին՝ Շյաուլյայ քաղաքները։ Այնուհետև հարձակվելով դեպի հյուսիս՝ Բաղրամյանի զորքերը մտան Լատվիայի տարածք և համառ մարտերից հետո հուլիսի 30-ին ազատագրեցին Տուկումս, իսկ օգոստոսի 1-ին՝ Ելգավա քաղաքները և Ռիգայից արև-

---

100 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 404, ց. 1, գ. 522, թ. 13։

101 «Правда», 1944, 29 июля.

մուտք, Կլապկալնիսի շրջանում դուրս եկան Բալթիկ ծով՝ Ռիգայի ծոված: Դրանով իսկ փակվեց Արևելյան Պրուսիայի հետ հակառակորդի «Հյուսիս» բանակախմբի կապող միակ ճանապարհը: Գերմանաֆաշիստական հրամանատարությունը որոշեց ամեն գնով ետ բերել կորցրածը, ուստի դիմեց կատաղի միջոցների: Օգոստոսի 2-ին գերմանական զորքերը Բիրժայի շրջանից ուժեղ հակահարված հասցրեցին Մերձբալթյան ռազմաճակատի թիկունքին: Հակառակորդը սկզբնական շրջանում հասավ մարտավարական մասնակի հաջողություններ, սակայն հետագայում կարգացնել այն չկարողացավ: 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի 6-րդ գվարդիական (հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Ի. Մ. Չիստյակով) և 43-րդ համազորային բանակները (հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Ա. Պ. Բելոբորոդով) ոչ միայն ետ մղեցին թշնամու բոլոր գրոհները՝ թույլ չտալով նրան շարժվել դեպի Պանևեժիս, այլև իրենք անցնելով հակագրոհի՝ օգոստոսի 6-ին ազատագրեցին Բիրժայ քաղաքը[102]: Սակայն հակառակորդը չէր ցանկանում հեշտությամբ հաշտվել կորցրածի հետ: Նա Շյաուլյայի ուղղությամբ կենտրոնացրեց 600 տանկերից և 250 ինքնագնաց հրանոթներից բաղկացած մի հզոր զորախումբ և օգոստոսի 16-ին հակահարձակման անցավ սկզբում հարավարևմուտքից՝ Կլեմեի, Շյաուլյայի, Տուկումսի, ապա հյուսիս-արևմուտքից՝ Աուցե-Ժագարե ուղղություններով: 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի գլխին սև ամպեր էին կուտակվել: Սակայն շնորհիվ ռազմաճակատի հրամանատարի ժամանակին ձեռնարկած միջոցառումների, որից էր 5-րդ գվարդիական տանկային բանակը շտապ այդ ուղղության վրա տեղափոխելը, թշնամին հուժկու հակահարված ստացավ և ստիպված եղավ դադարեցնել հարձակումը: Այնուամենայնիվ, գերմանացիներին հաջողվեց ծանր կորուստների գնով օգոստոսի 21-ին կրկին գրավել Տուկումսը և 30կմ միջանց-

---

102 Մ. Գ. Սահակյան, *Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում*, Ե., 1981, էջ 51:

քով վերականգնել ցամաքային կապը Արևելյան Պրուսիայի հետ։ Օգոստոսի 15—25-ը պաշտպանական մարտերի ընթացքում 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը ոչնչացրեցին հակառակորդի 15500 զինվոր ու սպա, 354 տանկ, 26 ինքնագնաց հրանոթ, 268 հրանոթ, 111 ականանետ, 514 գնդացիր և գրավեցին մեծ քանակությամբ ռազմավար. ջախջախեցին թշնամու 4-րդ, 5-րդ, 7-րդ, 12-րդ, 14-րդ, «Մեծ Գերմանիա» տանկային դիվիզիաները, 101-րդ ու «Գրոս» տանկային բրիգադները։ Օգոստոսի վերջին հակառակորդի արյունաքամ և ուժասպառ զորքերը դադարեցրին հարձակումը և անցան խորը պաշտպանության։ Շյաուլյայի գործողության ընթացքում Բաղրամյանի ռազմաճակատի զորքերը հասան ռազմավարական զգալի հաջողությունների։ Դրանով իսկ ամբողջովին ավարտվեց բելոռուսական գործողությունը, որը նպաստավոր պայմաններ ստեղծեց՝ Մերձբալթիկան ամբողջությամբ ազատագրելու համար[103]։

Բելոռուսական գործողության հարձակողական մարտերի ընթացքում՝ 1944 թ. հունիսի 23-ից մինչև օգոստոսի 15-ը 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը ազատագրեցին 17866 բնակավայր, ոչնչացրեցին 111000 գերմանական զինվոր ու սպա, 746 տանկ ու ինքնագնաց հրանոթ, 1090 հրանոթ, 666 ականանետ, 4400 գնդացիր, 3700 ավտոմեքենա, 120 պահեստ, ավար վերցրին 171 տանկ, 15 ինքնագնաց հրանոթ, 80 հրանոթ, 259 ականանետ, 1850 գնդացիր, 3433 ավտոմեքենա, 360 պահեստ, գերի վերցրին 15650 հիտլերական։ Պաշտպանական մարտերի ընթացքում՝ օգոստոսի 12—31-ը ռազմաճակատի զորքերը ոչնչացրեցին հակառակորդի 27600 զինվոր ու սպա, 1000 տանկ ու ինքնագնաց հրանոթ, 208 հրանոթ, 438 գնդացիր, 126 ինքնաթիռ, 83 զրահամեքենա, 872 ավտոմեքենա և ռազմական այլ տեխնիկա[104]։

---

103 Մ. Գ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 52—53։

104 ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի, ց. 2074, գ. 851, թթ. 4, 103։

Բելոռուսական գործողության ընթացքում 1-ին Մերձբալթյան զորքերի տարած փայլուն հաղթանակների պատվին Մոսկվայում 6 անգամ հրետանային հրավառություն տրվեց։ Նույնքան անգամ բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանի անունը հիշատակվեց Գերագույն գլխավոր հրամանատարի հրամաններում, որը ռադիոն և մամուլը տարածեց ամբողջ երկրով մեկ։

Հայ զորավարի հռչակը տարածվեց նաև խորհրդային Հայաստանում, ինչպես նաև սփյուռքահայության մեջ, որոնք ոչ միայն ուրախանում և հպարտանում էին իրենց փառապանծ հայրենակցի հաջողություններով, այլև գործնական աջակցություն ցույց տալիս գեներալի գլխավորած ռազմաճակատին։ Հայաստանի աշխատավորների անձնական խնայողությունների հաշվին կառուցվեցին և Բաղրամյանի ռազմաճակատին նվիրվեցին ինքնաթիռային մեկ էսկադրիլիա, «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուները։ Իրանահայերի նախաձեռնությամբ սփյուռքում հանգանակություն սկսվեց «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյան կառուցման համար։ Բայց այդ Թեհրանի հայերը Բաղրամյանին որպես նվեր ուղարկեցին մի թանկագին սուր[105], որն այժմ պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում։ ԱՄՆ-ի հայկական առաջադիմական հայրենասիրական կազմակերպությունների ազգային խորհուրդը՝ քարտուղար Օգսեն Սարյանի և նախագահ Թերզյանի ստորագրությամբ հեռագիր ուղարկեց Բաղրամյանին, որտեղ ասված էր. «Ամերիկահայերը Ձեզ շորհավորում են որպես հայկական մարտնչող ոգու և հանճարի խորհրդանիշ, հպարտ են Ձեր հմուտ ղեկավարությամբ կատարած հերոսական բոլոր սխրագործություններով...»[106]։ Ավելի քան 2 ամիս 1-ին Մերձբալթյան ռազմաճա-

---

105 Ն. Մ. Խալեյան, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին, Ե., 1975, էջ 259։

106 ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվ (այսուհետև՝ ՀՄՊԿԱ), ֆ. Մարշալ Բաղրամյանի, գ. 10, թթ. 20—21։

կատի 2-րդ և 6-րդ գվարդիական, 51-րդ, 43-րդ համազորային և 3-րդ օդային բանակների մարտիկների ու հրամանատարների համար 100-ից ավելի համերգներ տվեց Հայֆիլհարմոնիայի ժողովրդական երգի-պարի համույթը՝ Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ։ Ռազմաճակատից Հայաստան մեկնեցին զինվորական պատվիրակություններ։ Այդ ամենը մեծ չափով նպաստեց բանակի և ժողովրդի սերտ կապին, պարտավորեցրեց ռազմաճակատի մարտիկներին ու հրամանատարներին, այդ թվում գեներալ Բաղրամյանին, հասնել նորանոր հաջողությունների։

Բելոռուսական գործողության ավարտից հետո խորհրդային Միության հերոս, բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանի գլխավորած 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը ակտիվորեն մասնակցեցին Մերձբալթյան ռազմավարական գործողությանը, որի հիմնական խնդիրը Մերձբալթիկայի լրիվ ազատագրումն էր գերմանաֆաշիստական զավթիչներից։ Մերձբալթյան ռազմավարական հարձակողական գործողությունը ներառում էր 4 ճակատային և մերձճակատային՝ Ռիգայի, Տալլինյան, Մոնղունդյան և Մեմելյան գործողությունները։ Խորհրդային զորքերի Գերագույն գլխավոր հրամանատարության Ջորակայանի և Գլխավոր շտաբի մշակած պլանի համաձայն, 1-ին, 2-րդ և 3-րդ Մերձբալթյան ռազմաճակատների զորքերը պետք է գեպի Ռիգա զուգադիպող ուղղություններով, իսկ Լենինգրադյան ռազմաճակատի զորքերը՝ Բալթյան նավատորմի համագործակցությամբ Տալլինի ուղղությամբ հզոր հարվածներ հասցնեին հակառակորդին, մասնատեին նրա պաշտպանությունը, շրջապատեին նրա զորախմբերն ու մաս-մաս ոչնչացնեին։ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը մասնակցեցին Ռիգայի (14.09—22.10. 1944 թթ.) և Մեմելի (5—22 հոկտեմբերի 1944 թ.) գործողություններին։ Սեպտեմբերի 14-ին երեք ռազմաճակատների զորքերը սկսեցին հարձակումը Ռիգայի ուղղությամբ՝ խնդիր ունենալով ազատագրել Լատվիայի մայրաքաղաքը, դուրս գալ Բալթիկ ծով և կտրել «Հյուսիս» բանակախմբի նահանջը

դեպի Արևելյան Պրուսիա։ Հարձակման առաջին փուլում համեմատաբար առավել հաջողությունների հասան գեներալ Բաղրամյանի ռազմաճակատի զորքերը, որոնք հակառակորդի պաշտպանությունը ճեղքեցին 28կմ ճակատով և 10 օրվա ընթացքում մարտերով առաջ շարժվեցին 50կմ, ազատագրելով շուրջ 2300 բնակավայր, որոնց թվում՝ Բաուսկա, Ինցավա, Յաունելգավա և Բալդոնե քաղաքները։ Մինչև Ռիգա մընացել էր ընդամենը 16կմ[107]։ Բալդոնեն ազատագրելուց երկու օր անց՝ սեպտեմբերի 24-ին Զորակայանից հրահանգ ստացվեց՝ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի գլխավոր հարվածի ուղղությունը Ռիգայի ուղղությունից մեմելյան ուղղության տեղափոխելու մասին[108], որի շնորհիվ հակառակորդի «Հյուսիս» բանակախումբը կմեկուսացվեր Արևելյան Պրուսիայից։ Հիշյալ հրահանգի համաձայն, 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի ուժերը պետք է Ռիգայի ուղղությունից արագ և թաքուն վերախմբավորվեին մեմելյան ուղղության վրա, Շյաուլյայի շրջանում ստեղծեին ուժեղ հարվածային խմբավորում, ապա թշնամու համար անսպասելի հզոր հարված հասցնեին այդ ուղղության վրա պաշտպանվող ֆաշիստական զորքերին, դուրս գային Բալթիկ ծովի ափը և «Հյուսիս» բանակախումբը կտրեին Արևելյան Պրուսիայից։ «Մեր առաջնահերթ խնդիրն էր,— գրում է Բաղրամյանը,— ճեղքել թշնամու պաշտպանության առաջին և երկրորդ գոտիները և հասնել Տիրկշլյայ, Պլունգե, Շիլալե, Տաուրագե քաղաքների դծին։ Այնուհետև պետք էր Պալանգայից սկսած մինչև Նեմանի գետաբերանն ընկած տեղամասում դուրս գալ Բալթիկ ծովի ափ։ Ամբողջ

---

107 Ի. Քհ. Բաղրամյան, Այսպես մենք հասանք հաղթանակի, էջ 555։

108 Հարվածի ուղղության փոփոխությունը պայմանավորված էր նրանով, որ հակառակորդը Ռիգայի շրջանում էր կենտրոնացրել իր 19 դիվիզիաներից 11-ը, իսկ Մեմելի ուղղությամբ՝ ընդամենը 4-ը։ Ռազմավարական այսպիսի իրադրության մեջ այլևս նպատակահարմար չէր շարունակել հարձակումը Ռիգայի ուղղությամբ, որտեղ ավելի շատ զորքեր էին կուտակվել։ Նպատակահարմարը Մեմելի ուղղությունն էր, որտեղ թշնամին ուներ քիչ ուժեր և այդ ուղղությամբ հարձակում չէր սպասում։

օպերացիան պետք է ավարտվեր 10—11 օրում, իսկ դրա նախապատրաստումը՝ 6 օրում։ Դա շատ կարճ ժամկետ էր, քանի որ նոր ուղղության վրա հարձակման անցնելու գործը կապված էր ռազմաճակատի զորքերի հսկայական վերախմբավորման հետ»[109]:

Բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանը Ջորակյանի առաջադրանքը կատարեց ժամանակին և վարպետորեն։ Շնորհիվ ռազմավարական իմացության և մարտական հարուստ փորձի, նա օպերատիվ արվեստի դասական կանոնների համապատասխան վարպետորեն իրագործեց խորամանկ զորաշարժը։ Վեց դիշերվա ընթացքում, հակառակորդից աննկատ, Ռիգայի շրջանից Շյաուլյայի շրջան (մոտ 240կմ) փոխադրվեցին ավելի քան կես միլիոն մարդ, 10 հազար հրանոթ և ականանետ, 1300 տանկ ու ինքնագնաց հրետանային սարքավորում, բազմաթիվ այլ տեխնիկա, զենք, զինամթերք, վառելանյութ, հանդերձանք և այլն։ Երբ զորքերի այդպիսի վիթխարի զանգվածը թշնամու համար միանգամայն անսպասելի հայտնվեց նոր ուղղության վրա և Շյաուլյայից արևմուտք՝ Մեմելի ուղղությամբ հասցրեց խոյընթաց հզոր հարված, ֆաշիստական հրամանատարությունը, ոչ առանց հիմքի, այն համարեց հրաշք։ Այդ հրաշքի հետևանքով 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը, հոկտեմբերի 5-ին ճեղքելով հակառակորդի պաշտպանությունը, առաջ շարժվեցին դեպի արևմուտք՝ դեպի Բալթիկ ծով։ Կոտրելով թշնամու համառ դիմադրությունը՝ ռազմաճակատի 5-րդ գվարդիական տանկային և 51-րդ համազորային բանակների զորամիավորումները հոկտեմբերի 10-ին ազատագրեցին ծովափնյա Պալանգա քաղաքը. հակառակորդի 33 դիվիզիա կտրվեց Արևելյան Պրուսիայից և սեղմվեց Կուռլանդական թերակղզում։ Վախենալով Ռիգայի շրջանում շրջապատման մեջ հայտնվելու վրտանգից՝ գերմանաֆաշիստական զորքերը ստիպված էին հոկտեմբերի 15-ին թողնել Ռիգան և նահանջել Կուռլանդա-

---

109 Ի. Ք. Բաղրամյան, *Այսպես է սկսվել պատերազմը*, էջ 557—558։

կան թերակղզի։ Կուրլանդական փարախում հայտնված թշնամու զորքերը շրջափակվեցին ծովից ու ցամաքից, որի հետևանքով նրանք այլևս հնարավորություն չունեցան մասնակցելու խորհրդա-գերմանական ռազմական գործողությունների թատերաբեմի վճռական տեղամասերում ընթացող մարտերին։

Մերձբալթյան ռազմավարական գործողությունը, որը տևեց ավելի քան մեկ ամիս, առանց որևէ դադարի, ավարտվեց ռազմավարական մասշտաբի խոշոր հաջողությամբ։ Գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրվեցին Էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի տարածքները, բացի Կուրլանդական թերակղզուց և Մեմել (Կլայպեդա) ծովափնյա քաղաքից։ Այդ գործողության հետևանքով ջախջախվել էին հակառակորդի 59 դիվիզիաներից 26-ը, 3-ը լիովին ոչնչացվել, մնացածները շրջափակված էին Կուրլանդյան թերակղզում և Մեմելում ու կորցրել էին իրենց ռազմավարական նշանակությունը[110]։ Ֆիննական և Ռիգայի ծովածոցերում հակառակորդի ռազմածովային նավատորմը զրկվեց գործողությունների ազատությունից։ Բալթյան կարմրադրոշ նավատորմի համար ապահովվեց ելքը դեպի Բալթիկ ծովի կենտրոնական մասը, քանի որ Ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Ֆինլանդիան ստիպված էր դուրս գալ պատերազմից։ Մերձբալթյան ռազմավարական գործողության ավարտից հետո Բաղրամյանի զորքերը 1944 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին բազմաթիվ գետակների, մանր լճերի և անտառաճահճային տեղանքի, ինչպես նաև անընդհատ տեղացող հորդառատ անձրևների առկայության պայմաններում փորձում էին կոտրել թշնամու Կուրլանդական զորախմբի համառ դիմադրությունը, սակայն ապարդյուն. նոյեմբերին ռազմաճակատի առաջխաղացումը կազմեց 17—20կմ։ Դաժան մարտեր էին մղվում յուրաքանչյուր փոքրիկ ագարակի, յուրաքանչյուր

110 Ի. Ք. Բաղրամյան, Այսպես մենք հասանք հաղթանակի, էջ 616—617։

փոքրիկ բարձունքի համար։ Նոյեմբերի 6-ին գրավվեց Մաժեյկյայ-Աուցե երկաթուղին, սակայն անդադար անձրևներն ուժեղացրին ճամփախափանքը և անհնարին դարձրին ռազմաճակատի զորքերի առաջխաղացումը։

Դեկտեմբերին նույնպես ռազմաճակատի գծում որևէ էական փոփոխություն չեղավ։ Սակայն հակառակորդին հանգիստ չէին տալիս։ Ծովից նրան աքցանի մեջ էին վերցրել Բալթյան նավատորմի ռազմանավերը, օդից մեծ վնասներ էր պատճառում ինչպես ծովային, այնպես էլ ռազմաճակատային ավիացիայի գրոհային և ռմբակոծիչ ավիացիան, ցամաքից անընդհատ նրանց վրա էր թափվում հրետանու արկերի տեղատարափ անձրև։ Հակառակորդը հնարավորություն չուներ այդքան հսկայական ուժերը[111] էվակուացնել ծովով կամ էլ ճեղքել շրջափակման օղակը և ճողոպրել Արևելյան Պրուսիա։ Դեկտեմբերի 14-ին հակառակորդի շրջափակված զորքերը ենթարկվեցին օդային հզոր հարվածի, որին մասնակցում էին ավելի քան 200 ինքնաթիռ։ Հիմնական հարվածը հասցվում էր Լիեպայա խոշոր նավահանգստին (Լատվիա)։ Այստեղ իր օդային վերջին մարտը մղեց Արցախի հերոս զավակ, լեգենդար օդաչու, 47-րդ գրոհային ավիագնդի հրամանատար, Խորհրդային Միության հերոս, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Գևորգի Ստեփանյանը։ Նա իր գրոհային «Իլ-2» ինքնաթիռով անձամբ ոչնչացրել էր հակառակորդի 80 տանկ, 600 ավտոմեքենա, 140 դաշտային և զենիթային հրանոթ, 130 գնդացրային կետ, 27 ինքնաթիռ, 40 երկաթուղային վագոն, շուրջ 5000 զինվոր ու սպա, խորտակել տարբեր տիպի 13 նավ և այլն[112]։ Վերջին մարտին նա դնաց, երբ

---

[111] 1945 թ. մայիսի 9-ին, երբ Թշնամու զորախումբը անձնատուր եղավ, գերի հանձնվեց շուրջ 300000 զինվոր ու սպա, 48 գեներալ, ավար վերցվեց 158 ինքնաթիռ, մոտ 500 տանկ ու գրոհային հրանոթ, շուրջ 3500 հրանոթ և ականանետ, 18 հազարից ավելի ավտոմեքենա, 675 քարշակ, բազմաթիվ այլ տեխնիկա և հսկայական քանակությամբ զանազան նյութական պաշարներ։

[112] Книга о героях, с. 21.

հրամանատարության կողմից ներկայացվել էր Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման։ Բաղրամյանը սրտի կլսկիծով է պատմում իր հայրենակցի վերջին սխրանքի մասին. «Գրոհիչ ինքնաթիռների առաջին խումբը վարում էր փառապանծ օդաչու, Խորհրդային Միության հերոս, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը,— գրում է զորավարը,— գրոհիչ ինքնաթիռների և խոյընթաց ռմբակոծիչների կենտրոնացված հարվածի հետևանքով, մեկը մյուսի ետևից խորտակվեցին գերմանական խոշոր փոխադրանավեր։ Շուտով 24000 տոննա ջրածավալի 6 նավեր սուզվեցին ջրի տակ։ Իսկ օդում խփվեց 21 ֆաշիստական ինքնաթիռ։ Ցավոք, կորուստներ ունեցան նաև գրոհողները։ Այդ օրը զոհվեց նաև Նելսոն Ստեփանյանը։ Գրոհներից մեկի ժամանակ նրա ինքնաթիռը վնասվեց, բայց անվեհեր օդաչուն իր մեքենան չուղղեց դեպի ետ, այլ վերջին ճիգերով այն գցեց ֆաշիստական նավի վրա։ Ես անձամբ գիտեի այդ խիզախ մարդուն, ուստի և ինձ մի առանձին ցավ պատճառեց նրա զոհվելու լուրը»[113]։

Նոր տարին՝ 1945 թվականը 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը դիմավորեցին նույն դիրքերում, սակայն զինվորները, սպաները և գեներալները, այդ թվում և բանակի գեներալ Բաղրամյանը, մեծ լավատեսությամբ էին համակված մոտալուտ հաղթանակի հավատով։

Հայրաբերական անդորրը խախտվեց հունվարի 10-ին, երբ Մեմելի (Կլայպեդա) շրջանից հակառակորդի հետևակորդի խոշոր ուժեր 60 տանկերի աջակցությամբ, գրոհեցին Կրետինգայի ուղղությամբ՝ նպատակ ունենալով ճեղքել շրջափակման օղակը և միանալ Կուրլանդյան խմբավորմանը։ Սակայն հակառակորդի մտադրությունը ոչ միայն չիրականացավ, այլև շնորհիվ Բաղրամյանի կողմից ժամանակին ձեռնարկված օպերատիվ միջոցառումների, հունվարի 28-ին լիտ-

---

[113] Ի. Խ. Բաղրամյան, Այսպես մենք հասանք հաղթանակի, էջ 627 (1945 թ. մարտի 6-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանով Ն. Գ. Ստեփանյանին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում)։

վական Մեմել նավահանգիստը, որը հակառակորդի կարևոր ռազմավարական հենակետն էր Բալթիկ ծովի ափին, ազատագրվեց 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի 4-րդ հարվածային բանակի և Բալթյան նավատորմի փոխգործողության շնորհիվ։ Դրանով իսկ ավարտվեց Լիտվայի ազատագրումը գերմանաֆաշիստական զավթիչներից։ Մեմելի ազատագրման համար մղված մարտերում հակառակորդի կորուստները կազմեցին 5000 սպանված զինվոր ու սպա, 40 տանկ, 70 հրանոթ, 188 ականանետ, ավելի քան 180 գնդացիր, 48 շոգեքարշ, ավելի քան 1400 փակ ու բաց վագոններ և շատ այլ տեսակի տեխնիկա ու ռազմական գույք[114]։

Մեմելի ազատագրումից որոշ ժամանակ անց՝ փետրվարի առաջին տասնօրյակին, բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանը ռազմաճակատի շտաբի հետ միասին տեղափոխվեց Արևելյան Պրուսիա։ Զորքերի ղեկավարումն ավելի էական դարձնելու համար 1945 թ. փետրվարի 22-ին Զորակայանը վերացրեց 1-ին Մերձբալթյան ռազմաճակատը և նրա բանակների մի մասի հիման վրա ստեղծեց խորհրդային զորքերի Զեմլանդական օպերատիվ խմբավորումը, որը մտցվեց 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի մեջ, Զեմլանդական զորախմբի հրամանատար նշանակվեց բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանը. փետրվարի 18-ին մարտերում զոհված բանակի գեներալ, կրկնակի հերոս Ի. Դ. Չերնյախովսկու փոխարեն 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար նշանակվեց Խորհրդային Միության մարշալ Ա. Մ. Վասիլևսկին։ Հ. Խ. Բաղրամյանը միաժամանակ ռազմաճակատի հրամանատարի 1-ին տեղակալն էր։ Բաղրամյանի անմիջական հրամանատարության տակ գտնվող զորքերի Զեմլանդական օպերատիվ խմբավորման մեջ մտնում էին՝ 11-րդ գվարդիական, 39-րդ և 43-րդ համազորային բանակները, 1-ին տանկային կորպուսը, 2-րդ գվարդիական հրետանային ճեղքման դիվիզիան, երեք հակատանկային կործանիչ հրետանային բր-

114 Ի. Քաղրամյան. Այսպես մենք հասանք հաղթանակի, էջ 643։

րիգադներ, երկու հաուբիցային և երկու առանձին զենիթային հրետանային գնդեր, ինժեներական զորամասեր, կապի առանձին գումարտակներ և այլն։ Մարշալ Վասիլևսկին մարտի 7-ին Բաղրամյանի զորախմբի առջև առաջնահերթ խնդիր դրեց նախապատրաստվել ջախջախելու թշնամու արևելապրուսական խմբավորումը և գրավել պրուսական յունկերների միջնաբերդ, խոշոր ամրոց-քաղաք Քյոնիքսբերգը։ Հիտլերը հատուկ նշանակություն էր տալիս Քյոնիքսբերգի պաշտպանությանը, քաղաքը վեր էր ածվել մի անառիկ ամրոցի՝ հագեցած բերդամասերով, բազմաթիվ ամրակառույց կրակակետերով, խոշոր և պաշտպանության համար հարմարեցված բացառիկ ամրապինդ շենքերով, մարտական տեխնիկայի և հետևակազորի համար բազմաթիվ հնարակերտ արգելքներով, երեք պաշտպանական գոտիներով, որոնք պատված էին դոտերով, համատարած խրամուղիներով, ջրով լցված հակատանկային լայն փոսերով, լարափակոցներով և այլն։ Քյոնիքսբերգի կայազորը, որի հրամանատարը փորձառու զինվորական, գեներալ-գնդապետ Օտտո Լաշն էր, իր տրամադրության տակ ուներ ավելի քան 130000 զինվոր, 4000 հրանոթ ու ականանետ, 100 տանկ ու գրոհային հրանոթ, 170 ինքնաթիռ[115]։

Վասիլևսկուց ստանալով առաջադրանքը՝ Բաղրամյանն իր զինակիցների հետ ձեռնամուխ եղավ Քյոնիքսբերգյան գործողության պլանի մշակմանը։ Նշենք, որ Վասիլևսկին այդ ժամանակ զբաղված էր հակառակորդի Հեյլսբերգյան խմբավորման վրա հարված նախապատրաստելու և իրականացնելու գործով։ Այնպես որ, Քյոնիքսբերգի գրավման գործողության նախապատրաստական աշխատանքների ողջ ծանրությունն ընկավ Բաղրամյանի ուսերին։ Եվ նա իր ողջ ուժերը նվիրեց այդ պատասխանատու գործի իրականացմանը։ Ամենաբարդ հարցը, որ անմիջապես ծառացավ նրա առջև, զորքերի նախապատրաստման հարցն էր։ Չէ՞ որ նրանք պետք է

115 Մ. Մերժանով. Զինվոր, գեներալ, մարշալ, էջ 149։

ճեղքերին մի այնպիսի պաշտպանություն, որը, ինչպես արդեն նշեցինք, հագեցած էր երկաթբետոնե և քարակոփ ինժեներական կառուցվածքներով։ Որպեսզի վստահորեն և գործիմացությամբ հարձակվեին բերդային ամրությունների վրա, Բաղրամյանի ցուցումով զորախմբի շտաբի օպերատորների, տեղագիրների և ինժեներների ջանքերով ստեղծվեց բերդաքաղաքի հսկա մակետը (մոտ 40 քառ. մետր), որի վրա ամենայն մանրամասնությամբ ցույց էր տրված հակառակորդի պաշտպանական ու ամրոցային կառուցվածքների ողջ համալիրը։ Քաղաքի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շրջապարիսպների վրա նշված էին հակառակորդի զորքերի խմբավորման անունը, զենքի բոլոր տեսակների կրակային համակարգը, հակահետևակային և հակատանկային արգելափակոցները, ամրոցային բերդամասերը, թաղամասերն ու փողոցները, պաշտպանության համար հարմարեցված շենքերը և այլն։ Բացի այդ, պատրաստված և հարկավոր քանակությամբ բազմացված էր քաղաքի հատակագիծը։ Մակետն ապահովում էր Ֆյոնիքսբերգի այնպիսի հստակ ու ցայտուն տեսողական ընկալում, որ Բաղրամյանը հաճույքով էր նրա օգնությամբ բանակների, կորպուսների և դիվիզիաների հրամանատարներին ծանոթացնում առաջիկա մարտական գրոհի համար զորքերի առաջադրվելիք խնդիրներին։ «Պարզ պատկերացնելով մոտալուտ խնդրի ամբողջ դժվարությունը,— հետագայում նշել է զորավարը,— օպերացիայի պլանը մենք մշակում էինք բացառիկ խնամքով և ոչ մի հարձակողական օպերացիա մենք այդպես հանգամանորեն չենք նախապատրաստել»[116]։ Մարտի 15-ին «Զեմլանդ» գործողության պլանի նախագիծը բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանը և զորախմբի շտաբի պետ, գեներալ-գնդապետ Վ. Վ. Կուրասովը ներկայացրին մարշալ Ա. Մ. Վասիլևսկուն։ Մանրազնին ուսումնասիրելով պլանի նախագիծը՝ մարշալը հավանություն տվեց և վերջնական հաստատելու համար այդ մասին հայտնեց Դերագույն

---

116 Ի. Քաղրամյան, *Այսպես մենք հասանք հաղթանակի*, էջ 674։

գլխավոր հրամանատարին։ Բաղրամյանի զորախմբի մեջ մտցվեց նաև 50-րդ համազորային բանակը, լրացուցիչ այլ համալրումներ։ Քյոնիքսբերգի գրոհի ժամանակ Բաղրամյանի չորս բանակներին (11-րդ գվարդիական, 39-րդ, 43-րդ և 50-րդ համազորային) օդից զգալի աջակցություն էին ցույց տալու 1-ին, 3-րդ, 15-րդ և 18-րդ օդային բանակների ավիացիան, իսկ ծովից՝ Կարմրադրոշ Բալթյան նավատորմի ռազմանավերը։

Քյոնիքսբերգի գրավման պլանում առաջնակարգ տեղ էր հատկացված հրետանուն։ Բաղրամյանին հաջողվեց մինչև հարձակման օրը Քյոնիքսբերգի շրջանում հավաքել շուրջ 5000 հրանոթ ու ականանետ, 300 հրթիռային-հրետանային կայանք, 5 նավատորմային երկաթուղային մարտկոցներ, որոնց մեջ մտնում էին 15 հեռահար հրանոթներ։ Հրետանու համարյա կեսը կազմված էր խոշոր, այդ թվում 203-ից մինչև 305 միլիմետր տրամաչափի գերհզոր հրանոթներից, որոնք ունեին ահարկու հարվածային ուժ։ Բաղրամյանն իր զինակիցների հետ միասին հսկայական աշխատանք կատարեց դրոհային ջոկատների կազմակերպման, նրանց հանդերձավորման և վարժեցման ուղղությամբ։ Ամենաբարդ խնդիրը դրվել էր ինժեներական զորքերի առջև, որոնք քաղաքը դրոհող զորքերի համար պետք է պատրաստեին բազմաթիվ ճանապարհներ, կամուրջներ, ականափակոցներում և լարափակոցներում բացեին հարյուրավոր անցարաններ և այլն։ Զորքերի բարոյական և մարտական ոգին բարձր պահելու ուղղությամբ կարևոր դեր կատարեցին քաղաշխատողները՝ 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի քաղվարչության պետ, հայազգի գեներալ-մայոր Սերգեյ Բոգդանի Կազբինցևի գլխավորությամբ։

1945 թ. ապրիլի 6-ի վաղ առավոտյան, մշակված պլանի համաձայն, Բաղրամյանի զորքերը սկսեցին Քյոնիքսբերգի գրոհը։ Սկզբում հրետանին ու ավիացիան ամրոց-քաղաքի վրա թափեցին հազարավոր տոննաներով ավերիչ արկեր ու ռումբեր։ Այնուհետև ծանր տանկերի ու ինքնագնաց

հրետանային սարքավորումների աջակցությամբ հարձակման անցան գրոհային խմբերը։ Գերմանացիները դիմադրում էին մոլեռանդ համառությամբ։ Բաղրամյանը զորքերի ղեկավարումն ավելի հստակ իրականացնելու նպատակով եղավ 43-րդ բանակի հրամանատար, գեներալ- գնդապետ Ա. Պ. Բելոբորոդովի հրամանատարական դիտակետում, որը տեղավորված էր առաջին գծից 800—900 մետր հեռավորության վրա և, ամեն րոպե վտանգի ենթարկելով կյանքը, մոտիկից ղեկավարեց քաղաքի արվարձաններում մղվող մարտը։ Քաղաքի վրա գրոհը զարգանում էր հաջողությամբ։ Հյուսիս-արևմտյան և հյուսիսային շրջաններից քաղաք էին ներխուժում 39-րդ, 43-րդ և 50-րդ բանակների միավորումները, հարավից մեծ թափով առաջ էր ընթանում փառապանծ 11-րդ գվարդիական բանակը։ Ապրիլի 9-ին Քյոնիգսբերգի կայազորը գեներալ Լաշի գլխավորությամբ անձնատուր եղավ։ Ռազմաճակատի շտաբում մարշալ Ա. Մ. Վասիլևսկու և բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանի մասնակցությամբ Օտտո Լաշի հարցաքննության ժամանակ վերջինս քաղաք-ամրոցի անկման պատճառների մասին ասաց. «Բերդի զինվորներն ու սպաներն առաջին երկու օրը դիմանում էին կայուն կերպով, բայց ռուսներն ուժերով գերազանցում էին մեզ և հաղթեցին։ Նրանք կարողացան թաքուն կենտրոնացնել հրետանու և ինքնաթիռների այնպիսի քանակություն, որոնց հոծախումբ գործադրումը քարուքանդ արեց բերդի ամրությունները և բարոյալքեց զինվորներին ու սպաներին։ Մենք լիովին կորցրինք զորքերի կառավարումը։ Զրամասերի շտաբների հետ կապվելու համար ամրություններից փողոց դուրս գալով, մենք, կորցնելով կողմնորոշումը, չգիտեինք ուր գնալ, այնքան որ քանդված ու այրվող քաղաքը փոխել էր իր տեսքը։ Երբեք չէր կարելի ենթադրել, որ այնպիսի մի բերդ, ինչպիսին Քյոնիգսբերգն էր, այդքան շուտ կընկնի։ Ռուսական հրամանատարությունն այդ օպերացիան լավ էր մշակել և հիանալի իրականացրեց։ Քյոնիգսբերգի մոտ մենք կորցրեցինք ամբողջ 100-հազարանոց բանակը։ Քյոնիգս-

բերգի կորուստը՝ դա խոշորագույն բերդի և Արևելքում գերմանական հենարանի կորուստ է»[117]։ Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են։ Ընդամենը չորս օրվա հաղթական մարտերում ոչնչացվեց հակառակորդի 42000 զինվոր ու սպա, 120 ինքնաթիռ, 104 տանկ ու ինքնագնաց հրանոթ, 1196 հրանոթ, 588 ականանետ, 82 զրահատրանսպորտյոր, 1719 ավտոմեքենա, շուրջ 2000 գնդացիր, ավերվեցին 143 դոտ ու բերդամաս, գերի վերցվեց 92000 մարդ, այդ թվում 1800 սպա ու գեներալ, ավար գրավվեց 128 ինքնաթիռ, 1500 ականանետ, մարտական այլ տեխնիկա[118]։ Նույն օրը երեկոյան ժամը 24-ին Մոսկվան 324 հրանոթների 24 համազարկով ողջունեց քաղաք-ամրոցը գրավող զորքերին։ Գերագույն գլխավոր հրամանատարի ապրիլի 9-ի հրամանով շնորհակալություն հայտնվեց Քյոնիքսբերգը գրաված զորքերին։ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թ. հունիսի 9-ի հրամանագրով հիմնվեց «Քյոնիքսբերգի գրավման համար» մեդալ, որով պարգևատրվեց ավելի քան 750000 մարդ[119]։ Քաղաք-ամրոցը գրոհելիս առավել աչքի ընկած 98 զորամասերի շնորհվեց «Քյոնիքսբերգյան» անվանում։ Այդ զորամասերի թվում էր գնդապետ (այժմ գեներալ-գնդապետ) Խաչիկ Մինասի Համբարյանի 995-րդ հրաձգային գունդը։

Քյոնիքսբերգի գրավման ժամանակ ռազմավարական խոշոր զորախմբավորման գործողությունները հմտորեն և արիաբար ղեկավարելու համար բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թ. ապրիլի 20-ի հրամանագրով երկրորդ անգամ պարգևատրվեց Սուվորովի 1-ին աստիճանի շքանշանով[120]։ Նրա վաղեմի մարտական ընկեր, գեներալ-մայոր Բագրատ Առուշանյանը՝ 11-րդ գվարդիական հրաձգային կորպուսի հրա-

---

117 А. М. Василевский. Дело всей жизни, с. 417—418.

118 Ի. Քաղրամյան, *Այսպես մենք հասանք հաղթանակի*, էջ 735։

119 Ордена и медали СССР, М., 1974, с. 171.

120 «Правда», 1945, 20 апреля.

մանատարը, պարգևատրվեց Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանով։ Քյոնիքսբերգի գրավման ժամանակ կարևոր դեր խաղացած 43-րդ բանակի հրամանատարի տեղակալը գեներալ-մայոր Հայկ Մարտիրոսյանն էր, որն արժանացավ Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանին[121]։

Քյոնիքսբերգի գրոհի տրամաբանական շարունակությունը եղավ քաղաք-ամրոցից արևմուտք գտնվող Ջեմլյանդյան թերակղզում ֆաշիստական զորքերի ջախջախման և թերակղզու Պիլլաու (Բալտիյսկ) խոշոր ռազմածովային բազայի գրավման նպատակով ապրիլի 13—25-ը անցկացված գործողությունը, որի վերջում Բաղրամյանը նշանակվել է 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար։ Ջեմլյանդական գործողության ընթացքում հակառակորդը կորցրեց 80000-ից ավելի զինվոր ու սպա։ Ռազմաճակատի զորքերը վերցրին մեծ ռազմավար. 268 տանկ ու գրոհային հրանոթ, 239 զրահատրանսպորտյոր, 1185 դաշտային հրանոթ, 576 ականանետ, շուրջ 5000 գնդացիր, 107 ինքնաթիռ և 300-ից ավելի տարբեր զինապահեստներ։ Հիտլերականները կորցրին իրենց վերջին ռազմածովային բազան՝ Պիլլաուն[122]։

Պիլլաուի գրավումից հետո 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար, Խորհրդային Միության հերոս, բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանի հիմնական խնդիրն էր նվազագույն կորուստներով, ամենաեղեմ ժամկետում ավարտել հակառակորդի ջեմլյանդական խմբավորման մնացորդների ջախջախումը՝ Ֆրիշես-ներունգ ցամաքալեզվակում և Վիսլայի գետաբերանում։ Մայիսի 9-ին՝ Հաղթանակի օրը, հակառակորդի ավելի քան 30-հազարանոց զորախումբը 3 գեներալների գլխավորությամբ անձնատուր եղավ։ Վերջացավ Հայրենական մեծ պատերազմը, որին առաջին օրվանից մինչև վերջ՝ ուղիղ 1418 օր, ակտիվ մասնակցություն էր ունեցել Հ. Խ. Բաղրամյանը և իր արժանի ավանդը ներդրել ֆաշիզմի

---

121 Մ. Գ. Սահակյան, *Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում*, էջ 157։

122 Ի. Ք. Բաղրամյան, *Այսպես մենք հասանք հաղթանակի*, էջ 756։

դեմ տարած հաղթանակի գործում։ Այդ հաղթանակն ունեցավ համաշխարհային պատմական նշանակություն, որի շնորհիվ մարդկությունն ազատվեց ֆաշիստական ստրկացման վտանգից, համաշխարհային քաղաքականությունը փրկվեց կործանումից, իսկ աշխարհի շատ ժողովուրդներ ազգային-ազատագրական դարթոնք ապրեցին, որի հետևանքով փլվեց համաշխարհային գաղութատիրական համակարգը։ Եվրոպական երկրների մի շարք ժողովուրդներ ուղղակի փրկվեցին լիովին ոչնչանալուց (հրեաներ, լեհեր, բելոռուսներ և այլն)։ Այդ հաղթանակի շնորհիվ, ինչպես արդեն նշեցինք, հայ ժողովուրդը ևս փրկվեց մի նոր եղեռնից, որը մտադրվել էր իրականացնել ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիան, պատերազմի առաջին շրջանում խորհրդային Հայաստանի սահմանների մոտ կենտրոնացնելով մինչև ատամները զինված 26 մարտունակ դիվիզիա։ Սակայն հենց պատերազմի առաջին շրջանում Մոսկվայի, ապա Ստալինգրադի մոտ տարած հաղթանակները հարկադրեցին թուրքերին հրաժարվել իրենց ստոր մտադրությունից։

Մայիսի 9-ին ինչպես ամենուր, այնպես էլ մարշալ Բաղրամյանի գլխավորած 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի բոլոր բանակներում, տեղի ունեցան միտինգներ, որտեղ հաղթողներն իրենց անսահման բերկրանքն էին արտահայտում հաղթանակի առթիվ, որ վերջապես ավարտվեցին ժողովրդի տառապանքները և որ առջևում իրենց սպասում է խաղաղ աշխատանք ու հսկայական գործեր պատերազմի հասցրած վերքերը բուժելու համար։

Մայիսի 24-ին բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանը հրավիրվեց Մոսկվա, Կրեմլ, Գերագույն գլխավոր հրամանատարի մոտ՝ ռազմաճակատների բոլոր հրամանատարների հետ միասին մասնակցելու հատուկ խորհրդակցության և հանդիսավոր ճաշկերույթի։ Իսկ ուղիղ մեկ ամիս անց նա Կարմիր հրապարակում տեղի ունեցած Հաղթանակի զորահանդեսի ժամանակ խրոխտ քայլերով առաջնորդում էր 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի համահավաք գունդը։

Հետպատերազմյան տարիներին բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանը շարունակեց զինվորական ծառայությունը ԽՍՀՄ Զինված ուժերի շարքում և վարեց մի շարք պատասխանատու պաշտոններ։ 1945—1954 թվականներին նա եղել է Մերձբալթյան զինվորական օկրուգի հրամանատար։ Ահա թե ինչպես է բնութագրել Բաղրամյանին օկրուգի հրամանատարի 1-ին տեղակալ, գեներալ-գնդապետ Լ. Մ. Սանդալովը. «Ես մեկ անգամ չէ, որ եղել եմ Իվան Քրիստոֆորովիչի մոտ։ Ինձ զարմանք էր պատճառում նրա կարողությունը՝ օգտագործելու մարտական հարուստ փորձը օպերատիվ միջոցառումների անցկացման ժամանակ և զորքերի ուսումնական նախապատրաստության ընթացքում։ Ղեկավարման նրա հատուկ ոճը և բարձր հեղինակությունը նպաստեցին ստեղծելու օկրուգային բարձր կազմակերպված լավ վարչություն, որն ապահովեց օկրուգը դուրս բերելու առաջին տեղերից մեկը»[123]։ 1946 թ. փետրվարին Լատվիայի մայրաքաղաք Ռիգայի բնակչությունը Հ. Խ. Բաղրամյանին ընտրեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր։ Մեկ տարի անց՝ 1947 թվականին օկրուգի հրամանատարը ընտրվեց նաև Լատվիական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, Լատվիայի Կոմկուսի կենտկոմի անդամ։ 1954 թ. մայիսին բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանն առաջ քաշվեց ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչ, իսկ մեկ տարի անց՝ պաշտպանության նախարարի ընդհանուր հարցերի գծով տեղակալ։ 1955 թ. մարտի 11-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով բանակի գեներալ, խորհրդային Միության հերոս Հ. Խ. Բաղրամյանին շնորհվեց Խորհրդային Միության մարշալի կոչում[124]։ 1956 թ. դարձանը Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության հերոս, բանակի գեներալ Հ. Խ. Բաղրամյանը նշանակվում է Գլխավոր շտաբի ակադեմիայի

---

[123] Л. М. Сандалов. Путь полководца.—Военно-исторический журнал, 1967, № 11. с. 46.

[124] «Правда», 1955, 11 марта.

պետ և այդ պաշտոնում աշխատում է շուրջ երկու տարի։ Այստեղ նա սովորել էր 1936—1938 թվականներին, այնուհետև մինչև 1940 թվականը աշխատել որպես ավագ դասախոս։ Ակադեմիայի պետի պատասխանատու պաշտոնում մարշալ Բաղրամյանը շատ բան արեց խորհրդային ռազմական գիտության կազմակերպման և այն գործնականում կիրառման գործում։ Նա գլխավորում էր ակադեմիայի համալրումը, ուսումնական դասընթացի կազմակերպումը, կարդում բարձրորակ դասախոսություններ ռազմավարության և մարտավարության խնդիրների շուրջը, վերլուծում Հայրենական մեծ պատերազմի տարիներին խորհրդային բանակի մղած ճակատամարտերի փորձը, քննում էր ժամանակակից ռազմական գիտության զարգացումը։ Հ. Խ. Բաղրամյանը ղեկավարում էր ակադեմիայի գիտական խորհրդի գործունեությունը, ընդունում ռազմական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճաններ ստանալու համար ներկայացված ատենախոսությունները, կազմակերպում դրանց պաշտպանությունները։ Երկու տարվա արդյունավետ աշխատանքով զինված ուժերի բարձրագույն զինվորական կադրերի այդ դարբնոցը հասավ զգալի հաջողությունների[125]։

Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Խորհրդային Միության հերոս, ռազմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պ. Ա. Ռոտմիստրովը, որն այդ տարիներին գլխավոր շտաբի ակադեմիայում աշխատում էր որպես ամբիոնի վարիչ, գրել է. «Բարձրագույն ռազմական ակադեմիան վերակառուցելու և զինված ուժերի ռազմագիտական իսկական կենտրոն դարձնելու համար նրա պետ է նշանակվում Խորհրդային Միության մարշալ Ի. Խ. Բաղրամյանը։ Երկու տարվա արդյունավետ աշխատանքով զինված ուժերի բարձրագույն զինվորական կադրերիայդ դարբնոցը հասավ նոր բարձրության։ Նրա պատերի մեջ ինձ վիճակվեց նորից

---

125 Ա. Ն. Մնացականյան, *Մարշալ Բաղրամյան*, էջ 274։

աշխատել Իվան Խրիստոֆորովիչի հետ ձեռք ձեռքի տված։ Եվ ինձ նորից հիացրեց նրա կարողությունն ամեն մի նախաձեռնության մեջ մտցնել ստեղծագործական ոգի։ Նրա ղեկավարության ներքո հաճելի էր աշխատել. նա երբեք չէր կաշկանդում նախաձեռնությունը, ոչ ոքի չէր պարտադրում իր կարծիքը և գերադասում էր համոզելը հարկադրելուց։ Նա սիրում էր կրկնել, թե գիտության մեջ չի կարելի հրամայել և այդ նկատառումով էլ ինքը երբեք իր հեղինակությունը ծանր մահակով չէր հարձակվում ակադեմիայի գիտնականների վրա, եթե նրանց կարծիքներն այս կամ այն հարցերում հակասում էին իր սեփական կարծիքին։ Գիտական վեճերի մեջ նա չէր ընդունում իշխանական հեղինակությունը։ Ինձ հաճախ վիճակվում էր ռազմագիտության տարբեր հարցերով բանավիճել ակադեմիայի պետի հետ, բայց մեր վեճերը երբեք չէին փոխանցվում անձնական փոխհարաբերությունների վրա, այլ, ընդհակառակը, փոխադարձ հարգանքի համար պայմաններ էին ստեղծում։ Հավասարակշռված փոխհարաբերությունները, անվրդով հանգստությունը և բարի սրտադին ուշադրությունը դեպի բոլորը՝ սկսած ակադեմիայի ամբիոնների ղեկավարներից և վերջացրած շարքային տեխնիկական աշխատողներով, դեպի Բաղրամյանը հանդես էին բերում խոր հարգանքի և անկեղծ սիրո զգացումներ։ Ահա թե ինչու 1958 թ. հունիսին, երբ կառավարությունը Սովետական Միության մարշալ Բաղրամյանին հանձնարարեց գլխավորել զինված ուժերի թիկունքը, ակադեմիայի անձնակազմն անկեղծ ափսոսանքով բաժանվեց նրանից»[126]։

Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության հերոս Հ. Խ. Բաղրամյանը ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալի, զինված ուժերի թիկունքի պետի պաշտոնում աշխատեց շուրջ 10 տարի։ Այդ ժամանակաընթացքում նա թիկունքային ծառայությունը վերակառուցեց զինված ուժեր-

---

[126] П. А. Ротмистров. Путь полководца.—Тыл и снабжение Советских Вооруженных Сил, 1967, № 11, М., с. 21.

ում այդ տարիներին տեղի ունեցող արմատական փոփոխությունների համապատասխան, անճանաչելիորեն վերափոխեց այն։ Թիկունքային ծառայությունն ստացավ պատերազմ մղելու ժամանակակից հայացքներին առավել համապատասխանող կառուցվածք և տեխնիկական հագեցվածություն, որն ավելի բարձրացրեց զինված ուժերի մարտունակությունը, նպաստեց երկրի պաշտպանության ամրապնդմանը։ Մարշալ Բաղրամյանի այդ ծառայությունները բարձր գնահատվեցին կառավարության կողմից և 1967 թ. դեկտեմբերի 2-ին՝ ծննդյան 70-ամյակի օրը նա պարգևատրվեց Լենինի շքանշանով[127]։

1968 թ. ապրիլին մարշալ Բաղրամյանը նշանակվեց ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչների խմբի գլխավոր տեսուչ։ Այդ ժամանակ գլխավոր տեսուչների խմբում ծառայում էին այնպիսի ճանաչված զորավարներ, ինչպիսիք են՝ մարշալներ Գ. Կ. Ժուկովը, Ա. Մ. Վասիլևսկին, Կ. Կ. Ռոկոսովսկին, Ի. Ս. Կոնևը և ուրիշներ։ Նրանք սրտանց ընդունեցին Բաղրամյանի նշանակումն այդ պաշտոնում, և նորից վերսկսվեց մարտական հին բարեկամների համատեղ աշխատանքը։ Այս պաշտոնում ևս Բաղրամյանը շատ բան արեց երկրի պաշտպանության ամրապնդման, հատկապես մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործի կազմակերպման ուղղությամբ։ Նրա նախաձեռնությամբ ամբողջ երկրով մեկ կազմակերպվեցին «Զարնիցա» զինվորական-սպորտային խաղերը, որոնց մեջ ընդգրկվեցին 4—7-րդ դասարանների ավելի քան 16 միլիոն պատանիներ։ Խաղերի հիմնական նպատակն էր այդ տարիքի երեխաներին ներգրավել զինվորական, սպորտային խաղերի մեջ, ծանոթացնել շարային կարգին, արշավներում կոփել նրանց ֆիզիկական դիմացկունությունը, դաստիարակել համառություն ուսման մեջ, լավ սովորելու կարողություն։ Մարշալի նախաձեռնությամբ կազմակերպվեց նաև 8—10-րդ դասարանների աշակերտների «Օլյոնոկ» շարժումը, որի հիմնա-

---

[127] «Правда», 1967, 2 декабря.

կան նպատակը այդ տարիքի երեխաների ռազմահայրենասիրական դաստիարակությունն էր, պարտադիր զինվորական ծառայության մասին օրենքի կենսագործմանը նպաստելը։ Օրենքը նախատեսում էր, որ բանակ կանչվող զարակոչիկները նախօրոք դպրոցներում անցնեն շարային ծառայության կանոնները, ունենան ֆիզիկական, տեխնիկական և քաղաքական նախնական պատրաստություն[128]։ Բաղրամյանը հանդես էր գալիս մամուլում, որտեղ հիմնավորում էր դպրոցականների ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները, բանակի համար նախապատրաստված զորակոչիկների պատրաստման հարցերը։ Ինքը անձամբ շատ բարձր էր գնահատում հայրենիքի հանդեպ զինվորական ծառայության սրբազան պարտքի կատարումը։ Այդ կապակցությամբ մարշալը «Семья и школа» հանդեսում գրել է. «Ինձ թվում է, որ նա, ով չի անցնում բանակային ծառայության դպրոցը, իր կենսագրության մեջ կունենա ոչ մի բանով չլրացվող բաց տեղ։ Զինվորական ծառայությունը զարգացնում է նախաձեռնություն, շրջահայացություն հանդես բերելու ընդունակություն, առաջադրված խնդիրները կատարելու համար առավելագույն եռանդ, հնարամտություն և ուժեղ ձգտում»[129]։ 1973 թ. մարշալ Բաղրամյանը գլխավորեց խորհրդային ժողովրդի հեղափոխական, մարտական և աշխատանքային փառքի ուսումնասիրման և երիտասարդական համամիութենական արշավի կենտրոնական շտաբը։ Շարժումն ընդգրկեց երկրի տասնյակ միլիոնավոր պատանիների ու աղջիկների, որոնք արշավի դնացին հեղափոխական իրադարձությունների վայրերով, Հայրենական մեծ պատերազմի ճամփաներով, որոնելով զոհված մարտիկների գերեզմանները, դտնելով նրանց հարազատներին, նախաձեռնելով հուշարձանակոթողների կառուցումը, հոգատարությամբ շրջապատելով վետերաններին[130]։

---

[128] Ա. Ն. Մնացականյան, *Մարշալ Բաղրամյան*, էջ 281։

[129] «Семья и школа», М., 1975, 45 6, с. 10.

[130] «Комсомольская Правда», 1973, 6 июля.

Չխորանալով մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության բնագավառում մարշալ Բաղրամյանի կատարած բեղմնավոր աշխատանքի մեջ, որն առանձին գիտական ուսումնասիրության հարց է, միայն նշենք, որ զրպրոցներում զորակոչիկների ֆիզիկական, ռազմական և տեխնիկական նախնական պատրաստության այն տարիների ավանդույթները պետք է վերականգնվեն Հայաստանի Հանրապետությունում, որովհետև դրանից մեծ չափով կշահի մեր նորաստեղծ հայկական բանակը։

ԽՍՀՄ Զինված ուժերին մատուցած ծառայությունների, Հայրենական մեծ պատերազմում գերմանաֆաշիստական դավթիչների դեմ մղված պայքարում ցուցաբերած արիության և հերոսության համար, ինչպես նաև ծննդյան 80-ամյակի առթիվ մարշալ Բաղրամյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1977 թ. դեկտեմբերի 1-ի հրամանագրով արժանացավ Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման[131]։

Մինչև իր կյանքի վերջը Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հ. Խ. Բաղրամյանը ծառայեց պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչների խմբում և իր արժանի ավանդը ներդրեց երկրի պաշտպանության ամրապնդման գործում։ Դրա հետ մեկտեղ իր կյանքի վերջին տարիներին նա զգալի տեղ հատկացրեց նաև գիտական-գրական աշխատանքներին։ 1960—1980-ական թվականներին մեկը մյուսի հետևից հրատարակվեցին նրա «Հերոս քաղաքը Դնեպրի ափին» (1965 թ.), «Հիշարժան մարտերի օրերը» (1975 թ.), «Մեծ հաղթանակի ճանապարհին» (1975 թ.), «Այսպես է սկսվել պատերազմը» (1977 թ.), «Այսպես մենք հասանք հաղթանակի» (1977 թ.), «Իմ հիշողությունները» (1979) թ.), «Մեծ ժողովրդի զավակները» (1984 թ.) ստվարածավալ, արժեքավոր մենագրությունները, որտեղ հիմնականում լուսաբանվել է Հայրենական մեծ պա-

---

[131] «Правда», 1977, 2 декабря.

տերազմի պատմությունը, իր կյանքի ուղին, խորհրդային ականավոր զորավարներ, մարշալներ Գ. Կ. Ժուկովի, Ա. Մ. Վասիլևսկու, Կ. Կ. Ռոկոսովսկու, Բ. Մ. Շապոշնիկովի, Ս. Կ. Տիմոշենկոյի, Ի. Ս. Կոնևի, ինչպես նաև ռազմական ինժեներ, պատմաբան, գիտնական Դ. Մ. Կարբիշևի կյանքն ու գործունեությունը։ Նրա գրչին է պատկանում նաև «Մարտական փառք» (1981 թ.) աշխատությունը, որը նվիրված է երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը։

Բաղրամյանը եղել է «Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը 1941—1945 թթ.» վեցհատորյակի խմբագրական խորհրդի անդամ, «Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմությունը 1939—1945 թթ.» 12-հատորյակի խորհրդատու։

Մարշալի խմբագրությամբ հրատարակվել են «Պատերազմների և ռազմական արվեստի պատմություն» (1970 թ.), «Ռազմական պատմություն» (1971 թ.), «Ռազմական արվեստը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին. ռազմավարություն և օպերատիվ արվեստ» (1973 թ.) կոլեկտիվ աշխատությունները, որոնք զինվորական բարձրագույն ուսումնարաններում և ակադեմիաներում սովորողների համար անհրաժեշտ դասագրքեր եղան։ Բաղրամյանի գրչին են պատկանում նաև ռազմագիտական բնույթի բազմաթիվ ուշագրավ հոդվածներ, դրախոսականներ, գրքերի առաջաբաններ և այլն։ Նրա հուշագրությունները լայն մասսայականություն են վայելել ոչ միայն ամբողջ ԽՍՀՄ-ում, այլև նրա սահմաններից դուրս, թարգմանվել անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, մի շարք այլ օտար լեզուներով։ Այդ աշխատություններն այսօր էլ պահպանել են իրենց արդիականությունն ու հրատապությունը։

Հետպատերազմյան տարիներին մարշալ Բաղրամյանը զինվորական ծառայության հետ մեկտեղ կատարել է հասարակական-քաղաքական պատասխանատու աշխատանք։ 1952 թվականից եղել է ԽՄԿԿ Կենտկոմի անդամության թեկնածու, 1961-ից՝ Կենտկոմի անդամ, ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն

խորհրդի 2—9-րդ գումարման, Լատվիական և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների պատգամավոր։

Հայրենիքը բարձր է գնահատել Բաղրամյանի 67-ամյա անընդմեջ զինվորական անբասիր ծառայությունը, նրա զորավարական տաղանդն ու քաջությունը, երկրի պաշտպանունակության գործում ներդրած ավանդը։ Բացի Հերոսի Ոսկե աստղ երկու մեդալներից, Բաղրամյանը պարգևատրվել է Լենինի 7, Հոկտեմբերյան հեղափոխության 1, Կարմիր դրոշի 3, Սուվորովի 1-ին աստիճանի 2, Կուտուզովի 1-ին աստիճանի 1, «Հայրենիքի և ԽՍՀՄ Զինված ուժերի ծառայության համար» 3-րդ աստիճանի 1 շքանշաններով, բազմաթիվ մեդալներով, պատվավոր անձնական զենքով։ Նրա կուրծքը զարդարում էին նաև օտարերկրյա բազմաթիվ շքանշաններ ու մեդալներ։

Սակայն Բաղրամյանի ամենամեծ պարգևները նրա մարդկային արժանիքներն էին, որոնց մասին միշտ ակնածանքով էին խոսում նրա զինակիցները, հարազատները և ընդհանրապես բոլոր ճանաչողները։ Զորավարի նրա անզուգական տաղանդը ռազմական իմացության մասշտաբայնությունը և բազմակողմանիությունը, հսկայական մարտական փորձը և անձնական հմայքը միշտ էլ բարձր են գնահատվել։ Նրա ենթականերից որևէ մեկը չէր հիշում անգամ մի որևէ դեպք, երբ զորավարը բարձրացներ ձայնը մեկն ու մեկի վրա, թույլ տար իրեն բարկանալ։ «Իվան Քրիստոփորովիչը ուժեղ կամքի տեր մարդ էր,— հիշում է 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի և զեմլյանդական օպերատիվ խմբավորման նախկին շտաբի պետ, բանակի գեներալ Վ. Վ. Կուրասովը,— նա որոշումներն ընդունում էր առանց տատանումների և նույնիսկ ամենածանր ժամանակ երբեք չէր բղավում, չէր սպառնում, մինչև անգամ ձայնը չէր բարձրացնում։ Բայց ենթականերից յուրաքանչյուրը նրա կամքն ու հրամանները կատարում էր անառարկելիորեն։ Այդ ամենից բացի, նա հոգի մարդ էր, նրա հետ աշխատելը հեշտ էր»[132]։ «Իր բնավորության գծե-

[132] Մ. Մերժանով, Զինվոր, գեներալ, մարշալ, էջ 122։

ռով Իվան Խրիստաֆորովիչը զարմանալիորեն մեղմ, սրատաքին և բարի կամեցող հմայիչ մարդ է», - լրացնում է Գլխավոր շտաբի պետ (1962—1968 թթ.), բանակի գեներալ Ս. Մ. Շտեմենկոն[133]*։ Շտեմենկոյի ասածները հաստատում է գեներալ-գնդապետ Լ. Մ. Սանդալովը՝ մարշալի 70-ամյակին գրած իր հոդվածում. «Ես չեմ կարող չնշել Իվան Խրիստաֆորովիչի անձնական մեծ հմայքի մասին։ Բոլորը, ովքեր հանդիպել են նրա հետ, միաբան են իրենց տված գնահատականում։ Նրան հարգում են որպես տաղանդավոր զորավարի, կարեկից ընկերոջ, գնահատում նրա մեջ լավ ընտանիքասիրությունը... Իվան Քրիստափորովիչը սիրում է երեխաներին...»*[134]*։ Գեներալ-գնդապետ Ի. Մ. Չիստյակովը, որի 6-րդ գվարդիական բանակը պատերազմի տարիներին 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի կազմում մասնակցել է Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ազատագրման մարտերին, հիացմունք է հայտնել Հ. Խ. Բաղրամյանի մարդկային բարձր կուլտուրայի և մեծ նրբազգացության մասին. «Ռազմական խորհրդի նիստերի ժամանակ, - գրում է նա, - Իվան Խրիստաֆորովիչը զեկուցողներին երբեք չէր ընհատում, լսում էր մինչև վերջ, նույնիսկ այն դեպքում, երբ ինքը համաձայն չէր զեկուցողի հետ։ Միայն վերջում ավելացնում էր. «Այ, եթե այնպես արվի, ավելի լավ չի՞ լինի»։ Նա իր կերթ վերաբերմունքով հմայում էր բոլորին»*[135]*։*

Բաղրամյանի մասին իր հեղինակավոր կարծիքն է արտահայտել նաև խորհրդային Միության մարշալ, կրկնակի հերոս Ա. Մ. Վասիլևսկին, որի հետ միասին հայ ժողովրդի պանծալի զավակը սովորել էր Գլխավոր շտաբի ակադեմիայում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմի հաղթա-

---

133 С. М. Штеменко. Талант полководца.—Известия, 1972, 2 декабря.

134 Л. М. Сандалов. Путь полководца.—Военно-исторический журнал, 1967, № 11, с. 47.

135 *ՀՄՊՊԿԱ, ֆ. Մարշալ Բաղրամյան, գ. 4, թ. 3։*

կան շրջանի մարտերին, հետպատերազմյան տարիներին ծառայել ինչպես նրա ենթակայության տակ, այնպես էլ նրա հետ միասին[136]։ Վասիլևսկին Բաղրամյանի մասին խոսել է ինչպես իր «Կյանքի ամբողջ գործը (Մ., 1978, 1984) գրքում, որից արդեն մեջբերումներ ենք կատարել, այնպես էլ մարտական ընկերոջ 80-ամյակի առթիվ գրած հոդվածում. «Հայրենական մեծ պատերազմի տարիներին խոշոր հարձակողական գործողությունների պլանավորումը, կազմակերպումը և իրագործումը բացառիկ գործ էր, այնուամենայնիվ Իվան Խրիստոֆորովիչը, շնորհիվ բարձր ռազմական պատրաստության, հսկայական գործնական փորձի և զորքերին ցանկացած մարտական հանգամանքներում ղեկավարելու հմտության, արագորեն գտնում էր ամենից նպատակահարմար որոշումներ։ Իր զորավարական գործունեության ընթացքում Ի. Խ. Բաղրամյանը միշտ եղել է օբյեկտիվ։ Նա շատ լավ գիտեր իր զորքերի հնարավորությունները։ Օպերատիվ-ռազմավարական լայն մտահորիզոնը նրան հնարավորություն էր տալիս խորը և ճիշտ վերլուծել ռազմաճակատում տիրող իրադրությունը, տեսնել հակառակորդի ուժեղ և թույլ կողմերը և, ելնելով դրանից, անել ստույգ եզրակացություններ։ Ընդունելով այս կամ այն օպերատիվ-ռազմավարական որոշումները՝ Իվան Խրիստոֆորովիչը միշտ ձգտում էր կանխատեսել իրադարձությունների զարգացումը՝ գործողության նախապատրաստության ընթացքում և մշակել բոլոր հնարավոր տարբերակները, որոնք անհրաժեշտ էին լինելու գործողությունն իրագործելու համար։ Իր օգնականներից ու ենթականերից նա պահանջում էր մարտական իրավիճակի հանգամանորեն ու օբյեկտիվ վերլուծություն՝ հակառակորդի վերաբերյալ հավաքած ու մի քանի անգամ ստուգ-

---

[136] Ա. Մ. Վասիլևսկին *1946—1949 թթ. եղել է Գլխավոր շտաբի պետ, 1949—1953 թթ.՝ ԽՍՀՄ Զինված ուժերի նախարար, 1953—1957-ին՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարի 1-ին տեղակալ, 1959-ից մինչև իր կյանքի վերջը՝ 1977 թվականը ծառայել է պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչների խմբում։*

ված հավաստի փաստերի հիման վրա։ Հանդիպելով իր ենթակաների հետ, լսելով նրանց կարծիքները, Բաղրամյանն իր պրակտիկ գործունեության ժամանակ հաշվի էր առնում բոլոր օգտակար խորհուրդները։ Գործողությունների պլանների մշակման և նրանց անցկացման ընթացքում Բաղրամյանը հաճախակի անում էր համարձակ, հիմնավորված առաջարկություններ՝ իր բանակի կամ ռազմաճակատի զորքերի առջև դրված առաջադրանքներում շտկումներ, իսկ հարկ եղած դեպքում նաև, փոփոխություններ կատարելու նպատակով, եթե դրանք ապահովելու էին առաջադրանքի կատարման հաջողությունը։ Եվ պետք է ասել, որ Գերագույն գլխավոր հրամանատարության Զորակայանում և Գլխավոր շտաբում, որպես կանոն, հաշվի էին առնում դրանք և բարձր գնահատում Բաղրամյան զորավարի փորձն ու տաղանդը»[137]։

Զորավարի բարոյաքաղաքական, հրամանատարական և մարդկային հատկությունների վերաբերյալ բնորոշ տեղեկություններ են բերված պատերազմի տարիներին «Правда» *թերթի թղթակից Մարտին Մերժանովի «Զինվոր, գեներալ, մարշալ» գրքում։ Հայազգի լրագրողը պատերազմից հետո այդ թեմայով հարցազրույց է ունեցել 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի և Զեմլյանդյան զորախմբի նախկին շտաբի պետ, բանակի գեներալ Վ. Վ. Կուրասովի հետ և իր գրքում բառացի տվել դրա բովանդակությունը. «Դուք հաճախ հիշատակում եք Իվան Խրիստաֆորովիչի բարոյաքաղաքական ու հրամանատարական հատկությունները։ Դուք չէի՞ք կարող դրանց մասին ասել ավելի մանրամասն կամ «բաց անել այդ սահմանը», - հարցրել է թղթակիցը։ «Կարող եմ, իհարկե, - պատասխանել է Վլադիմիր Վասիլևիչը և հենց իսկույն սկսել իր պատմությունը. - Ամենից առաջ դրա մեջ*

---

[137] А. М. Василевский. Маршал Советского Союза И. Х. Баграмян (к 80-летию со дня рождения).—Военно исторический журнал, 1977, № 12, с. 113—114; *Հանդեսի վերջին համարի լույս տեսնելուց մի քանի օր առաջ, 1977 թ. դեկտեմբերի 5-ին, կարվեց Մարշալ Վասիլևսկու կյանքի ԲԵԼՐ։*

է մտնում արիության հասկացությունը։ Ես նկատի ունեմ, ինչպես դուք հասկանում եք, ոչ թե զինվոր կամ սպայի սովորական անձնական համարձակությունը, որն Իվան Խրիստաֆորովիչը փոխ առնելու կարիք չունի, այլ այդ խոսքի տակ ես հասկանում եմ որոշ չափով էլ ավելին, այսինքն՝ հենթակա զորքերի մարտական գործողությունների համար պատասխան տալու ընդունակությունը, օպերացիայի բախտը որոշող համարձակ որոշումներ ընդունելու կարողությունը։ Հավատացնում եմ ձեզ, եթե մարտերի ընթացքում զորահրամանատարն արիություն չի ցուցաբերում, օպերացիան կարող է տապալվել։

Երկրորդ, վճռականությունը։ Իվան Խրիստաֆորովիչի մոտ ես երբեք տատանումներ չեմ տեսել։ Նա վստահ էր դեպի իր պլանները, դրված խնդիրները և սպասում էր դրանց հաջող լուծումներին։ Մի փոքր մտածելով, Վլադիմիր Վասիլևիչը շարունակեց. Ինձ վիճակվել է աշխատել նաև ուրիշ հրամանատարների հետ, որոնք երբեմն փոխում էին իրենց իսկ ընդունած և արդեն կենսագործվել սկսած հրամանները, ուղղում էին դրանք, նոր խնդիրներ էին դնում։ Դա լինում էր ի վնաս գործի։

Եվ երրորդ, նախաձեռնությունը։ Այդ բանն անմիջականորեն կապված է Իվան Խրիստաֆորովիչի զորավարական ստեղծագործության հետ։ Չսպասելով ոչ մի հրամանի և ցուցումների, անհրաժեշտության դեպքում, փոփոխվող իրադրության հետ կապված, նա նոր որոշումներ էր ընդունում, որոնց մասին հետո զեկուցում Զորակայանին։ Քանի որ այդ որոշումները միշտ լինում էին հիմնավորված, Զորակայանը դրանք սնփոփոխ կերպով հաստատում էր։

Արիությունը, վճռականությունը, նախաձեռնությունը հիմնվում էր գերազանց ռազմատեսական պատրաստության վրա։ Նույնիսկ ռազմաճակատում Իվան Խրիստաֆորովիչը շարունակում էր հետաքրքրություն ցուցաբերել դեպի դիտելիքները։ Նա օգտագործում էր յուրաքանչյուր ազատ բոպեն։ Մասնավորապես նա շատ ուշադիր ուսումնասիրում էր մյուս ռազմաճակատների գործողությունների փորձը։

Եվ էլի Բաղրամյանի մարդկայնության մասին։ Իվան Խրիստաֆորովիչը մշտապես մտահոգվում էր մարտերում աչքի ընկած ռազմիկներին ժամանակին պարգևատրելով։ Անողոք էր, եթե լիում էին հապաղումներ։ Միշտ անձամբ մեկնում էր հոսպիտալներ, որտեղ վիրավորներին պարգևներ էր հանձնում։ Կատա՞կ բան է, ինքը՝ ռազմաճակատի հրամանատարն է շքանշան կամ մեդալ հանձնում։ Ասում էին, թե դրանից վիրավորներն ավելի արագ էին ապաքինվում...»[138]։

1974 թ. փետրվարին Մարշալ Բաղրամյանը մի խումբ գեներալների հետ մեկնեց Փարիզ, որտեղ հեռուստատեսության համար հանդես եկավ՝ բանավիճելով գերմանական որոշ ռազմական պատմաբանների հետ, որոնք փորձում էին նսեմացնել Կուրսկի ճակատամարտում տարած հաղթանակի պատմական նշանակությունը՝ այն համարելով պատերազմի աննշան մի դրվագ։ Մարշալ Բաղրամյանը հավաստի փաստերով հիմնովին հերքում է այդ վայ պատմաբանների կեղծիքը, մերկացնում նրանց բազմաթիվ փաստերով ու փաստաթղթերով, այդ թվում վերմախտի և հենց Հիտլերի հրամաններով[139]։ Փարիզում եղած ժամանակ մարշալը, չնայած գործով ծանրաբեռնված լինելուն, այնուամենայնիվ ժամանակ է գտնում այցելու Պեր-Լաշեզի գերեզմանատուն և ծաղկեպսակ դնելու իր հրամանատարի, զորավար Անդրանիկի հուշարձանին հետևյալ մակագրությամբ. «Հավերժ հիշատակ Հայաստանի լեգենդար հերոս Անդրանիկին, որի զինվորը լինելու բախտն եմ ունեցել Հայրենիքի համար ծանրագույն 1918 թվականին։ Հ. Բաղրամյան»։ Այնուհետև մարշալը, զինվորական զգաստ կեցվածքով պատիվ առած, մեկ րոպե լռությամբ հարգել է իր հրամանատարի հիշատակը[140]։ Սա նույնպես մեծ զորավարի մարդկային արժանիքների գրսևորման լավագույն ապացույցներից է։

---

138 Մ. Մեռժանով, Զինվոր, գեներալ, մարշալ, էջ 124—126։

139 Մ. Մեռժանով, Զինվոր, գեներալ, մարշալ, էջ 162։

140 Գեորգ Վարիրջանյան, Հովհաննես Բաղրամյանը Անդրանիկի մասին, «Հայաստանի Հանրապետություն», 1997, 24 հուլիսի էջ 3։

Խոսելով Բաղրամյանի մարդկային հրաշալի հատկանիշների մասին, նրա հայրենակից՝ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը նշել է. «Իվան Խրիստոֆորովիչը մեծ հեղինակություն էր վայելում գեներալների և մարշալների մոտ։ Նա մարդկանը հանդեպ բարյացակամ էր, նրբազգաց և ուշադիր։ Աշխատասեր էր, համարձակ, բարեսիրտ ու համեստ։ Այդ ամենը մեզ սովորեցրել էին մեր ծնողները դեռ վաղ մանկության հասակից»[141]*։ Որ այդ հատկանիշները երկու մարշալներն էլ ժառանգել էին մանկուց, հաստատում է նաև Բաղրամյանը։ Հիշելով ծննդավայր Ջարդախլու գյուղում անցկացրած մանկության օրերը նա գրում է. «Ջարդախլուում եղած ժամանակ ես մեծ հետաքրքրությամբ յուրացրեցի ու սերտեցի ժողովրդական այնպիսի սովորույթներ ու ավանդույթներ, որոնց ազդեցության տակ իմ և իմ հասակակիցների մոտ ձևավորվեցին արիության և քաջության, արդարության և վեհանձնության, հավատարմության ու նվիրվածության վերաբերյալ գաղափարները։ Պետք է նշել, որ մեր գյուղի բնակիչները միշտ բարձր են գնահատել մարդկային այդ վեհանձն հատկությունները, և դա շատ կարևոր դեր խաղաց երիտասարդության դաստիարակության գործում»*[142]*։ Տեղին է նշել, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին երկու մարշալների գյուղից ռազմաճակատ մեկնեցին 1200 երիտասարդներ, որոնցից 320-ը զոհվեցին մարտերում։ Գյուղը հայրենիքին երկու մարշալներից բացի տվեց երկու գեներալ, մեկ ծովակալ, երեք գնդապետ, 160-ից ավելի տարբեր կոչումների սպաներ*[143]*։*

Հետպատերազմյան տարիներին մարշալ Բաղրամյանը մշտապես կապված է եղել հայ ժողովրդի և հայ իրականու-

---

141 Ալբերտ Գասպարյան, *Մարշալ Բաղրամյան (լուսանկարների ալբոմ), Ե., 1987, էջ 275։*

142 И. Х. Баграмян. Мои воспоминания, с. 8.

143 Б. А. Саркисов. Не звани, не звани колокол, Ереван, 1988, с. 3.

թյան հետ։ Սկսած 1946 թվականից՝ նա բազմիցս եղել է Հայաստանում ինչպես ծառայության բերումով, այնպես էլ որպես հոբելյանական միջոցառումների թանկագին հյուր, քանի որ ինչպես մարշալն էր սիրում կրկնել՝ «Ծառը իր արմատներով է կապված մայր հողին, մարդը՝ իր նախնիներով»[144]։ Մարշալ Բաղրամյանը մասնավորապես մասնակցել է Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի հետ միանալու 150 և Երևանի 2750-ամյակների տոնակատարություններին։ Նա շրջագայել է համարյա ողջ Հայաստանում, այցելել իր պապի հայրենի Կոթի գյուղը (Տավուշի մարզ), Շիրակ, Լոռի, Սևան, Արարատյան դաշտավայր, Վայք, Սյունիք, Արցախ և այլուր, հանդիպումներ ունեցել բնակչության լայն խավերի հետ*։ Հիշատակության է արժանի նրա շրջագայություններից մեկի ժամանակ մի հետաքրքիր փաստ։ 1976 թ. աշնանը մարշալը ուղևորություն էր կատարում Իջևանի շրջանում, Ակնաղբյուր գյուղում նրան ցույց տվեցին 1500-ամյա մի կաղնի, որն առասպելական հսկայի նման արդեն թեքվել էր։ Ըստ ավանդության, այդ հսկա կաղնին ժամանակին տնկել էր սպարապետ Վարդան Մամիկոնյանը՝ թշնամու դեմ տարած մի հաղթանակից հետո։ Մարշալ Բաղրամյանը կաղնու մոտ սեփական ձեռքով տնկեց մի մատղաշ կաղնի, ջրեց այն ու երկարակեցություն բարեմաղթեց[145]։ Պատմական այդ հուզիչ պահը մեծ խորհուրդ ուներ իր մեջ։ Մեկ այլ դեպք, որը

---

[144] Բենիկ Սեյրանյան, *Մարշալի վերջին իրձը*, «Սովետական Հայաստան» հանդես, 1988, թիվ 11, էջ 6—8։

* Էջմիածնում հանդիպել է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հետ, Բյուրականում եղել աշխարհահռչակ Վիկտոր Համբարձումյանի հյուրը, Սարգարապատի հուշահամալիրում գլուխ խոնարհել պատմական ճակատամարտի հաղթակամարի առջև, այցելել Մատենադարան և հիացել այնտեղ խնամքով պահվող մագաղաթյա հին ձեռագրերով, ծաղկեպսակներ դրել Մեծ եղեռնի և Անհայտ զինվորի հուշարձաններին, Երևանի պետական համալսարանում անմոռանալի հանդիպում ունեցել ուսանողության և դասախոսական կազմի հետ և այլն։

[145] Կիմ Ղալաչյան, *Տասնչորս օր մարշալ Բաղրամյանի հետ*, Ե., 1978, էջ 58—59։

տեղի է ունեցել 1964 թ. աշնանը Սևանում պաշտոնական գործով շրջագայելիս։ Բաղրամյանն այդ ժամանակ ԽՍՀՄ զինված ուժերի պաշտպանության նախարարի տեղակալն էր և թիկունքի զորքերի պետը։ Մեկշաբաթյա ուղևորության ժամանակ նրան ուղեկցում և բացատրություններ էր տալիս շրջկոմի աշխատակից, այժմ հնագետ, պատմական գիտությունների դոկտոր Վարշամ Ավետյանը։ Վերջինիս նրան ուղեկցեց Լճաշեն և ծանոթացրեց այնտեղ կատարվող հնագիտական պեղումներին. մարշալը դրսևորեց արտակարգ հետաքրքրություն։ Այդ մասին հնագետը գրել է հուշեր և սիրով մեզ հանձնել՝ սույն աշխատության մեջ օգտագործելու համար։ «Ես կարելույն չափ պատմեցի,— գրում է հնագետ պատմաբանը,— որ հատկապես Լճաշենում բացվել են հին դամբարաններ և բնակատեղեր, որոնք վերաբերում են մ. թ. ա. 3-րդ—1-ին հազարամյակներին, և որոնցից հայտնաբերվում են արտակարգ հարուստ և ուշագրավ նյութեր։ Հատկապես նշեցի, որ գտնվում են զենքի շատ տեսակներ՝ նետաղեղներ, նիզակներ, տեղեր, դաշույններ, սրեր, մարտական կացիններ, վահաններ, մարտակառքեր, երկանիվ ու քառանիվ փայտե սայլեր։ Նա կլանված լսում էր։ Երբ մարտակառքի անունը լսեց, ընդհատեց ինձ ու հարցրեց.

— Դրանք նմանություն ունե՞ն հռոմեական լեգեոնների օգտագործած կառքերին։

— Այո, նման են, բայց ավելի հին են։

— Դիտես, որդի՛ս, այդ մարտակառքերը ժամանակին տանկի դեր են կատարել։ Իսկ դրանց ստեղծողներն ովքե՞ր են։

— Փաստերը ցույց են տալիս, որ դրանք հայերի նախնիներն են,— շատ վստահ պատասխանեցի ես։

— Նշանակում է, մեր նախնիները պաշտպանական մարտեր վարելուց զատ նաև հարձակողական մարտեր են վարել,— նկատեց մարշալը,— շատ հետաքրքիր բան ասացիր։ Դե ուրեմն հայերի մարտավարական հմտությունները գալիս են վաղ հնադարից։ Այ թե Հայաստանը ծով ունենար, ծովակալներ ունի, բոլոր բնագավառներում կփայլեր։ Դրա համար եմ

ասում հայերի ռազմական ունակությունները պետք է զորացնել։ Ուժեղը ծով էլ կունենա...

Բարեբախտաբար Լճաշենի արշավախմբի պետ Հարություն Մնացականյանը տեղում էր, պեղումներ էր կատարում։ Նա ոգևորված մարշալի այցելությունից, ավելի շատ տեղեկություն տվեց համաշխարհային ճանաչման արժանացած այդ հուշարձանի մասին։ Մնացականյանն այնքան ոգևորվեց, որ վերջում մարշալին նվիրեց հազարամյակների հնության մի բրոնզե դաշույն։

Մարշալն, անչափ զգացված լինելով, դաշույնը բարձրացնելով գլխից վեր, արտասանեց հետևյալ խորիմաստ միտքը. «Հայերը սրանով պետք է գոյատևեն...»[146]։

Մոսկվայում, Հայաստանում և նրա սահմաններից դուրս Բաղրամյանը բարեկամական սերտ կապեր էր հաստատել գիտության, արվեստի, մշակույթի և այլ բնագավառների հայ գործիչների հետ։ Հատկապես նա մտերիմ էր անվանի գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի հետ, որը սերունդներին է թողել մեծ զորավարի հայտնի դիմանկարը, բացի այդ նրա մասին գրել հետևյալ տողերը. «Մեր խաղաղասեր և աշխատասեր ժողովուրդը իր պատմության ճանապարհին ունեցել է զավակներ, որոնք բարձրացրել են իրենց թուրը, երբ կարիք է եղել պաշտպանելու իրենց օջախը, երեխաներին, մայրերին, հայրերին, երբեք չունենալով հարձակողական կամ նվաճողական ձգտում։ Մեր ժողովուրդը ունեցել է հերոսներ՝ ինչպես Վարդան Մամիկոնյանը և ուրիշներ, որոնք իրենց կյանքն են զոհել հայրենիքի գոյության համար։ Մեր ժողովուրդը տվել է մեծ թվով զորավարներ, որոնց պայծառ ժառանգներից է մարշալ Բաղրամյանը, որին սիրում է ժողովուրդը, նրա մեջ տեսնելով իր կյանքի ու պատվի պաշտպանին»[147]։

Մարշալին բարձր գնահատական է տվել նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, Սոցիալիս

---

146 Վարշամ Ավետյան, *Մարշալը Սևանում (Ձեռագիր)*, էջ 5—7։

147 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 404, ց. 1, գ. 496, թ. 1։

տական աշխատանքի կրկնակի հերոս, Հայաստանի աղգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը։ Բաղրամյանին ուղղված 1978 թ. հոկտեմբերի 24-ի թվակիր նամակում աշխարհահռչակ գիտնականը նշել է. «Ես հաճախ եմ խորհում Ձեր մասին, կապված այն մեծ ավանդի հետ, որ հայ ժողովուրդը ներ է դրել Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի գործում։ Կրկին և կրկին հիանում եմ Ձեր սխրանքով և ցանկանում, որ որքան կարելի է ավելի շատ երիտասարդներ Ձեղանից օրինակ վերցնեն»[148]։

Մարշալի հետ ընկերություն էին անում պետական ակնավոր գործիչ Անաստաս Միկոյանը, նրա եղբայր, «ՄԻԳ» կործանիչ ինքնաթիռների գլխավոր կոնստրուկտոր, գեներալ-գնդապետ, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս Արտեմ Միկոյանը, Խորհրդային Միության նավատորմի ծովակալ, Խորհրդային Միության հերոս Հովհաննես Իսակովը, Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանը, հայտնի դիվանագետ Համազասպ Հարությունյանը, կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանը, Առնո Բաբաջանյանը, Ալեքսեյ Հեքիմյանը, անզուգական սամունքող Սուրեն Քոչարյանը, նկարիչ Դիմիտրի Նալբանդյանը, ԽՍՀՄ ժողովրդական դերասան, Մեծ թատրոնի գլխավոր դիրիժոր Ալեքսանդր Մելիք-Փաշաևը, երգիչ Պավել Լիսիցյանը, դրողներ Մարիետա Շահինյանը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը և շատ ուրիշներ։ Մարշալը իր հաղվագեպ ազատ ժամերին սիրում էր շախմատ կամ նարդի խաղալ Միկոյան եղբայրների, Համազասպ Բաբաջանյանի, ժողովրդական նկարիչ Նիկողայոս Նիկողոսյանի հետ, հիանում էր Տիգրան Պետրոսյանի հաջողություններով։ Նա շատ էր սիրում նաև ֆուտբոլը, «ցավում էր» Մոսկվայի «Սպարտակի» և «Արարատի» համար։ Երբ իր սիրած թիմերն էին խաղում, Համազասպ Բաբաջանյանի հետ գնում էր մարզադաշտ։

Խաղաղ տարիների կյանքը մարշալ Բաղրամյանին կրկին վերադարձրեց դեպի արվեստ, որի նկատմամբ նրա առաջին

---

[148] Նույն տեղում, դ. 536, թ. 2։

սերը դրսևորվել էր դեռևս 1924—1925 թվականներին, երբ սովորում էր Լենինգրադում՝ բարձրագույն հեծելազորային դպրոցում։ Հատկապես նա մեծ սեր ուներ գեղանկարչության հանդեպ։ Նրա վրա անջնջելի տպավորություն էին թողել անվանի ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու՝ Լենինգրադի Ռուսական թանգարանում պահվող գլուխգործոցները, Երմիտաժում ցուցադրվող Ռաֆայելի, Ռուբենսի, Վան Դոդի, Գոյայի կտավները, Միքելանջելոյի և Ռոդենի հոյակերտ քանդակները, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում պահվող Ռեպինի, Լևիտանի, Կրամսկոյի, Կուինջիի ստեղծագործությունները, Սարյանի գունագեղ բնանկարները, Նալբանդյանի նշանավոր դիմանկարները, Կուկրինիկսների ծաղրանկարները և այլն։ Գուցե՞ դա էր պատճառը, որ մարշալի որդին՝ Մովսես Բաղրամյանը, դարձավ Մոսկվայի ճանաչված գեղանկարիչներից մեկը։

Մեծ զորավարին մոտիկից ճանաչողները վկայում են, որ նա նաև լրջախոհ թատերասեր էր և բաց չէր թողնում ոչ մի նոր ներկայացում Մոսկվայի գեղարվեստական ակադեմիական և Փոքր թատրոններում, մեծ բավականություն էր ստանում Մեծ թատրոնի օպերային ու բալետային ներկայացումներից։

Ահա թե ինչպես է բնութագրել թատերասեր Բաղրամյանին ԽՍՀՄ ժողովրդական դերասան, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, անվանի ռեժիսոր Հրաչյա Ղափլանյանը. «Ինձ Իվան Խրիստոֆորովիչի հետ մտերմացրել է թատրոնը։ Դեռ շատ տարիներ առաջ Մոսկվայում, Լենինյան կոմերիտմիության անվան թատրոնում ես բեմադրեցի իմ առաջին ներկայացումը։ Պրեմիերային մասնակցեց ինձ համար լեգենդար մարշալ Բաղրամյանը։ Դա մեր առաջին հանդիպումն էր, մեր բարեկամության սկիզբը։ Ես չեմ հիշում Մոսկվայում իմ բեմադրություններից կամ հյուրախաղերից որևէ մեկը, որ առաջին ներկայացումներին ներկա չգտնվեր Իվան Խրիստոֆորովիչը։ Նա սիրում էր թատրոնը և կրքոտ ու «անողոք» հանդիսատես էր։ Իսկ հանդիպումների ժամանակ, լիներ դա Մոսկվայում մարշալի

տանը թե Երևանում ինձ մոտ, նա հաճախ էր խոսում թատրոնի, մասնավորապես հայ թատրոնի մասին։ Գուցե՞ նա երաժշտագետի հետ խոսում էր երաժշտության, ճարտարապետի հետ՝ ճարտարապետության, գրողների հետ՝ գրականությա՞ն մասին։ Բայց նա ինձ համար ամբողջ կյանքում մնաց սքանչելի, անկեղծ մարդ և թատրոնի մեծ երկրպագու»[149]։

Բաղրամյանը շատ էր սիրում նաև երաժշտություն։ Հատկապես բարձր էր գնահատում Արամ Խաչատրյանին, որի նկատմամբ շատ նրբազգաց էր. «Նա մի հրաբուխ է, որ դեռևս լրիվ չի ժայթքել»,— մի առիթով ասել է մարշալը կոմպոզիտորի մասին և հավատում էր, որ Արամ Իլյիչը գլուխգործոցներ դեռ շատ կստեղծի։ Տաղանդավոր լրագրող, մոսկվաբնակ Ալբերտ Գասպարյանի վկայությամբ, Բաղրամյանը երկար կարող էր լսել խմբերգեր։ Ահա թե ինչու նա Մոսկվայում գրեթե բաց չէր թողնում Հայաստանի պետական երգչախմբի համերգները։ Սիրում էր լսել Կոմիտաս, Եկմալյան, հայկական ժողովրդական երգեր, «Երջանկություն էր, որ անվանի երաժիշտ Արամ Տեր-Հովհաննիսյանից հետո երգչախումբը գլխավորեց Հովհաննես Չեքիջյանը՝ նրբաճաշակ, եռանդագին մի երաժիշտ, որը կարողացավ պահպանել ու զարգացնել հայ խմբային երգարվեստի լավագույն ավանդույթները,— լրագրողի հետ ունեցած զրույցի ժամանակ ասել է մարշալը։— Հայ ժողովրդական երգի մշակման, զարգացման ու մասսայականացման գործում, իմ կարծիքով, մեծ դեր է խաղում Հայաստանի երգի պարի անսամբլը Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ, ինչպես և ժամանակին քիչ բան չի արել աշուղական անսամբլը Վաղարշակ Սահակյանի գլխավորությամբ։ Հիշում եմ երգի ու պարի անսամբլի ելույթները պատերազմի տարիներին մեր ռազմաճակատում։ Դրանք անմոռանալի, հուզիչ հանդիպումներ էին։ Պատկերացնում եք, շորս կողմը կռիվ է, պայթյուն, ճիշտ է, մեր

---

[149] Ալբերտ Գասպարյան, նշվ. աշխ., էջ 307։

գորքերը հաղթականորեն թշնամուն քշում էին մեր հողից, բայց բոլոր դեպքում ռազմաճակատը մնում է ռազմաճակատ։ Ու ահա մի պահ պատկերացրեք ռումբերի ու արկերի պայթյունների ներքո հնչում է սրտառուչ ու քնքուշ հայկական երգը։ Մեր հուզմունքն ու ապրումները բառերով դժվար է նկարագրել։ Պետք է լինել ռազմաճակատում, որպեսզի զգալ այն ամենը, ինչ մենք էինք զգում այդ պահին։ Համերգից հետո կարճատև հանդիպում ունեցանք անսամբլի հետ, միասին նկարվեցինք։ Դա 1944 թ. աշնանն էր»[150]: Ռազմաճակատում գտնվելու երկու ամսվա ընթացքում Հայկական երգի պարի անսամբլը տվեց 100-ից ավելի համերգ։ Անսամբլի 28 անդամներից 18-ը պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։ Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվածների թվում էին՝ Թաթուլ Ալթունյանը, Եվգենյա Բաղդասարյանը, Թամարա Դեմուրյանը, Էդուարդ Մանուկյանը և ուրիշներ[151]:

Մարշալի երաժշտական հետաքրքրությունները չէին սահմանափակվում միայն ժողովրդական երգերով։ Նա սիրում էր դասական, սիմֆոնիկ երաժշտություն, հիանում էր Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիայով, Մեծ թատրոնի մենակատար Պավել Լիսիցյանի ձայնով ու կատարողական արվեստով։ Պավել Լիսիցյանին առաջին անգամ լսել էր դեռ 1939 թվականին, Մոսկվայի Հայկական արվեստի տասնօրյակի օրերին։ Այդ ժամանակներից էլ սկիզբ էր առել նրանց բարեկամությունը։ Եվ ահա տաղանդաշատ երգչին նվիրելով իր հուշերի գիրքը՝ մարշալը մակագրել է. «Պավլիկ, Պավլիկ, իմ ամենասիրած ու պաշտած երգիչ։ Քո ձայնն այնքան հարուստ է ելևէջներով, որ երբեմն թվում է, թե լսում ես ամենաընտիր հաճելի ձայների մի նվագախումբ, և ուզում ես անընդհատ լսել ու վայելել քո բարձրագույն տաղանդը։ Ափսոս,

---

150 Ալբերտ Դասպարյան, *Մեծարվեստ զորավարը*, «Ավանդարդ», 1987, 2 դեկտեմբերի։

151 Մ. Գ. Սահակյան, *Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում*, էջ 99։

ես նույնանման ոչինչ չունեմ, չեմ կարող իմ գրքի պատմագրույցներով շոյել քո լսողությունը և գեղարվեստական ընկալումը։ Մնում եմ անչափ պարտավոր՝ քո Իվան Բաղրամյան»[152]։

Բաղրամյանին դուր էին գալիս նաև Ալեքսեյ Հեքիմյանի ու Անդրեյ Բաբաևի երգերը, Միքայել Թարիվերդիևի երաժշտությունը...

Մարշալ Բաղրամյանը մեծ սեր ուներ նաև գրականության հանդեպ։ Մոսկվայի կենտրոնում՝ Սիվցև Վրաժեկ փողոցի վրա գտնվող նրա տան գրադարանը ծայրից ծայր լի էր ռազմապատմական բնույթի գրքերով։ Սուվորովի, Կուտուզովի, Բագրատիոնի, Նապոլեոնի, Բրուսիլովի մասին գրքերի շարքում նրա գրադարանում իրենց պատվավոր տեղն էին գրավել նաև ռուսական, հայկական և համաշխարհային դասականների երկերը։ Հայ դասականներից ամենից շատ սիրում էր Հովհաննես Թումանյանին, որի հետ Բաղրամյանը անձամբ ծանոթացել էր դեռևս 1921 թ. մարտին, Թիֆլիսում։ Մարշալը կարդացել էր մեծ բանաստեղծի գրեթե բոլոր գործերը։ Նրան շատ էին դուր գալիս Թումանյանի հեքիաթները իր բարեկամ, ասմունքի մեծ վարպետ Սուրեն Քոչարյանի կատարմամբ։ Տաղանդավոր լրագրող Կիմ Ղալաչյանին տված հարցազրույցներից մեկի ժամանակ մարշալը ամենայն հայոց բանաստեղծի մասին ասել է. «Ես գրականագետ չեմ և մեր ժողովրդին թողած նրա գրական ժառանգության արժեքով չէ միայն, որ ուզում եմ Հովհաննես Թումանյանին դնել պատվո պատվանդանի ամենաբարձր աստիճանին։ Պարզապես նրա մասշտաբի, նրա մակարդակի հայրենասեր, մեծ մարդ ու քաղաքացի դժվարանում եմ մեկ այլ ոք նշել... Հովհաննես Թումանյանը հայ ժողովրդի ազգային անկախության, նրա երջանիկ ապագայի համար պատրաստ էր անձնազոհության»[153]։

---

152 Ալբերտ Գասպարյան, *Մեծարվեստ զորավարը*, «Ավանգարդ», 1987, 2 դեկտեմբերի։

153 Կիմ Ղալաչյան, *Տասնչորս օր մարշալի հետ*, էջ 15—76։

Մարշալին շատ էին դուր գալիս Ավետիք Իսահակյանի հայրենասիրական բանաստեղծությունները, որոնք հասել էին ռազմաճակատ և մարտնչել թշնամու դեմ։ Վարպետի գործերին Բաղրամյանը ծանոթ էր դեռևս լենինականյան հեծյալ գնդի հրամանատար եղած ժամանակ։ 1946 թ. ձմռանը Երևանում տեղի ունեցավ հայոց երկու մեծերի հանդիպումը, որն այնուհետև կրկնվեց մի քանի անգամ և դարձավ ավանդույթ։ Զորավարը ակնածանքով է հիշում առաջին հանդիպումը. «Հայաստանի աշխատավորների, գրողների, դերասանների, երաժիշտների հետ բազմաթիվ հուզիչ հանդիպումները վառ մնացին հիշողությանս մեջ։ Բայց դրանից ամենաանմոռանալին ու սրտառուչը Ավետիք Իսահակյանի հետ հանդիպումն էր։ Մեծատաղանդ ու սիրելի բանաստեղծին, իհարկե, ես դեռ շատ վաղուց գիտեի, բայց երբեք նրա հետ չէի հանդիպել։ Եվ ահա զարմացած կանգնած եմ Վարպետի առջև, ինչպես ժողովուրդն էր նրան մեծարում։ Կանգնած նայում եմ Վարպետի խելամիտ աչքերին։ Ես հենց այդպես էլ հզոր ու իմաստուն էի նրան պատկերացնում։ Նա էլ ինձ էր նայում, հետո ասաց. «Դեհ, Հովհաննես, հոգնե՞լ ես, հավանաբար... հեշտ բան չէ պատերազմը... դժվար էր, չէ՞...»[154]։

Մարշալ Բաղրամյանը շատ էր հարգում մոսկվաբնակ անվանի գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Մարիետա Շահինյանին, հիանում նրա արտակարգ աշխատասիրությամբ, նրա կրքոտ խոսքով, հարցադրումների համարձակությամբ։ 1982 թվականի գարնանը 85-ամյա զորավարը անչափ ծանր տարավ Մարիետա Սերգեևնայի մահը, որը նույնիսկ նրան որոշ ժամանակով անկողնուն գամեց։

Դեռևս Հայրենական մեծ պատերազմի տարիներին Բաղրամյանը բարեկամական հարաբերություններ էր ստեղծել 1-ին Մերձբալթյան ռազմաճակատում մարտնչող Հրաչյա Քոչարի և Սերո Խանզադյանի հետ, որոնք հետագայում դարձան անվանի գրողներ։ Կապիտան Քոչարը ծառայում էր 51-րդ գրվարդիական (նախկին Հայկական 76-րդ) դիվիզիայում, որ-

---

154 «Ավանգարդ», 1987, 2 դեկտեմբերի։

պես «Վորոշիլովեց» թերթի խմբագրության հրահանգիչ, ապա ռազմաճակատի «Առաջ դեպի թշնամին» թերթի զինվորական թղթակից։ Բաղրամյանը նրան էր հանձնել ամերիկահայուհի Անահիտ Բաղրամյանի հուզիչ նամակը, որի հիման վրա Քոչարը գրեց իր հանրահայտ «Գեներալի քույրը» պատմվածքը։ Գեղարվեստական մեծ վարպետությամբ գրված այդ պատմվածքը տպագրվեց մամուլում և լայն արձագանք գտավ ընթերցողների շրջանում։ «Քոչարը լուրջ ու հետաքրքիր մարդ էր,— մի առիթով նշել է մարշալը,— տաղանդավոր գրող, լավ գիտեր մեր պատմությունը։ Նա խիզախ մարդ էր, անվախ։ Մշտապես լինելով գործող բանակում, հաճախ էր հայտնվում կրակի առաջին գծում։ Նա շատ է գրել պատերազմի մասին։ Կարծում եմ, որ «Գեներալի քույրը» նրա լավագույն գործերից է։ Թերևս այդ միայն ինձ է թվում»[155]։

Ավագ լեյտենանտ Սերո Խանզադյանը 1944—1945 թվականներին 81-րդ հրաձգային կորպուսի 2-րդ հրաձգային դիվիզիայի 261-րդ հրաձգային գնդի շարքերում, որպես ականանետային վաշտի հրամանատար ակտիվորեն մասնակցել էր Մերձբալթիկայի ազատագրման և Քյոնիքսբերգի գրավման մարտերին, աչքի ընկել իր խիզախությամբ և պարգևատրվել Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով։ Մարտական պարգևը նրան անձամբ հանձնել էր ռազմաճակատի հրամանատարը։ Շքանշանը տալուց հետո գեներալը շնորհավորել էր սյունեցի քաջորդուն, ձեռքը հայրաբար դրել նրա ուսին և ասել. «Հայ ժողովրդի դահիճ կայզեր Վիլհելմի ամրոցը քարուքանդ արեցինք և դրանով իսկ վրեժ լուծեցինք 1915 թվականի հայկական կոտորածների համար, որ Թուրքիան իրագործեց կայզերական Գերմանիայի հովանավորությամբ»։ «Բաղրամյանը մեր պարծանքն է, հայ ժողովրդի ռազմական փառքի անընկճելի մարտական դրոշը։ Այդ հաղթական դրոշը կփողփողա առհավետ»,— նշել է անվանի գրողը[156]։

---

155 «Ավանգարդ», 1987, 2 դեկտեմբերի։

156 Այբերտ Գասպարյան, նշվ. աշխ., էջ 289, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, թիվ 1, էջ 15—16։

Հայ ժողովրդի մարտական փառք ու պարծանք զորավարին իրենց բանաստեղծություններն են ձոնել Նարիրի Զարյանը, Հովհաննես Շիրազը, գուսան Սերոբը և շատ ուրիշներ։ Շիրազի անտիպ գործերից մեկը «Դյուցազն Բաղրամյանին» պահվում է ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվում՝ մարշալ Բաղրամյանի ֆոնդում[157]։ Շիրազը մարշալին համեմատում է դյուցազնական Սասունցի Դավթի հետ, «Արարատ սարը» թագ համարում զորավարի համար և իր նվիրական հույսերը կապում նրա հետ։

Մեծ զորավարի մասին գրականության երախտավորների տված գնահատականը լրիվ չի լինի, եթե մեջ չբերենք ամերիկահայ աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանի հետևյալ խոսքերը. «Մենք, հայերս, ազատասեր, խաղաղ մարդիկ ենք։ Բայց մեր բազմադարյան պատմությունից գիտենք ոչ քիչ դեպքեր, երբ Հայրենիքը հայտնվել է վտանգի մեջ, մեր ժողովրդի զավակները զենք ու զրահ են կապել և դուրս եկել պաշտպանելու նրա պատիվն ու ազատությունը։ Դաժան ու ատելի ոսոխի դեմ մղած պայքարում ծնվել են խիզախ ու քաջարի զինվորներ, զորավարներ։ Այդպես եղել է հնում։ Այդպես եղավ և Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին։ Մեր ժողովրդի այդպիսի քաջարի զավակներից մեկն է Հովհաննես Բաղրամյանը։ Պատերազմի տարիներին նրա տարած հաղթանակներով ուրախանում էինք մենք՝ հեռավոր Ամերիկայի հայերս։ Նրա անունով հպարտանում էին ճակատագրի բերումով ամբողջ աշխարհով մեկ սփռված հայերը... Երբեք չեմ մոռանա իմ միակ հանդիպումը մարաջախտ[158] Բաղրամյանի հետ։ Ես նրան հենց այդպես էլ պատկերացնում էի՝ հզոր, առնական, իմաստուն և բարի։ Դա ինձ համար երջանիկ օր էր...»[159]։

---

157 ՀՄՊԿԱ, ֆ. Մարշալ Բաղրամյան, գ. 8, թթ. 27—29։

158 Մարաջախտ՝ մարշալ։

159 Ալբերտ Դասպարյան, նշվ. աշխ., էջ 303։

Բաղրամյանը հայ իրականության հետ կապված է եղել նաև բազմաթիվ այլ թելերով։ Չնայած ծառայության բերումով նրա խիստ զբաղված լինելուն, նա գիտագործնական կապեր էր հաստատել Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության հարցերով զբաղվող մասնագետների հետ։ Մասնավորապես բեղմնավոր էր մարշալի և ինստիտուտի բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Մնացականյանի համագործակցությունը։ Երբ 1975 թ. պրոֆեսոր Մնացականյանը հրատարակեց «Միասնական շարքերում» արժեքավոր մենագրությունը, գրքի առաջաբանը պատկանում էր զորավարի գրչին։ 1978 թ. լույս տեսավ ճանաչված պատմաբանի «Մարշալ Բաղրամյան» աշխատությունը, որը հայ իրականության մեջ առ այսօր մեծ զորահրամանատարի կյանքին ու գործունեությանը նվիրված լավագույն գրքերից մեկն է։

Մարշալի հետ բարեկամական սերտ կապեր էր հաստատել ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյանը, որը 1973 թ. հրատարակեց «Մարշալ Բաղրամյանը հայ ժողովրդի ազատագրական պատերազմի մասին» աշխատությունը, իսկ 1987-ին՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աբել Սիմոնյանի համահեղինակությամբ՝ «Մարշալ Բաղրամյան» գիտահանրամատչելի գրքույկը։ Տարբեր տարիների ընթացքում մամուլում լույս են տեսել ակադեմիկոսի տասնյակ հոդվածներ, որտեղ լուսաբանվել են զորավարի կյանքի էջերից մի քանիսը։

Բաղրամյանի հետ գիտագործնական լայն կապեր էր հաստատել նաև պատմության ինստիտուտի մեկ այլ աշխատակից, Արխիվային վարչության պետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, պահեստի գնդապետ Աշոտ Հարությունյանը։ Նրա համառ ջանքերով Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվում հավաքվեց մարշալ Բաղրամյանի կյանքն ու գործունեությունը լուսաբանող բազմաթիվ փաստաթղթեր, որը նրան էր տր-

բամադրել մարշալը, և ստեղծեց համապատասխան ֆոնդ։ Արխիվում կահավորվեց նաև զորավարի հիշատակին նվիրված սենյակ, որտեղ պահվում են մի քանի հարյուրի հասնող լուսանկարչական ալբոմներ, շնորհավորական ուղերձներ, զանազան հետաքրքիր վավերագրեր։

Մարշալ Բաղրամյանի մարտական գործունեությունը լուսաբանվել է նաև պատմաբաններ Երվանդ Խալեյանի, Մարատ Սահակյանի, տողերիս հեղինակի մի շարք աշխատություններում և հոդվածներում։

Բաղրամյանի մասին իրենց աշխատություններում զգալի տեղ են հատկացրել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիկտոր Մուրադյանը, որը հատկապես լուսաբանել է մարշալներ Ժուկովի և Բաղրամյանի անշահախնդիր ընկերության թեման, գեներալ-մայոր, խորհրդային Միության հերոս Աշոտ Ղազարյանը, մամուլում արժեքավոր հոդվածներ են հրատարակել անվանի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խիկար Բարսեղյանը, զլավլիտի նախկին պետ Գրիգոր Մարտիրոսյանը, պահեստի գնդապետներ Լևոն Ստեփանյանը, Հրանտ Հովհաննիսյանը, շնորհաշատ լրագրողներ Ալբերտ Գասպարյանը, Կիմ Ղալաչյանը, գրող Բենիկ Սեյրանյանը և ուրիշներ։ Երբ հարցազրույցներից մեկի ժամանակ Կիմ Ղալաչյանը հարցրել էր մարշալին, թե ամենից շատ նա ի՞նչն է ատում, զորավարը պատասխանել էր. «Ատում եմ ծուլությունը։ Ծույլ մարդկանց՝ շրջապատի նկատմամբ անտարբերությունը տանել չեմ կարող։ Անսահման ատում եմ դավաճանությունը՝ ընտանիքի, ընկերոջ, ժողովրդի և պետության հանդեպ»։ Իսկ ո՞վ է ձեր ամենասիրելի զորավարը հարցին, Բաղրամյանը պատասխանել է. «Մանկությունից սիրում էի Սուվորովին, իսկ Հայրենական մեծ պատերազմում ինձ համար շատ սիրելի էին երկու զորահրամանատարներ՝ Սովետական Միության մարշալներ Ժուկովը և Վասիլևսկին։ Նրանց հետ բախտ եմ ունեցել և՛ սովորել, և՛ երկար տարիներ

աշխատել։ Հատկապես Հայրենական մեծ պատերազմի տարիներին մեր նախկին ընկերությունը վերածվեց մի յուրօրինակ մտերմության։ Միասին հաճախ էինք հսկայական կարևորություն ունեցող հարցեր լուծում։ Պատահում էր, մինչև վճիռ ընդունելը «ընդհարվում» էինք, վիճում, ամենքս մերն ապացուցում։ Իսկ վճիռն ընդունվելուց հետո, որն արդեն դառնում էր օրենք, հրաման՝ բոլորիս համար, մոռանում էինք մանրուքները։ Ժուկովը և Վասիլևսկին երկուսն էլ մեր տաղանդավոր զորավարների համաստեղության ամենափայլուն աստղերից էին։ Նրանց բնորոշ էր մեծ մասշտաբի, պետական հսկայական նշանակության ռազմական բարդ պրոբլեմների լուծման, ռազմաքաղաքական իրադրության խոր վերլուծման ու գնահատման, թշնամուն քաջ ուսումնասիրելու և նրա թուլությունները հմտորեն օգտագործելու, հաղթանակի նկատմամբ ստորադրյալներին հավատ ու կամք ներարկելու առանձնահատուկ շնորհք, ճակատամարտ վարելու մեծ վարպետություն, անսահման նվիրվածություն հայրենիքին»[160]։ Բաղրամյանը երբեք չդավաճանեց իր ընկերներին՝ նրանց համար ամենածանր պահերին անգամ։ Հետպատերազմյան տարիներին, երբ սկզբում Ստալինի, ապա Խրուշչովի կողմից անարդարացի կերպով շնորհազրկվեց Ժուկովը, շատ ընկերներ երես թեքեցին ռուս մեծ զորավարից։ Բաղրամյանն այն եզակի բացառություններից էր, որ չդավաճանեց մարտական ընկերոջն ու բարեկամին և մշտապես նեցուկ եղավ նրան։ Բաղրամյանի մարդկային այդ վեհ հատկանիշները ժամանակին բարձր գնահատվեցին ոչ միայն Ժուկովի և նրա հարազատների կողմից, այլև ռուս մեծ զորավարի մահվանից երկու տասնամյակ անց Մոսկվայում 1996 թ. նոյեմբերի 19—20-ը անցկացված Ժուկովի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային ռազմագիտական նստաշրջանում, որի աշխատանքներին մասնակցել է նաև տողերիս հեղինակը։

---

160 Կիմ Վալաչյան, Տասնչորս որ մարշալ Բաղրամյանի հետ, էջ 74։

Մարշալ Բաղրամյանի կյանքի թելը կտրվեց 1982 թ. սեպտեմբերի 21-ին, Մոսկվայում։ Կառավարության որոշմամբ նրա թաղումը տեղի ունեցավ սեպտեմբերի 24-ին, Կարմիր հրապարակում, Կրեմլի պարսպի մոտ՝ իր մարտական ընկերների՝ մարշալներ Գ. Կ. Ժուկովի, Ա. Մ. Վասիլևսկու, Ա. Ի. Երյոմենկոյի և Կ. Կ. Ռոկոսովսկու հարևանությամբ։ Բաղրամյանի մահախոսականում, որի տակ ստորագրել էին կուսակցության, կառավարության և զինված ուժերի 60 ղեկավարներ, նշված էր. «Այն բոլոր պաշտոններում, որոնք վստահվում էր Հ. Ք. Բաղրամյանին, նա անշեղորեն դրսևորում էր բարձր պատասխանատվություն հանձնարարված գործի համար, ստեղծագործական նախաձեռնություն, զորապետի կազմակերպչական տաղանդ։ Նրա համար բնորոշ էին հսկայական աշխատունակությունը, խոր լրջախոհությունը, պահանջկոտությունն ու զգայուն վերաբերմունքը պաշտոնակիցների և ստորադրյալների նկատմամբ։ Իվան Քրիստափորովիչը վաստակել էր սովետական մարդկանց մեծ սերն ու հարգանքը... Նրա հիշատակը ընդմիշտ կպահպանվի բանակի ու նավատորմի ռազմիկների, սովետական բոլոր մարդկանց սրտերում»[161]։ Հարկ ենք համարում հիշեցնել, երբ Կարմիր հրապարակում տեղի էր ունենում անվանի զորավարի թաղման հանդիսավոր արարողությունը, նույն պահին այսպես կոչված «եղբայրական Ադրբեջանում», որտեղ ծնվել էր մարշալը, չտեսնված ցուցադրական տոնախմբություն էր, որին ականատես եղան միլիոնավոր մարդիկ հեռուստատեսությամբ։ Բաքվի փողոցները լիքն էին տոնական հագնված մարդկանցով, փողոցներում փռված էին գորգեր և բազմերանգ ծաղիկներ։ Այդ օրը Բաղրամյանի «հայրենակիցները» ողջունում էին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևին՝ Ադրբեջանում գտնվելու համար։ Մարշալի մահախոսականի տակ ստորագրած երկրի առաջին դեմքը այդ պահին ոչ թե հոտնկայս կամ գլխիկոր հարգում էր մեծ զորավարի հիշատակը, այլ մանկան հրճվանքով հիանում Ադբր-

---

161 «Սովետական Հայաստան», 1982, 23 սեպտեմբերի։

բեջանի կոմկուսի 1-ին քարտուղար Հեյդար Ալիևի նվիրած ադամանդե մատանիով։ Իսկ մահախոսականի տակ իր ստորագրությունը դրած Ադրբեջանի առաջին դեմքը, չթաքցնելով հրճվանքը, ներկանների բուռն ծափահարությունների և փողոցներում զուռնա-դհոլի նվագի տակ պարողների վայրենի ճիչերի ներքո գրկախառնվել էր Բրեժնևի հետ։ Այսպես էր «ինտերնացիոնալ» Ադրբեջանը սգում իր հայրենակցի մահը։ Մահախոսականի տակ ստորագրած մեկ ուրիշ առաջին դեմք՝ Կոմկուսի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ առաջին և վերջին պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովը մարշալի մահվանից ավելի քան 10 տարի անց, առանց աչքն իսկ թարթելու, հրամայեց զորքերին բռնի կերպով գաղթեցնել զորավարի հայրենի Ջարդախլու գյուղի բոլոր բնակիչներին։ Վերակառուցման «մեծ կոմբինատորը» այսպես էր վարձահատույց լինում հայրենիքին երկու մարշալ և բազմաթիվ բարձրաստիճան սպաներ ու զինվորներ պարգևած գյուղին...

Մարշալ Բաղրամյանի մահը մեծ կորուստ էր հայ ժողովրդի համար։ Ահա թե ինչու մեծ զորավարի հիշատակը հավերժացնելու նպատակով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1983 թ. մայիսի 6-ի հրամանագրով Հայաստանում կազմակերպվեց վարչական նոր շրջան, որին տրվեց Բաղրամյանի անունը։ Նույն օրը Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշմամբ մայրաքաղաքի կենտրոնական Բարեկամության փողոցը վերանվանվեց Բաղրամյան պողոտայի, իսկ մետրոպոլիտենի «Սարալանջ» կայարանը՝ «Մարշալ Բաղրամյան կայարանի»[162]։ 1984 թ. աշնանը Կերչի նավաշինարարներն ավարտեցին «Մարշալ Բաղրամյան» հեղուկանավի կառուցման աշխատանքները։ 64 հազար տոննա բեռնատարողությամբ նավը մշտական գրանցում ստացավ Նովորոսիյսկի ծովային նավադնացությունում։

Հայ ժողովրդի պանծալի զավակի հիշատակը հավերժացնելու նպատակով 1993 թ. նոյեմբերի 2-ին Երևանում

---

162 «Սովետական Հայաստան», 1984, 8 մայիսի։

ստեղծվեց «Մարշալ Բաղրամյան» հիմնադրամը՝ զորավարի եղբոր տղայի, գեներալ-մայոր Իլյա Ալեքսեյի Բաղրամյանի գլխավորությամբ։ Հիմնադրամի կարևոր խնդիրներից են նաև Երևանում մարշալի տուն-թանգարան ստեղծելը, մայրաքաղաքի համանուն պողոտայի վրա մարշալի հուշարձանի կառուցումը, երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության նպաստումը և այլն։ Գեներալ-մայոր Ի. Ա. Բաղրամյանի վաղաժամ մահից հետո հիմնադրամի աշխատանքները գլխավորում է գեներալ-մայոր Բաֆիկ Միքայելի Կարապետյանը։

Ի նշանավորումն Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի ծննդյան 100-ամյակի, որը լրանում է այս տարի՝ 1997 թ. դեկտեմբերի 2-ին, Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի՝ 1997 թ. մայիսի 8-ի հրամանագրով ստեղծվեց հոբելյանական տոնակատարության կազմակերպման պետական հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ։ Հանձնաժողովի կազմում ընդգրկվեց տասը մարդ, որոնց թվում՝ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆրունզե Սարգսյանը, Երևանի քաղաքապետ Վանո Սիրադեղյանը, գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը և ուրիշներ։ Սույն աշխատության հրատարակումը հոբելյանական միջոցառումներից մեկն է։

Մարշալ Հ. Խ. Բաղրամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներ են նախատեսվել նաև Ռուսաստանում։ Դրանցից առաջինը 1997 թ. օգոստոսի 30-ին Մոսկվայում Հայրենական մեծ պատերազմի պատմության կենտրոնական թանգարանում ականավոր զորահրամանատարի փառապանծ հոբելյանին նվիրված յուցահանդեսի բացումն էր, որին ներկա գտնվեց Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը։ Խորհրդանշական է, որ նա դրանից մեկ օր առաջ Ռուսաստանի Դաշնության նա-

խագահ Բ. Ն. Ելցինի հետ ստորագրել էր «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիրը, ինչպես նաև «Ռուս-հայկական համատեղ հռչակագիրը»[163]:

Ցուցահանդեսի բացման ժամանակ արտասանած իր ելույթում Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ասաց. «Իմ այցի ծրագիրը բավական հագեցած է տարբեր միջոցառումներով, բայց ես առանձնապես ուրախ եմ, որ պատիվ ունեմ մասնակցելու հայ և ռուս ժողովուրդների փառապանծ զավակ մարշալ Բաղրամյանի 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի բացմանը: Բաղրամյանի անունը չափազանց թանկ է յուրաքանչյուր հայի համար, նրան հիշում և պաշտում.են ինչպես Ռուսաստանում, այնպես էլ աշխարհի շատ երկրներում: Մեծ զորավար Բաղրամյանը անցավ զինվորական ծառայության բոլոր աստիճաններով՝ հասնելով մարշալի բարձր կոչմանը: Նա այն քչերից էր, որ պատերազմի տարիներին ռազմաճակատի հրամանատար էր: Անկոտրում կամք, արիություն և քաջություն, այս հատկությունները բնորոշ էին Բաղրամյանին: Եվ դա բնական է, եթե մենք հիշենք, որ նա ծնվել և մեծացել է Ղարաբաղում, մի երկիր, որը տվել է տաղանդավոր զորահրամանատարների մի ամբողջ համաստեղություն: Բաղրամյանը համարվում է մեր երկու ժողովուրդների ազգային հերոս, մի լեգենդ, որը հավերժ մնում է ժողովրդի հոգում: Բաղրամյանի կյանքը և գործը մարմնավորում են մեր երկու ազգերի իսկական մարտական ընկերության ոգին: Եվ բացելով այս ցուցահանդեսը, ես ուզում եմ իմ խորին երախտագիտությունը հայտնել Ձեզ՝ նշանավոր զորավարի և հայրենասերի հիշատակը վառ պահելու համար»[164]:

---

163 «Հայաստանի Հանրապետություն», 1997, 30 օգոստոսի:

164 «Հայ Զինվոր», 1997, 6—13 սեպտեմբերի, էջ 5:

Այնուհետև ելույթ ունեցավ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար, բանակի գեներալ Իգոր Սերգեևը. «Բաղրամյանի կյանքի ուղին հայրենիքին անմոռաց ծառայելու մի ցայտուն օրինակ է,— ասաց նա։— Առաջին աշխարհամարտի տարիներին կամավոր ընդունվելով ռուսական բանակի շարքերը, Բաղրամյանն իր ողջ կյանքը կապեց զինված ուժերի հետ, որոնց կազմում փառավոր ուղի անցավ՝ շարքայինից մինչև մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս։ Նա մարտնչում էր թուրք զավթիչների դեմ Կովկասյան ռազմաճակատում, և նաև նրա անձնական արիության շնորհիվ էր, որ թշնամիները չկարողացան ծնկի բերել Անդրկովկասի և Ռուսաստանի ժողովուրդներին։ Քաղաքացիական պատերազմից հետո, զբաղվելով հրամանատարական, դասախոսական և շտաբային աշխատանքով, Բաղրամյանը դրսևորեց իրեն որպես զինվորների դաստիարակման փայլուն և հմուտ մասնագետ։ Շատ թանկ է մեզ համար այն կարճ բնութագիրը, որը տվել է Բաղրամյանին Գեորգի Ժուկովը դեռ նախապատերազմական տարիներին. «Ես ճանաչում եմ Բաղրամյանին որպես չափազանց լրջախոհ, հանգիստ, աշխատասեր և կիրթ մարդու»։ Բաղրամյանի բոլոր այս հատկությունները վառ կերպով դրսևորվեցին Հայրենական մեծ պատերազմի թեժ տարիներին։ Նա դարձավ մեր հայրենիքի ամենանշանավոր զորավարներից մեկը։ Զբաղեցնելով բազմաթիվ պատասխանատու պաշտոններ՝ Հարավարևմտյան ռազմաճակատի շտաբի պետ, Հարավարևմտյան ուղղության զորքերի շտաբի պետ, 1-ին Մերձբալթյան և 3-րդ Բելոռուսական ռազմաճակատների զորքերի հրամանատար, Բաղրամյանը չափազանց մեծ եռանդ ներդրեց ֆաշիստական Գերմանիայի ջախջախման գործում։ Նրա անվան հետ են կապված մի շարք խոշորագույն գործողությունների պլանավորումն ու իրագործումը։ Դրանց թվում են Ռուսաստանի, Բելոռուսիայի, Մերձբալթիկայի ազատագրումը, ֆաշիստական զորքերի ջախջախիչ պարտությունը Արևելյան Պրուսիայում։ Կյանքի վերջին տարիներին, զբաղեցնելով ԽՍՀՄ Զինված ուժերում բազմա-

թիվ պատասխանատու պաշտոններ, Բաղրամյանն օգտագործում էր մարտի դաշտերում ստացած իր հարուստ փորձը։ Բացելով այս ցուցահանդեսը, մենք նաև հարգանքի տուրք ենք մատուցում հարյուր հազարավոր հայ զինվորներին, որոնք կռվում էին մեր ժողովրդի հետ ուս ուսի։ Հայրենական մեծ պատերազմի տարիները և հետագա իրադարձությունները մեկ անգամ ևս հաստատեցին, որ Հայաստանի և Ռուսաստանի բարեկամությունը վիթխարի ուժ է»[165]:

---

[165] Նույն տեղում։

ԿԼԻՄԵՆՏ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ

АРУТЮНЯН КЛИМЕНТ АМАСИЯЕВИЧ

МАРШАЛ БАГРАМЯН

Հրատ. խմբ. Ա. Լ. ՍԱՀԱԿՅԱՆ
Նկարիչ Հ. Ա. ՄԱՄՅԱՆ
Տեխ. խմբագիր Վ. Ջ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հանձնված է շարվածքի 19.08.1997 թ.։ Ստորագրված է տպագրության 22.09.1997 թ.։ Չափը 84×108¹/₃₂։ Թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական»։ Բարձր տպագրություն։ Տպագր. 8,5 մամուլ։ Տպաքանակ 500։ Պատվեր № 24։ Գինը՝ պայմանագրային։

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,
375919, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24գ.։
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
378410, ք. Աշտարակ, 2։

A II
85573